

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.**  
**ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ**

N<sup>o</sup> 26-27

2021

ԵՐԵՎԱՆ 2021

Գլխավոր խմբագիր՝ Արմեն ՓԱՇԱՅԱՆ  
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ տնօրենի պաշտոնակատար

Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն

Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն

Ալեքսան ԵՍԱՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ

Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի  
պետ

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ – ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի պետ

Լիլիթ ՍԱՖԱՐՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ


Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ

Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր  
մասնագետ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4  
Հեռ. (+374 10) 55-32-65  
E-mail: gtk2005@web.am  
www.atc.am

# ՎԵՐԼՈՒԾՈՒԻ - ԹՅՈՒՆ



---

Վերլուծությունը կատարել է ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժինը

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ  
գլխավոր մասնագետ

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ  
գլխավոր մասնագետ

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ  
առաջատար մասնագետ

## **2020 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վիճակագրական վերլուծություն**

### **ՆԱԽԱԲԱՆ**

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած սույն վերլուծությունը վերաբերում է 2020 թ. հուլիս ամսին անցկացված միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին: Այն նախատեսված է հանրակրթության ոլորտի մասնագետների և կրթության խնդիրներով հետաքրքրվող անհատների լայն շրջանակի համար:

2020 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների ամփոփիչ վերլուծությունն<sup>1</sup> ամեն տարի իրականացվում է մի քանի ուղղություններով:

---

<sup>1</sup> Վերլուծության մեջ ներառված չեն գուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները:

- Վերլուծվում են միասնական քննությունների ընդհանուր արդյունքները և համեմատվում նախորդ տարիների քննությունների արդյունքների հետ:
- Հետազոտվում են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքներն ըստ կառուցվածքի և որակական բնութագրիչների: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվում է առարկայական մասնագետներին:
- Վերլուծության են ենթարկվում միասնական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և դիմորդների սեռերի:
- Անդրադարձ է կատարվում բուհերի ընդունելության մրցույթին, ներկայացվում են ամենապահանջված մասնագիտությունների վերաբերյալ տեղեկություններ:
- Առանձին անդրադարձ է կատարվում միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին՝ սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերի կտրվածքով:
- Երևանի քաղաքապետին և մարզպետներին են տրամադրվում վիճակագրական տվյալներ միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերաբերյալ՝ տվյալ վարչատարածքային միավորի կտրվածքով:

Վերլուծության առաջին մասը վերաբերում է միասնական քննություններին, երկրորդը՝ բուհերի ընդունելության մրցույթին:

---

<sup>1</sup> Վերլուծության մեջ ներառված չեն գուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները:

# I. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. Ընդհանուր տեղեկություններ միասնական քննությունների վերաբերյալ

2020 թվականին, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունում բուհերի ընդունելության քննություններն անցկացվել են մեկ փուլով՝ հուլիս ամսվա առաջին տասնօրյակում<sup>2</sup>: Միասնական քննությունների ժամանակացույցը ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում (հավելված 1):

2020 թ. հուլիսի 2-8-ը ՀՀ տարածքում տեղաբաշխված 47 և Արցախի Հանրապետության (ԱՀ) 6 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել (հավելված 2) «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն), «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն», «Քիմիա», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու և հայ գրականություն», «Կենսաբանություն» և «Ֆիզիկա», առարկաներից, որոնց մասնակցելու համար հայտագրվել են Հայաստանի, Արցախի և արտերկրի 12807 դիմորդներ (ՀՀ-ում՝ 11976, Արցախում՝ 831): ՀՀ-ում հայտագրվածներից 12457-ը եղել են տեղացիներ, 164-ը՝ Ռուսաստանի, 86-ը՝ Վրաստանի, 71-ը՝ Արցախի, 29-ը՝ ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Բելառուսի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Հունաստանի, Մոլդովայի, Ղազախստանի և Իրաքի քաղաքացիներ:

Միասնական քննություններին մասնակցելու համար ՀՀ-ից, ՌԴ-ից, Վրաստանից, Արցախից հայտագրվել են 12068, իսկ այլ երկրներից՝ 25 դիմորդներ, որոնք եղել են 2020 թվականի շրջանավարտներ: Նախորդ տարիների շրջանավարտներից 2020 թվականին միասնական քննություն է հայտագրել 714-ը: Նրանցից 213-ը՝ հայտագրել են «Հայոց լեզու և հայ գրականություն», 148-ը՝ «Մաթեմատիկա» առարկաների միասնական քննություն:

<sup>2</sup> Տես՝ «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրի) կարգ»:

Նախորդ տարիների շրջանավարտներից ամենաավագը դպրոցն ավարտել է 1987 թվականին:

Բոլոր քննություններն անցկացվել են առարկայական «Շտեմարանների» առաջադրանքների հիման վրա կազմված թեստերի 4-ական տարբերակներով, հիմնական փուլում՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ: Թեստերի հեղինակներին հնարավորություն է տրվել որոշ առաջադրանքներում կատարելու բառերի կամ թվերի փոփոխություն և ներդնելու «Շտեմարանների» առաջադրանքների հիման վրա կազմված նոր առաջադրանքներ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն կամ իտալերեն լեզուներից որևէ մեկը:

Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի ընթացքը պարբերաբար լուսաբանվել է լրատվամիջոցներում (հավելված 3):

## **1.1 Դիմորդների մասնակցությունը 2020 թ. միասնական քննություններին**

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2020 թ. միասնական քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած, քննության մասնակցած, բացակայած և քննության անցկացման կարգը խախտելու պատճառով քննությունից հեռացված դիմորդների թվերը:

Միասնական քննություններից բացակայածների թիվը կազմել է հայտագրվածների թվի մինչև 3.6%-ը: Բոլոր քննությունների հանրագումարում բացակայել է դիմորդների 2.7%-ը, 5 դիմորդ քննության անցկացման կարգի խախտման պատճառով հեռացվել է քննությունից:

Աղյուսակ 1. Դիմորդների մասնակցությունը 2020 թ. միասնական քննություններին

Քննական առարկաները	Հայտագրվածների թիվը	Մասնակիցների թիվը	Բացակաների թիվը	Հեռացվածների թիվը
Մաթեմատիկա	5413	5220	191	2
Անգլերեն	1812	1773	39	
Հայոց լեզու և հայ	1749	1712	35	2
Հայոց պատմություն	1599	1570	28	1
Կենսաբանություն	1112	1078	34	
Քիմիա	349	341	8	
Աշխարհագրություն	286	282	4	
Ֆիզիկա	197	190	7	
Ռուսաց լեզու	171	169	2	
Գերմաներեն	57	57		
Ֆրանսերեն	54	52	2	
Իսպաներեն	5	5		
Իտալերեն	3	3		
<b>Ընդամենը</b>	<b>12807</b>	<b>12452</b>	<b>350</b>	<b>5</b>

## 1.2 Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թվերը ըստ տարիների


Դիագրամ 1-ում ըստ տարիների ներկայացված են 2008-2020 թթ. միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը:

Դիագրամից երևում է, որ հայտագրվածների թվի նվազման միտում եղել է՝ սկսած 2009 թվականից: Ընդհանուր նվազման ֆոնին 2014-2016 թվականներին այդ միտումն աստիճանաբար մեղմացել է: Տասներկուամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված՝ 2018 թ. հայտագրված դիմորդների թիվը 2017 և 2019 թվականների համեմատությամբ պակաս է եղել զրեթե կրկնակի: 2020 թ. միասնական քննություն հայտագրածների թիվը 2019-ի համեմատությամբ ավելացել է 1761-ով: Քննությունների



մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորներն ըստ տարիների ներկայացված են հավելված 5-ում:

**Դիագրամ 1. Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թվերը ըստ տարիների**



2011 թ. դիմորդների ընդհանուր թիվը մոտ յոթ անգամ պակաս է 2010 և 2012 թվականների դիմորդների թվից, քանի որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները, 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված, 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել:

## 2. Վիճակագրական տվյալներ 2020 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքների վերաբերյալ

### 2.1. Միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2020 թ. միասնական քննությունների մասնակիցների թվերը<sup>3</sup>, առավելագույն, նվազագույն և միջին<sup>4</sup> միավորները, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարած և 20 միավոր հավաքած դիմորդների թվերը և տոկոսները:

<sup>3</sup> Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

<sup>4</sup> Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

Աղյուսակ 2. 2020 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների		18-20 միավոր հավաքած դիմորդների	
			թիվը	տոկոս	թիվը	տոկ
Մաթեմատիկա	5220	10.9	1138	21.8	296	5.7
Անգլերեն	1773	14.7	133	7.5	526	29.7
Հայոց լեզու և հայ գրականություն	1712	10.7	445	26.0	117	6.8
Հայոց պատմություն	1570	12.0	458	29.2	383	24.4
Կենսաբանություն	1078	13.1	228	21.2	301	27.9
Քիմիա	341	16.2	27	7.9	202	59.2
Աշխարհագրություն	282	12.4	52	18.4	36	12.8
Ֆիզիկա	190	11.6	51	26.8	30	15.8
Ռուսաց լեզու	169	12.3	25	14.8	17	10.1
Գերմաներեն	57	15.5	2	3.5	19	33.3
Ֆրանսերեն	52	15.7	1	1.9	18	34.6
Իսպաներեն	5	14.1			1	20.0
Իտալերեն	3	14.5			1	33.3
Ընդամենը	12452		2560	20.6	1947	15.6

Աղյուսակ 3. 2020 թ. դրական լուծում ստացած բողոք-դիմումների քանակը

Քննական առարկաները	Բողոք-դիմումների քանակը
Մաթեմատիկա	32
Կենսաբանություն	14
Անգլերեն	7
Հայոց պատմություն	7
Քիմիա	5
Հայոց լ. և հայ գրականություն	4
Ֆիզիկա	1
Աշխարհագրություն	1
Ընդամենը	71

## **2.2. Միասնական քննությունների արդյունքների բողոքարկումը<sup>5</sup>**

Աղյուսակ 3-ում ներկայացված է 2020 թ. միասնական քննությունների արդյունքների բողոքարկման դիմումներից դրական լուծում ստացածների քանակը, որից հետևում է, որ 2020 թ. դրական լուծում ստացած 71 բողոք-դիմումներից 32-ը եղել է մաթեմատիկայից:

### **3. 2020 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի, հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և ըստ դիմորդների սեռերի**

#### **3.1. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և միասնական քննություններին այլ երկրներից մասնակցածների**

Աղյուսակ 4-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային միավորներից, ինչպես նաև այլ երկրներից 2020 թ. միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները: Աղյուսակում գունավորած են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները: Մզացված շրջանակներում ներկայացված են վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները: Բացարձակ ամենաբարձր ցուցանիշները սև ֆոնի վրա ներկայացված են սպիտակ թվերով: Եթե տվյալ վարչատարածքային միավորից քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

<sup>5</sup> Համաձայն ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի, 2020 թ. միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդին հնարավորություն է տրվել արդյունքների հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում առցանց եղանակով բողոքարկելու քննության արդյունքը: Բողոք-դիմումները ԳԹԿ-ում ներկայացվել են բողոքարկման հանձնաժողովին: Քննության արդյունքի փոփոխության վերաբերյալ դրական լուծում ստացած բողոք-դիմումների և բողոքարկման հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության հիման վրա միասնական քննությունների էլեկտրոնային բազայում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Աղյուսակ 4. ՀՀ վարչատարածքային միավորներից միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները\*

մանրամասնացված դիմորդներ	Երևան		Արարատ		Արմավիր		Գեղարքունիք		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց ձոր		Տավուշ	
	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ	միավորներ
Մարտի-սեպտեմբեր	1839	11.1	203	10.9	332	10.5	277	10.7	364	10.7	417	11.5	385	11.2	303	10.9	105	9.6	241	10.8
Անգոստոս	604	14.1	75	14.1	121	14.1	91	15.2	129	15.1	147	15.0	133	15.4	105	15.4	27	15.0	73	15.6
Հարց լեզու և հայ գրասենյակ	355	9.8	89	11.6	142	10.3	123	11.8	156	11.0	144	11.5	146	10.4	87	11.5	27	11.9	139	11.4
Հարց պատմություն	534	12.7	51	11.6	95	11.5	99	10.8	129	11.0	109	13.2	128	12.5	73	12.7	29	13.8	74	12.1
Կենսագրություն	430	13.2	27	12.6	80	13.2	64	14.3	54	12.6	76	14.3	84	14.1	41	13.2	22	12.0	46	11.5
Քիմիա	112	16.6	9	16.3	16	13.7	19	16.2	41	13.8	28	16.7	23	16.0	27	17.2	2	20.0	8	19.0
Աշխարհագրություն	70	11.3	9	12.8	18	13.6	32	11.9	30	13.9	21	12.3	27	12.4	10	17.0	7	11.6	12	13.4
Ֆիզիկա	83	12.3	5	6.9	8	9.6	6	9.6	13	14.8	15	13.0	12	11.5	6	11.2	3	12.7	2	10.0
Ռուսաց լեզու	27	11.9	5	8.4	10	12.6	7	14.1	25	11.7	12	11.7	16	12.6	13	14.5	3	14.5	14	12.7
Չեզոքություն	19	14.1	1	15.25	8	14.5	3	19.1	5	17.5			8	17.1	1	19.0*	3	17.5	2	18.8
Ֆրանսերեն	21	15.3	2	15.3							9	15.3	10	15.1	2	17.3			4	18.0
Իտալերեն	4	14.1																		
Իսպաներեն	1	9.25							2	17.1										
Ընդամենը	4099		476		857		721		948		978		972		668		728		615	

Աղյուսակ 4-ից երևում է, որ միասնական քննություններից ըստ ՀՀ վարչատարածքային միավորների արձանագրված վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները դիտարկվել են առավելապես Երևանում:

Մասնակիցների փոքր թվով պայմանավորված՝ դիտարկված ամենաբարձր ցուցանիշների մի մասը վիճակագրորեն նշանակալի չի եղել: Այնուհանդերձ, բացարձակ ամենաբարձր միջին միավորներով ամենահարուստը 2020 թ. եղել է Վայոց ձորի մարզը:

Աղյուսակ 5-ում ներկայացված են 2020 թ. միասնական քննություններին ՀՀ և այլ երկրների քաղաքացիություն ունեցող մասնակից դիմորդների թվերը և միջին միավորները:

Աղյուսակ 5-ում տեսնում ենք, որ բոլոր քննություններից վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն ունեցել են Հայաստանի, իսկ բացարձակ ամենաբարձր՝ Ռուսաստանի (մաթեմատիկայից, հայոց պատմությունից, ֆիզիկայից և ռուսաց լեզվից), Արցախի (քիմիայից) և Վրաստանի (հայոց լեզվից և հայ գրականությունից) քաղաքացիություն ունեցող դիմորդները:

Աղյուսակ 5. ՀՀ և այլ երկրների քաղաքացիություն ունեցող դիմորդների թվերը և միջին միավորները\*

Քննական առարկաները	Մաքևտարիքս	Անգերեն	Հարց լեզու և իայ գրախոսություն	Հարցույտություն	Կենտրոնություն	Քիմիա	Աշխարհագրություն	Ֆիզիկս	Մուսց լեզու	Գերմաներեն	Ֆրաներեն	Իսպաներեն	Լոտարեն	Լոտարենը
<b>Մասնակցների ընդհանուր թիվը</b>	5220	1773	1712	1570	1078	341	282	190	169	57	52	5	3	12452
<b>Ընդհանուր միջին միավորը</b>	10.9	14.7	10.7	12.0	13.1	16.2	12.4	11.6	12.3	15.5	15.7	14.1	14.5	
<b>ՀՀ</b>	4813	1644	1560	1409	978	306	262	161	145	57	50	4	3	11392
Միջին միավորը	11.0	14.7	10.9	12.4	13.3	16.3	12.5	12.5	12.4	15.5	15.5	14.1	14.5	
Մասնակցների թիվը	300	98	142	142	63	22	16	26	18		2			829
Միջին միավորը	9.5	15.3	9.2	8.2	11.4	17.1	9.8	7.7	11.4		16.0			
<b>Ռուսաստան</b>	77	16	3	14	22	7	3	3	4			1		150
Միջին միավորը	11.6	13.8	9.0	13.0	11.2	14.9	9.6	16.8	13.7			14.25*		
Մասնակցների թիվը	20	8	3	4	15	5			2					57
Միջին միավորը	9.3	9.0	12.3	6.6	8.3	12.0			7.3					
<b>Միջին</b>	1	2	1											4
Միջին միավորը	14.5*	6.8	4.25*											
Մասնակցների թիվը	1	2		1										4
Միջին միավորը	7.75*	13.5		13.5*										



### 3.2. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 6-ում ներկայացված են 2020 թ. միասնական քննությունների միջին միավորներն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր), ինչպես նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները:

Քաղաքային բնակավայրերն ըստ բնակչության թվի տարբերակվել են խոշոր, միջին և փոքր քաղաքների: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Աղյուսակի՝ խոշոր քաղաքներին վերաբերող մասը պարունակում է և՛ երեք խոշոր քաղաքների (Երևանի, Գյումրու և Վանաձորի) դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Գյուղական բնակավայրերի ցուցանիշները ներկայացվել են ընդհանուր հաշվարկով, ինչպես նաև՝ սահմանամերձ<sup>6</sup>, բարձր լեռնային և բարձր լեռնային սահմանամերձ գյուղերի համար առանձին-առանձին:

Սյունակների մզացված վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշները, իսկ մզացված շրջանակների մեջ առնված ցուցանիշները ցույց են տալիս տվյալ առարկայի՝ վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորը: Միջին ֆոնի վրա ներկայացված են սպիտակ թվերով:

Աղյուսակ 6-ից երևում է, որ բարձր են եղել հատկապես միջին և փոքր քաղաքների դիմորդների հավաքած միջին միավորները: Սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերի դիմորդների միջին միավորները մեծամասամբ բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորից, սակայն հիմնականում եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի:

<sup>6</sup> **Սահմանամերձ բնակավայրերի** ցանկը 2017 թ. միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներում թարմացվել է համաձայն «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների:





Ընդհանուր առմամբ, խոշոր քաղաքների դիմորդների միջին միավորը վիճակագրորեն բարձր է եղել ֆիզիկայից, միջին և փոքր քաղաքներինը՝ անգլերենից, կենսաբանությունից, քիմիայից և ոռոսաց լեզվից, գյուղերինը՝ հայոց լեզվից և հայ գրականությունից, աշխարհագրությունից, ֆրանսերենից և գերմաներենից:

Հետագուովել են սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից միասնական քննություններին 1-ից ավելի մասնակիցներ ունեցած և միջինում 18-20 միավորներ արձանագրած դպրոցների արդյունքները (աղյուսակ 7 և աղյուսակ 8):

**Աղյուսակ 7. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած սահմանամերձ գյուղերի դպրոցները**

Վարչատարածքային միավորը	Ոսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
<b>Անգլերեն</b>				
Արարատ	Արմաշի միջնակարգ դպրոց	18	2	18.8
Տավուշ	Բերդավանի միջնակարգ դպրոց	30	3	18.2
	Այգեհովտի միջնակարգ դպրոց	29	3	18.1
<b>Հայոց պատմություն</b>				
Արարատ	Արմաշի միջնակարգ դպրոց	18	2	19.0
<b>Քիմիա</b>				
Սյունիք	Ագարակի միջնակարգ դպրոց	46	3	19.7

**Աղյուսակ 8. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած բարձր լեռնային գյուղերի դպրոցները**

Վարչատարածքային միավորը	Ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
<b>Անգլերեն</b>				
<b>Գեղարքունիք</b>	Ծովինարի միջնակարգ դպրոց	34	2	18.6
<b>Արագածոտն</b>	Եղիպատրուշի միջնակարգ դպրոց	6	2	18.3
<b>Հայոց պատմություն</b>				
<b>Գեղարքունիք</b>	Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց	12	2	18.8

**3.3. Միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Աղյուսակ 9-ում ներկայացված են միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն): Աղյուսակում մզացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները, իսկ մզացված շրջանակներում ներկայացած են վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները: Միջին միավորների բացարձակ ամենաբարձր ցուցանիշները սև ֆոնի վրա ներկայացված են սպիտակ թվերով: Եթե ուսումնական հաստատության տվյալ տիպից քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 9. Միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի\*

Ֆննսական առարկաները	Մասնակցները	Մասնակցները	Միավոր մասնակցի	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթահամալիրներ		Այլ ուսումն. հաստատություններ	
				Վերաբերված	Միավոր	Վերաբերված	Միավոր	Վերաբերված	Միավոր	Վերաբերված	Միավոր	Վերաբերված	Միավոր
Մաթեմատիկա	5220	10.9	2037	11.1	1516	10.8	762	12.7	33	13.2	463	8.1	
Անգլերեն	1773	14.7	847	15.1	502	14.5	118	14.9	5	17.8	172	13.1	
Հայոց լեզու և հայ գրականություն	1712	10.7	720	12.9	716	11.4	100	11.1	8	10.5	88	8.8	
Հայոց պատմություն	1570	12.0	648	10.7	458	12.0	109	12.9	15	13.9	107	9.6	
Կենսաբանություն	1078	13.1	507	14.1	232	12.2	64	14.9	9	17.1	166	11.3	
Քիմիա	341	16.2	183	16.6	64	16.4	35	15.3	4	18.6	20	14.0	
Աշխարհագրություն	282	12.4	105	12.3	121	12.8	13	13.9	1	8.0*	22	11.5	
Ֆիզիկա	190	11.6	77	11.5	26	11.1	42	15.2	3	16.5	13	6.1	
Ռուսաց լեզու	169	12.3	60	13.4	56	11.7	7	10.6			22	12.2	
Գերմաներեն	57	15.5	21	15.2	28	15.6	1	19.75*			7	15.1	
Ֆրանսերեն	52	15.7	26	14.6	13	16.9	5	17.0			6	15.5	
Իսպաներեն	5	14.1	2	17.9							2	10.4	
Իտալերեն	3	14.5			2	17.1					1	9.25*	
<b>Ընդամենը</b>	<b>12452</b>		<b>5233</b>		<b>3734</b>		<b>1256</b>		<b>78</b>		<b>1089</b>		

\*- Եթե քննությունը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

**Աղյուսակ 10. Միասնական քննություններից միավորների 18-20 միջակայքում միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները**

<b>Ուսումնական հաստատությունները</b>	
<b>Կրթահամալիր</b>	«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր
<b>Վարժարաններ</b>	Գյումրու տնտեսագիտական վարժարան
	Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց
	Վանաձորի մաթ. և բնագ. առարկաների խոր. ուսուց. հատուկ դպրոց
	«Քվանտ» վարժարան
	«Ֆոտոն» վարժարան
	«Շ. Շահամիրյան» վարժարան
<b>Ավագ դպրոցներ</b>	Աբովյանի թիվ 1 ավագ դպրոց
	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց
	Արտաշատի ավագ դպրոց
	Բերդի ավագ դպրոց
	Բյուրեղավանի ավագ դպրոց
	Գյումրու թիվ 37 ավագ դպրոց
	Գորիսի թիվ 1 ավագ դպրոց
	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց
	Եղեգնաձորի ավագ դպրոց
	ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց
	Թալինի ավագ դպրոց
	Երևանի թիվ 114 ավագ դպրոց
	Երևանի թիվ 184 ավագ դպրոց
	Երևանի թիվ 2 ավագ դպրոց
	Ճամբարակի ավագ դպրոց
	Մարտունու ավագ դպրոց
	Նոր Հաճնի ավագ դպրոց
	Չարենցավանի ավագ դպրոց
	Վաղարշապատի թիվ 10 ավագ դպրոց
	Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց
Վանաձորի թիվ 17 ավագ դպրոց	
Վեդու թիվ 3 ավագ դպրոց	

Հետևելով հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների միասնական քննությունների միջին միավորներին՝ աղյուսակ 9-ում նկատում ենք, որ ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներով առանձնացել են հատկապես միջնակարգ դպրոցները, բարձր ցուցանիշներով՝ կրթահամալիրները, վարժարանները և ավագ դպրոցները: Վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներով աչքի են ընկել ավագ դպրոցները և վարժարանները: Կրթահամալիրների ցուցանիշները մեծ մասամբ եղել են բացարձակ ամենաբարձրերը:

Աղյուսակ 10-ում ներկայացված են միասնական քննությունների ընդհանուր միջին միավորները 1-ից մինչև 7.8 միավորով գերազանցող միջին ցուցանիշներ արձանագրած ուսումնական հաստատությունները, որոնցից պետականների միջին միավորները բարձր են եղել հատկապես ֆիզիկայից և մաթեմատիկայից, ոչ պետականներինը՝ հայոց պատմությունից և անգլերենից:

Աղյուսակ 11-ում ներկայացված են միասնական քննություններին 1-ից ավելի մասնակից ունեցած և 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները:

Աղյուսակ 11. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանավորների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
<b>Հայոց պատմություն</b>				
Երևան	«Ուսմունք» հայ-ռուսական համալսարանի վարժարան	17	2	19.5
Լոռի	Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց	34	3	19.5
Շիրակ	Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց	16	2	19.4
Արարատ	Դեղձուտի միջնակարգ դպրոց	13	2	19.4
Երևան	«Էլիտա» հեղինակային միջնակարգ դպրոց	8	2	19.3
Արագածոտն	Թալինի ավագ դպրոց	44	2	19.3
Արմավիր	Մրգաշատի թիվ 1 միջն. դպրոց	17	2	19.3
Արարատ	Նոր Խարբերդի թիվ 1 միջն. դպրոց	34	2	19.3
Շիրակ	Գյումրու թիվ 37 ավագ դպրոց	60	4	19.0
Արարատ	Արմաշի միջնակարգ դպրոց	18	2	19.0
Արմավիր	Մրգաշատի թիվ 2 միջն. դպրոց	25	2	19.0
Գեղարքունիք	Սարուխանի թիվ 1 միջն. դպրոց	12	2	18.8
Երևան	«Ուսում» հանրակրթական դպրոց	19	2	18.5
Արարատ	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	32	2	18.3
Կոտայք	Զարենգավանի ավագ դպրոց	127	12	18.1
<b>Քիմիա</b>				
Երևան	Երևանի թիվ 182 ավագ դպրոց	104	2	20.0
Արարատ	Մխչյանի միջնակարգ դպրոց	41	2	20.0
Վայոց ձոր	Եղեգնաձորի ավագ դպրոց	70	2	20.0
Կոտայք	Բյուրեղավանի ավագ դպրոց	50	3	19.8
Լոռի	Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտ. <u>առարկանների</u> խոր. ուս. հաստով դպրոց	33	3	19.8

Երևան	«Քվանտ» վարժարան	80	3	19.7
Երևան	«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր	81	3	19.7
Սյունիք	Ագարակի միջնակարգ դպրոց	46	3	19.7
Արարատ	Մասիսի միջնակարգ դպրոց	23	2	19.5
Գեղարքունիք	Մարտունու ավագ դպրոց	69	4	19.4
Սյունիք	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց	93	5	19.3
Երևան	Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	118	3	19.3
Լոռի	Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց	122	4	19.1
Երևան	Երևանի թիվ 2 ավագ դպրոց	120	2	19.1
Տավուշ	Հաղարծինի միջնակարգ դպրոց	42	2	19.1
Արարատ	Արտաշատի ավագ դպրոց	87	3	18.9
Արմավիր	Վաղարշապատի թիվ 10 ավագ դպրոց	81	2	18.9
Կոտայք	Նոր Հաճնի ավագ դպրոց	48	2	18.9
Արարատ	Վեդու թիվ 3 ավագ դպրոց	60	2	18.5
Երևան	ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	244	27	18.4
Երևան	ՃՀՀԱՀ հիմնադրամի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց	269	2	18.3
Արմավիր	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	45	2	18.3
Երևան	Երևանի թիվ 114 ավագ դպրոց	126	4	18.2
<b>Մաթեմատիկա</b>				
Արագածոտն	Թաթուլի միջնակարգ դպրոց	6	2	18.8
<i>18-20 միջակայքում միջին միավորներ չեն արձանագրվել ֆիզիկայից, ռուսաց լեզվից, ֆրանսերենից, իսպաներենից և իտալերենից:</i>				



Վարչա-տարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանակարգների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
<b>Հայոց լեզու և հայ գրականություն</b>				
<b>Երևան</b>	Երևանի թիվ 87 միջնակարգ դպրոց	43	2	19.1
<b>Շիրակ</b>	«Տոտոն» վարժարան	100	3	18.7
<b>Սյունիք</b>	Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց	28	3	18.5
<b>Անգլերեն</b>				
<b>Երևան</b>	«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր	81	2	19.5
<b>Արմավիր</b>	Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց	12	2	19.4
<b>Լոռի</b>	Վանաձորի թիվ 17 ավագ դպրոց	44	2	19.3
<b>Տավուշ</b>	Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոց	13	2	19.1
<b>Լոռի</b>	Շահումյանի միջնակարգ դպրոց	17	2	18.5
<b>Արարատ</b>	Արմաշի միջնակարգ դպրոց	18	2	18.8
<b>Գեղարքունիք</b>	Սևանի թիվ 6 միջնակարգ դպրոց	13	3	18.8
<b>Գեղարքունիք</b>	Ծովինարի միջնակարգ դպրոց	34	2	18.6
<b>Արագածոտն</b>	Օշականի միջնակարգ դպրոց	29	2	18.5
<b>Արարատ</b>	Նորամարզի միջնակարգ դպրոց	15	2	18.4
<b>Արարատ</b>	Վանաշենի միջնակարգ դպրոց	30	4	18.3
<b>Արագածոտն</b>	Եղիպատրուշի միջնակարգ դպրոց	6	2	18.3
<b>Սյունիք</b>	Գորիսի թիվ 1 ավագ դպրոց	76	2	18.3
<b>Արարատ</b>	Փոքր Վեդու միջնակարգ դպրոց	19	2	18.3
<b>Տավուշ</b>	Բերդավանի միջնակարգ դպրոց	30	3	18.1
<b>Տավուշ</b>	Այգեհովտի միջնակարգ դպրոց	29	3	18.1
<b>Երևան</b>	Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոց	27	7	18.1

<b>Լոռի</b>	Լեռնասպատի միջնակարգ դպրոց	18	2	18.0
<b>Արարատ</b>	Այգավանի միջնակարգ դպրոց	8	2	18.0
<b>Տավուշ</b>	Բերդի ավագ դպրոց	46	5	18.0
<b>Կենսաբանություն</b>				
<b>Կոտայք</b>	Մեղրաձորի միջնակարգ դպրոց	28	3	19.4
<b>Կոտայք</b>	Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց	92	7	19.2
<b>Կոտայք</b>	Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	58	3	19.1
<b>Կոտայք</b>	Քաղսիի միջնակարգ դպրոց	19	2	19.0
<b>Երևան</b>	«Շ. Շահամիրյան» վարժարան	5	2	19.0
<b>Արմավիր</b>	Թախրովի միջնակարգ դպրոց	22	2	19.0
<b>Երևան</b>	Երևանի թիվ 184 ավագ դպրոց	138	10	18.6
<b>Գեղարքունիք</b>	Լճաշենի միջնակարգ դպրոց	28	3	18.6
<b>Կոտայք</b>	Աբովյանի թիվ 1 ավագ դպրոց	113	2	18.3
<b>Երևան</b>	«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր	81	5	18.0
<b>Աշխարհագրություն</b>				
<b>Շիրակ</b>	Կամոյի միջնակարգ դպրոց	6	3	18.9
<b>Շիրակ</b>	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց	75	3	18.3
<b>Լոռի</b>	Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց	34	3	18.3
<b>Շիրակ</b>	«Ֆոտոն» վարժարան	100	2	18.0
<b>Գերմաներեն</b>				
<b>Գեղարքունիք</b>	Ճամբարակի ավագ դպրոց	59	2	20.0


### 3.4. Միջին միավորները ըստ դիմորդների սեռային կազմի

2020 թվականի միասնական քննություններին մասնակցել է իգական սեռի 7080 (56.9 %) և արական սեռի 5372 (43.1%) դիմորդ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020 թվականի շրջանավարտները կազմել են 2020 թ. միասնական քննությունների մասնակիցների 94.8 տոկոսը (6689 աղջիկ և 5114 տղա):

2020 թ. և նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների սեռային կազմը դիագրամ 2-ում ներկայացված է տոկոսներով: Բուհերում հայտագրված արական սեռի դիմորդներից ամենատարեցները՝ 13 հոգի, եղել են 2000-2009 թվականների շրջանավարտներ, իսկ իգական սեռի դիմորդներից 9-ը՝ 1987-1999 թվականների:

Աղյուսակ 12-ում ըստ դիմորդների սեռերի ներկայացված են միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Սգացված են յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները, իսկ սգացված շրջանակով ներկայացված են ամենաբարձր միջին միավորերն ըստ առարկաների:

Դիագրամ 2. Դիմորդների սեռային կազմը ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտելու տարեթվի



Աղյուսակ 12. 2020 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ դիստրիկտների\*

Ֆնանսական առարկաները	Մասնակիցների ընդհանուր թիվը	Շտրհանույր միջին միավորը	Իզական սեռ		Արական սեռ	
			մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը
Մաթեմատիկա	5220	10.9	1801	12.1	3419	10.3
Անգլերեն	1773	14.7	1589	14.9	184	12.8
Հայոց լ. և հայ գրականություն	1712	10.7	1538	11.1	174	7.6
Հայոց պատմություն	1570	12.0	832	13.3	738	10.4
Կենսաբանություն	1078	13.1	661	13.9	417	11.7
Քիմիա	341	16.2	203	16.3	138	16.2
Աշխարհագրություն	282	12.4	166	13.3	116	11.0
Ֆիզիկա	190	11.6	33	12.1	157	11.4
Ռուսաց լեզու	169	12.3	147	12.8	22	8.8
Գեղաներևն	57	15.5	52	15.7	5	13.0
Ֆրանսերեն	52	15.7	48	15.9	4	11.7
Իսպաներեն	5	14.1	5	14.1		
Իտալերեն	3	14.5	3	14.5		
<b>Ընդամենը</b>	<b>12452</b>		<b>7078</b>		<b>5374</b>	

\* - Եթե քննությանը մասնակցել է 1 դիստրիկտ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Ինչպես երևում է աղյուսակ 12-ում, աղջիկների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին և տղաների հավաքած միջին միավորներից: Իգական և արական սեռի դիմորդների ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են քիմիայից (համապատասխանաբար՝ 16.3 և 16.2), ամենացածրը՝ հայոց լեզվու և հայ գրականությունից (համապատասխանաբար՝ 11.1 և 7.6): Իսպաներենի և իտալերենի քննություններին մասնակցել են միայն աղջիկները:

## **4. Թեստեր և թեստային առաջադրանքներ**

2020 թ. միասնական քննությունների թեստերը կազմվել են առարկայական «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիման վրա կազմված նոր առաջադրանքներից:

Թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից (հավելված 4):

### **4.1. Միասնական քննությունների թեստերի բարդությունը և հուսալիությունը**

Աղյուսակ 13-ում ներկայացված են թեստերի բարդության և հուսալիության գործակիցները: Մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով ֆրանսերենի, գերմաներենի, իսպաներենի, իտալերենի թեստերը վերլուծության չեն ենթարկվել, քանի որ սակավաթիվ մասնակիցների դեպքում որակական բնութագրիչները հավաստի չեն համարվում:

Աղյուսակ 13. 2020 թ. միասնական քննությունների թեստերի բարդությունը<sup>7</sup> և հուսալիությունը<sup>8</sup>

Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը
<b>Հայոց լեզու և հայ գրականություն</b>	1	434	10.2	0.54	0.953
	2	429	10.9	0.57	0.946
	3	424	10.9	0.57	0.959
	4	425	10.9	0.57	0.945
<b>Հայոց պատմություն</b>	1	398	12.2	0.64	0.971
	2	394	11.9	0.62	0.975
	3	392	11.9	0.63	0.975
	4	386	11.9	0.63	0.976
<b>Անգլերեն</b>	1	448	15.0	0.75	0.964
	2	436	14.6	0.73	0.963
	3	445	14.7	0.73	0.962
	4	444	14.3	0.71	0.966
<b>Ռուսաց լեզու</b>	1	44	12.2	0.61	0.954
	2	42	12.8	0.64	0.946
	3	41	12.1	0.61	0.959
	4	42	12.0	0.60	0.561
<b>Աշխարհագրություն</b>	1	69	12.2	0.63	0.953
	2	73	12.1	0.63	0.956
	3	69	13.0	0.67	0.942
	4	71	12.2	0.63	0.968

<sup>7</sup> **Բարդություն:** Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: 0.75≤P≤0.89 սահմաններում թեստը հեշտ է, 0.30≤P≤0.74 սահմաններում՝ միջին բարդության, 0.20≤P≤0.29 սահմաններում՝ բարդ, P≤0.19 դեպքում՝ շատ բարդ:

<sup>8</sup> **Հուսալիություն:** Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Քննական առարկան	Թեևսի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարության գործակիցը	Հուսալիության գործակիցը
<b>Մաթեմատիկա</b>	1	1324	11.2	0.61	0.958
	2	1310	11.0	0.60	0.952
	3	13.8	10.6	0.59	0.956
	4	1278	10.8	0.59	0.960
<b>Կենսաբանություն</b>	1	272	13.4	0.69	0.971
	2	272	13.3	0.69	0.974
	3	271	13.0	0.67	0.970
	4	263	12.4	0.64	0.973
<b>Քիմիա</b>	1	93	15.9	0.81	0.979
	2	80	15.3	0.78	0.977
	3	84	17.0	0.86	0.971
	4	84	16.7	0.84	0.975
<b>Ֆիզիկա</b>	1	47	12.0	0.62	0.972
	2	44	11.0	0.57	0.974
	3	50	11.3	0.59	0.973
	4	49	11.9	0.62	0.971

## II. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

### 5. Ընդհանուր տեղեկություններ բուհերի ընդունելության մրցույթի վերաբերյալ

2020 թվականին ՀՀ բուհերի ընդունելության<sup>9</sup> համար կառավարության N 797-Ն որոշմամբ<sup>10</sup> նախատեսված է եղել 21200 տեղ, որից 2926-ը՝ անվճար հիմունքներով ուսուցման համար:

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհերում հայտագրվել է 11967 դիմորդ, որոնցից ընդունվել է 9186-ը (76.8%):

Միասնական քննություններին մասնակցելու համար հայտագրվածների թիվը (12807) բուհերում հայտագրվածների թվից մեծ է, որովհետև նրանց մի մասը դիմել են բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված այլ բուհեր կամ նպատակ են ունեցել միասնական քննության արդյունքով որևէ բուհի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու:

Մրցույթի հիմնական փուլում, որն ամփոփվել է հուլիսի 18-ին, հայտագրված 11967 դիմորդներից ընդունվել են 8706-ը (72.8%), որոնցից ուսուցման անվճար հիմունքներով՝ 1398-ը (առաջին փուլում ընդունվածների 16.1%-ը), վճարովի հիմունքներով՝ 7308-ը (83.9%):

<sup>9</sup> Բուհերի ընդունելության մրցույթն անցկացվում է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մրցույթին չեն մասնակցում զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերի դիմորդները: Բացառություն են կազմում միայն ներբուհական քննություններ պահանջող մասնագիտություններով ՀԱՊՀ-ում և ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղում, ՀՊՄՀ-ում, ՃՇՀԱՀ-ում, ՇՊՀ-ում, Վանաձորի պետական համալսարանում և ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում հայտագրված դիմորդները, որոնք հայտագրվել են նաև միասնական քննություններին մասնակցելու համար:

<sup>10</sup> 2020-2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ընդհանուր բաշխումը:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142699>



Ուսուցման անվճար հիմունքներով ընդունված 1398 դիմորդներից 57-ն ընդունվել են արտոնություններով, այդ թվում՝ բանակից զորացրված դիմորդներից 25-ը:

Բանակից զորացրվածների համար նախատեսված տեղերով ընդունվել է 27 դիմորդ (25-ը՝ անվճար, 2-ը՝ վճարովի հիմունքներով): Անվճար հիմունքներով նրանք ընդունվել են ԵՊՀ (9 դիմորդ), ՀԱՊՀ (6), ՀՊՏՀ (5), ԵՊԲՀ (3), ՃՇՀԱՀ (1) և Սլավոնական համալսարան (1), իսկ վճարովի հիմունքներով՝ ՀԱՊՀ (1) և ՃՇՀԱՀ (1):

Մրցույթի լրացուցիչ փուլում, որն ամփոփվել է հուլիսի 24-ին, հայտագրվել է նախորդ փուլի մրցույթից դուրս մնացած 521 դիմորդ, որոնցից 480-ն (92.1%) ընդունվել է ուսուցման վճարովի հիմունքներով:

Այսպիսով՝ 2020 թ. բուհեր ընդունված 9186 դիմորդներից 1341-ն (14.6%) ընդունվել են ուսուցման անվճար, 7788-ը (84.8%)՝ վճարովի հիմունքներով, 57-ը (0.6%)՝ արտոնություններով:

Բուհերում հայտագրված 11967 դիմորդներից 11480-ը (95.9%) առաջին հայտով դիմել են ՀՀ պետական, 487-ը (4.1%)՝ ոչ պետական բուհեր: Բուհ ընդունվածներից 8838-ն (96.2%) ընդունվել են պետական բուհեր, 348-ը (3.8%)՝ ոչ պետական:

## **5.1 Հայտագրված և բուհ ընդունված դիմորդների թվերը ըստ բուհերի և ՀՀ վարչատարածքային միավորների (նաև այլ երկրների)**

Աղյուսակ 14-ում, որտեղ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում միասնական քննություններին մասնակից դիմորդներ ունեցած երկրների ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները, երևում է, որ բուհ ընդունվածների 98.7%-ը եղել են ՀՀ քաղաքացիներ: Բուհ ընդունված երևանաբնակ դիմորդները կազմել են բոլոր դիմորդների 35.3%-ը:

Աղյուսակ 14. Բուռն ընդունվածների թվերը և տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուռնեղանակի այլ երկրներից հայտագրվածների

Հայաստանի գրվածներ	ՀՀ											Ընդամենը						
	Երևան	Արագածոտն	Արարատ	Արտաշատ	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ		Շրջանային					
Թիվը	4270	478	861	847	738	961	992	985	666	226	591	11615	73	86	164	29	352	11967
տոկոսը հայտագրվածների ընդհանուր թվից	35.7	4.0	7.2	7.1	6.2	8.0	8.3	8.2	5.6	1.9	4.9	97.1	0.6	0.7	1.4	0.2	2.9	100
Թիվը	3162	376	703	634	566	739	817	797	538	173	469	8974	54	28	115	15	212	9186
տոկոսը ընդունվածների ընդհանուր թվից	34.4	4.1	7.6	6.9	6.2	8.0	8.9	8.7	5.9	1.9	5.1	97.7	0.6	0.3	1.2	0.2	2.3	100
տոկոսը հայտագրվածների թվից	74.1	78.7	81.6	74.9	76.7	76.9	82.4	80.9	80.8	76.5	79.4	77.3	74.0	32.6	70.1	51.7	60.2	76.8

Աղյուսակից երևում է, որ ՀՀ մարզերից բուռն ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Կոտայքում. բուռնեղանակից հայտագրված 11967 դիմումների 8.3%-ը կազմում 992 դիմումներից ընդունվել է 817-ը (բոլոր ընդունվածների 8.9%-ը): Տվյալ մարզից բուռնեղանակից հայտագրվածներից ընդունվածների տոկոսով նա առաջատարը եղել է Կոտայքի մարզը (82.4%):

Աղյուսակ 15. 2020 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունվածների թիվը և տոկոսը

Բուհը	Շտրունվածների		Բուհը	Շտրունվածների	
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը
ՀՊՄՀ	79	16.5	Եվրասիա միջազգային համալսարան	4	0.8
ԵՊՀ	74	15.4	Երևանի «Գլավոր» համալսարան	4	0.8
ԵՊՀ	70	14.6	Գավառի պետական համալսարան	4	0.8
Հայ-Ռուսական (Սյուրինական) համալսարան	53	11.0	ՀԱՍՀ	3	0.6
ՀՊՏՀ	39	8.1	ՀՊՏՀ-ի Գրամբու մտնունճյուղ	3	0.6
Հայկական բժշկական ինստիտուտ	27	5.6	ԵՊՀ-ի Գրամբու մտնունճյուղ	2	0.4
ՃՀՀԱՀ	25	5.2	Գրիխի պետական համալսարան	2	0.4
ՀԱՊՀ (Երևան)	22	4.6	Ավանդական բժշկության համալսարան	1	0.2
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա Երևանում	21	4.4	ՀԱՊՀ-ի Գրամբու մտնունճյուղ	1	0.2
ԵՊՀ-ի Իջևանի մտնունճյուղ	15	3.1	ՀԱՊՀ-ի Վանաձորի մտնունճյուղ	1	0.2
Վանաձորի պետական համալսարան	11	2.3	Երևանի ցուրտանտեսական համալսարան	1	0.2
Երևանի «Հայբուսակ» համալսարան	9	1.9	Երևանի Սուլեյմա Եփրեմյան անվան համալսարան	1	0.2
Հրոսիտային համալսարան	8	1.7	<b>Շտրուններ</b>	<b>480</b>	<b>100</b>

Աղյուսակ 15-ից երևում է, որ 2020 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունված դիմորդների ամենաբարձր՝ 16.5%-ն ընդունվել է ՀՊՄՀ:

Աղյուսակ 16-ում ներկայացված են ՀՀ բուհեր ընդունված դիմորդների տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների: Տվյալ վարչատարածքային միավորից կամ երկրից ըստ բուհերի ընդունվածների տոկոսները հաշվարկված են ՀՀ բուհերում այդ վարչատարածքային միավորից կամ երկրից ընդունվածների ընդհանուր թվից:

Աղյուսակ 16. 2020 թ. բուսեր ընդունված դիտորդների տվյալային բաշխումը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների (ման ալլ երկրների)

	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Արցախ	Վրաստան	Բուստան	Այլ երկրներ
ԵՊՀ	332	361	296	285	303	165	303	233	286	277	183	463	179	226	333
ՀՊՏՀ	147	162	159	180	150	62	172	51	110	87	102	74	107	104	200
ՀԱՊՀ (Երևան)	128	122	131	94	88	51	128	34	78	104	58	93	179	191	67
ԵՊՀ	107	130	145	131	85	72	122	59	138	127	79	93	214	61	267
ԵՊԲՀ	91	24	61	82	69	60	71	74	58	64	51	148	179	122	67
ՀՊՍՀ	53	125	145	148	123	31	110	16	84	116	75	00	36	09	67
ՃՇՀԱՀ	30	19	23	20	19	14	24	10	15	52	17	37	36	17	
ՀԱՍՀ	16	05		05	04		17	01	04	12	13			09	
Այլ բուսեր	96	53	40	55	159	545	53	521	229	162	422	93	71	261	

Աղյուսակ 16-ից երևում է, որ ՀՀ վարչատարածքային միավորների մեծ մասից հայտագրվածների և ընդունվածների թվերով առաջատար բուսեր եղել է ԵՊՀ-ն: Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում գործող որոշ բուսերի և խոշոր բուսերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ այդ բուսեր դիմած և ընդունված դիմորդների տոկոսը եղել է բարձր: Դա առավել ընդգծված է հատկապես Լոռու և Շիրակի մարզերում (ավելի քան 50%): Նշված մարզերից հայտագրվածների և ընդունվածների թվով ԵՊՀ-ն եղել է 2-րդ տեղում:

Աղյուսակ 17. ՀՀ մարզերում գործող բուհերում 2020 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թվերը ըստ բուհերի (մրցութային հիմնական և լրացուցիչ փուլերը միասին)

Մարզ	Բուհ	Հայտագրվածներ						Ընդունվածներ					
		Տիպ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածները	Ընդհանուր թիվը տվյալ բուհում	Թիվը տվյալ տարածված	Տոկոսը տվյալ բուհում	Տոկոսը տվյալ տարածվածները	Տիպ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածները	Միջին թիվը տվյալ բուհում	Ընդհանուր թիվը տվյալ բուհում	Վիճակը տվյալ տարածված	Տոկոսը տվյալ բուհում	Տիվը մասնագիտացվածները	
Լոռի	Վանաձորի պետական համալսարան	961	411	393	95.6	40.9	739	309	297	96.1	40.2		
Շիրակ	Շիրակի պետական համալսարան	985	319	304	95.3	30.9	797	245	236	96.3	29.6		
Տավուշ	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ	591	245	228	93.1	38.6	469	189	171	90.5	36.5		
Շիրակ	ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ	985	106	98	92.5	9.9	797	90	83	92.2	10.4		
Մյունիք	Գորիսի պետական համալսարան	666	103	99	96.1	14.9	538	63	61	96.8	11.3		
Գեղարքունիք	Գավառի պետական համալսարան	738	96	88	91.7	11.9	566	64	60	93.8	10.6		
Լոռի	ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ	961	86	82	95.3	8.5	739	60	59	98.3	8.0		
Շիրակ	ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ	985	80	75	93.8	7.6	797	61	60	98.4	7.5		
Մյունիք	ՀԱՊՀ-ի Կարսյանի մասնաճյուղ	666	69	69	100	10.4	538	41	41	100	7.6		
Վայոց ձոր	ՀՊՏՀ-ի Եղեգնաձորի մասնաճյուղ	226	30	29	96.7	12.8	173	22	21	95.5	12.1		
Լոռի	ԵՎՏՍ-ի Վանաձորի մասնաճյուղ	961	1	1	100	0.1	739	2	2	100	0.3		
Շիրակ	ԵՎՏՍ-ի Գյումրու մասնաճյուղ	985	1	1	100	0.1	797	1	1	100	0.1		
Գեղարքունիք	Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ	738	1	1	100	0.1	566						

Աղյուսակ 17-ից երևում է, որ դիտարկված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների տոկոսը բարձր է եղել հատկապես Վանաձորի և Շիրակի պետական համալսարաններում ու ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում (համապատասխանաբար՝ 40.9%, 30.9%, 38.6%՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից): Այդ բուհեր ընդունվածների տոկոսները եղել են, համապատասխանաբար, 40.2%, 29.6%, 36.5%:

Աղյուսակ 18-ում ներկայացվել են աղյուսակ 17-ում նշված վեց մարզերի բուհերում հայտագրված և ընդունված տեղացի դիմորդների գումարային թվերը և տոկոսները:

Դիտարկված բուհերում 1-ին հայտով հայտագրվել է ընդհանուր հաշվով 1548 դիմորդ, որոնցից 1468-ը եղել են տեղացիներ: Տարբեր հայտերով ընդունվել է 1147 դիմորդ (1092-ը՝ տեղացիներ):

Նշված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների ընդհանուր թիվը (1468) կազմել է 2020 թվականին ՀՀ բուհերում հայտագրվածների (11967) 12.3%-ը: Այդ բուհեր ընդունված 1092 տեղացիները կազմել են բոլոր ընդունվածների (9186) 11.9%-ը:

## **5.2 ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաները ներկայացնող մասնագիտությունների պահանջարկը**

Աղյուսակ 19-ում ներկայացված են հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաները ներկայացնող մասնագիտություններն ընտրած դիմորդների թվերը: Աղյուսակում հայտագրվածների թիվը ներկայացնող «Այլ հայտեր» սյունը ցույց է տալիս մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերում տվյալ մասնագիտությունն ընտրած դիմորդների թվերը՝ անկախ այն բանից, թե նրանք իրենց դիմում-հայտում այդ մասնագիտությունը քանի բուհում են հայտագրել:

Աղյուսակ 18. ՀՀ մարզերում գործող բուհերում 2020 թ. հայտագրված և ընդունված տեղացի դիմորդների թվերը (մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերը միասին)

Մարզը	Հայտագրվածներ				Ընդունվածներ					
	Միվել մատուցելով վնդնուսուցող շրջանում ՀՀ բուհերում	Ընդունվածներ թիվ	Նվազագույն միջին միջին	Միջին մատուցելով վնդնուսուցող շրջանում ՀՀ բուհերում	Ընդունվածներ թիվ	Նվազագույն միջին միջին	Միջին մատուցելով վնդնուսուցող շրջանում ՀՀ բուհերում	Ընդունվածներ թիվ		
Լոռի	961	498	476	95.6	49.5	739	371	358	96.5	48.4
Շիրակ	985	506	478	94.5	48.5	797	397	380	95.7	47.7
Տավուշ	591	245	228	93.1	38.6	469	189	171	90.5	36.5
Մյունիք	666	172	168	97.7	25.2	538	104	102	98.1	19.0
Գեղարքունիք	738	97	89	91.8	12.1	566	64	60	93.8	10.6
Վայոց ձոր	226	30	29	96.7	12.8	173	22	21	95.5	12.1
Ընդամենը	4167	1548	1468			3282	1147	1092		

Աղյուսակ 19. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների մասնագիտությունների գծով 2020 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թվերը (մրցույթի հիմնական փուլ)

Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը						Ընդունվածների թիվը					
	1-ին հայտ		Այլ հայտեր		Ընդամենը		1-ին հայտ		Այլ հայտեր		Ընդամենը	
	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական	հսկայական
Հայաց լեզու և գրականություն	309	693	1002	1002	216	2	218	218	218	218	218	218
Անգլերեն լեզու և գրականություն	287	952	1239	61	238	10	130	368	8	368	18	386
Պատմություն	171	790	961	84	101	32	21	122	3	122	35	157
Կենսաբանություն	88	473	561	6	57		28	85		85		85
Մաթեմատիկա	83	542	625	20	67	1	12	79	1	80		80
Ռուսաց լեզու և գրականություն	84	118	202		68			68		68		68
Աշխարհագրություն	45	200	245	2	37		31	68		68		68
Ֆիզիկա	28	121	149	23	20	2	5	25	1	25	3	28
Քիմիա	12	127	139	9	11	7	9	20	2	20	9	29
Ֆրանսերեն լեզու և գրականություն	10	29	39	2	4			4		4		4
Գերմաներեն լեզու և գրականություն	6	40	46	1	1		1	2		2		2
Ընդամենը	1123	4085	5208	208	820	52	239	1059	14	1059	66	1125



Աղյուսակ 19-ում ներկայացված տվյալները վերաբերում են 2020 թ. ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված բոլոր բուհերին:


Մանկավարժի որակավորում շնորհող բուհերի (ՀՊՄՀ, ԵՊԼՀ, ՇՊՀ, ՎՊՀ և այլն) նույն մասնագիտություններն ընտրած դիմորդների թվերը ներկայացված են աղյուսակ 20-ում:

**Աղյուսակ 20. Հայտագրված և ընդունված դիմորդների թվերը մանկավարժի որակավորում շնորհող բուհերում (մրցույթի հիմնական փուլ)**

Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածների թիվը
Անգլերեն լեզու և գրականություն	275	334
Հայոց լեզու և գրականություն	176	70
Պատմություն	101	77
Ռուսաց լեզու և գրականություն	59	53
Կենսաբանություն	40	32
Մաթեմատիկա	29	28
Աշխարհագրություն	20	20
Ֆրանսերեն լեզու և գրականություն	10	9
Գերմաներեն լեզու և գրականություն	6	7
Ֆիզիկա	3	1
Քիմիա	3	4
<b>Ընդամենը</b>	<b>722</b>	<b>635</b>

Աղյուսակում տեսնում ենք, որ մրցույթի հիմնական փուլում նշված մասնագիտություններն առաջին հայտով հայտագրել է 722 դիմորդ (հիմնական փուլում հայտագրվածների 6 տոկոսը):

Դիագրամ 3. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների մասնագիտությունների գծով 2016-2020 թթ. 1-ին հայտով հայտագրված դիմորդների թվերը (մրցույթի հիմնական փուլ)



Աղյուսակ 21. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների մասնագիտությունների գծով 2016-2020 թթ. 1-ին հայտով հայտագրված դիմորդների թվերը (մրցույթի հիմնական փուլ)

Մասնագիտությունները	1-ին հայտով հայտագրված դիմորդների թիվը				
	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
<b>Հայտերի ընդհանուր թիվը</b>	<b>11007</b>	<b>9030</b>	<b>5270</b>	<b>10100</b>	<b>11967</b>
Հայտց լեզու և գրականություն	330	290	107	193	309
Անգլերեն լեզու և գրականություն	264	332	142	182	287
Պատմություն	204	179	87	137	171
Կենսաբանություն	43	46	17	39	88
Մաթեմատիկա	124	59	32	55	83
Ուսաց լեզու և գրականություն	81	86	35	68	84
Աշխարհագրություն	39	13	8	14	45
Ֆիզիկա	58	41	18	32	28
Քիմիա	12	5	6	10	12
Ֆրանսերեն լեզու և գրականություն	31	34	16	15	10
Գերմաներեն լեզու և գրականություն	26	16	14	7	6
<b>Ընդամենը</b>	<b>1212</b>	<b>1101</b>	<b>482</b>	<b>752</b>	<b>1123</b>
Տոկոսը հիմնական փուլի հայտերի ընդհանուր թվից	11.0	12.2	9.1	7.4	9.4

Աղյուսակ 21-ից երևում է, որ նշված մասնագիտություններ հայտագրածների ամենացածր տոկոսն արձանագրվել է 2019 թվականին (7.4%):

2020 թ. ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլում աղյուսակ 21-ում նշված մասնագիտությունների թափուր մնացած տեղերի 1-ին հայտով հայտագրվել է 51 դիմորդ (պատմություն՝ 32, անգլերեն լեզու և գրականություն՝ 10, քիմիա՝ 6, ֆիզիկա՝ 2, մաթեմատիկա՝ 1), որը կազմել է այդ փուլում հայտագրված 521 դիմորդների 9.8 տոկոսը:

### 5.3 Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 22-ում ներկայացված է բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը: Ուսումնասիրվել են 2020 թվականին տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

**Աղյուսակ 22. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը**

Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Վարչատարածքային միավորը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների	
			թիվը	տոկոսը
Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուց. հաստուկ դպրոց	Լոռի	33	29	87.9
Քասախի թիվ 1 միջնակարգ դպրոց	Կոտայք	18	15	83.3
«Ֆոտոն» վարժարան	Շիրակ	100	82	82.0
Տափերականի միջնակարգ դպրոց	Արարատ	24	19	79.2
Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հաստուկ դպրոց	Երևան	118	92	78.0
Նոյեմբերյանի ավագ դպրոց	Տավուշ	36	28	77.8
Բջնիի միջնակարգ դպրոց	Կոտայք	17	13	76.5
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց	Սյունիք	40	30	75.0
Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց	Տավուշ	16	12	75.0
Դիլիջանի ավագ դպրոց	Տավուշ	67	49	73.1

Աղյուսակից երևում է, որ բուհ ընդունված շրջանավարտների տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցն է, որի 33 շրջանավարտներից 29-ը (87.9%) ընդունվել են ՀՀ բուհեր:

Լավագույն տասնյակում բուհ ընդունվածների ամենամեծ թիվն ապահոված ուսումնական հաստատությունը եղել է Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցը, որի 118 շրջանավարտներից ընդունվել են 91-ը (77.1%):

Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:

**Աղյուսակ 23. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը
Երևան	Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ հ/դ	118	92	78.0
	ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	244	180	73.8
	Երևանի թիվ 112 ավագ դպրոց	90	63	70.0
	Երևանի թիվ 2 ավագ դպրոց	120	80	66.7
	Երևանի թիվ 190 ավագ դպրոց	217	144	66.4
Արագածոտն	Բյուրականի միջնակարգ դպրոց	27	18	66.7
	Ապարանի ավագ դպրոց	52	33	63.5
	Կաքավաձորի միջնակարգ դպրոց	10	6	60.0
	Աշտարակի ավագ դպրոց	119	70	58.8
	Մաստարայի միջնակարգ դպրոց	10	5	50.0
Արարատ	Տափերականի միջնակարգ դպրոց	24	19	79.2
	Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	77	54	70.1
	Արգավանդի միջնակարգ դպրոց	17	11	64.7
	Լանջազատի միջնակարգ դպրոց	11	7	63.6
	Ղուկասավանի միջնակարգ դպրոց	10	6	60.0

<b>Կոտայք</b>	Քասախի թիվ 1 միջնակարգ դպրոց	18	15	83.3
	Բջնիի միջնակարգ դպրոց	17	13	76.5
	Արովյանի թիվ 6 ավագ դպրոց	36	25	69.4
	Չարենցավանի ավագ դպրոց	127	88	69.3
	Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	58	40	69.0
<b>Շիրակ</b>	«Ֆոտոն» վարժարան	100	82	82.0
	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց	75	55	73.3
	Գյումրու թիվ 1 ավագ դպրոց	28	19	67.9
	Արևիկի միջնակարգ դպրոց	15	10	66.7
	Գյումրու թիվ 26 ավագ դպրոց	36	23	63.9
<b>Սյունիք</b>	Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց	40	30	75.0
	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	93	67	72.0
	Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց	25	18	72.0
	Ագարակի միջնակարգ դպրոց	46	30	65.2
	Մխիթանի ավագ դպրոց	136	83	61.0
<b>Վայոց ձոր</b>	Եղեգնաձորի ավագ դպրոց	70	48	68.6
	Արենիի միջնակարգ դպրոց	14	9	64.3
	Վայքի ավագ դպրոց	54	33	61.1
	Զերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց	12	7	58.3
	Զատիթափի միջնակարգ դպրոց	11	5	45.5
<b>Տավուշ</b>	Նոյեմբերյանի ավագ դպրոց	36	28	77.8
	Վերին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց	16	12	75.0
	Դիլիջանի ավագ դպրոց	67	50	74.6
	Խաչթառակի միջնակարգ դպրոց	11	8	72.7
	Բերդի ավագ դպրոց	46	32	69.6

Արմավիր	Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց	89	64	71.9
	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	45	29	64.4
	Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց	76	47	61.8
	Մեծամորի թիվ 2 ավագ դպրոց	67	39	58.2
	Թաիրովի միջնակարգ դպրոց	22	12	54.5
Գեղարքունիք	Գավառի ավագ դպրոց	63	39	61.9
	Մարտունու ավագ դպրոց	69	41	59.4
	Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց	27	15	55.6
	Լանջաղբյուրի միջնակարգ դպրոց	13	7	53.8
	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	88	47	53.4
Լոռի	Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացվ. ուսուց. հասուկ դպրոց	33	29	87.9
	Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոց	27	19	70.4
	ՎՊՀ-ի հենակետային վարժարան	137	96	70.1
	Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց	122	82	67.2
	Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց	39	24	61.5

Աղյուսակ 23-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները: Այստեղ ևս դիտարկվել են 2020 թվականին տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

### 5.4 Սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսներով առանձնացած դպրոցները

Սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից 2020 թ. ՀՀ բուհերում հայտագրվել է 854 դիմորդ, որոնցից ընդունվել է 655-ը (76.7%): Աղյուսակ 24-ում և աղյուսակ 25-ում ըստ սահմանամերձ և բարձր լեռնային գյուղեր ունեցող վարչատարածքային միավորների ներկայացված են 2020 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները: Ուսումնասիրվել են 5 և ավելի շրջանավարտ ունեցած և ընդունվածների մեծ թիվ ապահոված դպրոցները:

Աղյուսակ 24. 2020 թ. սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից բուհերում հայտագրված և բուհ ընդունված դիմորդների թվերը

Գյուղական բնակավայրի տիպը	Հայտագրվածների թիվը			Ընդունվածների					
	1-ին փուլ	2-րդ փուլ	2 փուլերը միասին	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
				1-ին փուլ		2-րդ փուլ		2 փուլերը միասին	
Սահմանամերձ	478	15	493	364	76.2	12	80.0	376	76.3
Բարձր լեռնային	338	7	345	265	78.4	7	100	272	78.8
Բարձր լեռնային սահմանամերձ	16		16	7	43.8			7	43.8
Ընդամենը	832	22	854	636	76.4	19	86.4	655	76.7

**Աղյուսակ 25. 2020 թ. սահմանամերձ գյուղերի 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների՝ 50-ից բարձր տոկոսով առանձնացած դպրոցները**

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդունվածների թվից
Տավուշ	Նորաշենի միջնակարգ դպրոց	9	7	77.8	5	71.4
	Վերին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց	16	12	75.0	9	75.0
	Խաչթառակի միջնակարգ դպրոց	11	8	72.7	4	50.0
	Այգեհովիտի միջնակարգ դպրոց	29	16	55.2	14	87.5
	Կայանավանի միջնակարգ դպրոց	11	6	54.5	6	100
Սյունիք	Խնածախի միջնակարգ դպրոց	7	5	71.4	5	100
	Ագարակի միջնակարգ դպրոց	46	30	65.2	21	70.0
	Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	10	6	60.0	4	66.7
	Խնձորեսկի միջնակարգ դպրոց	27	16	59.3	13	81.3
	Շինուհայրի միջնակարգ դպրոց	29	16	55.2	9	56.3
Վայոց ձոր	Արենիի միջնակարգ դպրոց	14	9	64.3	5	55.6
Արարատ	Զանգակատան միջնակարգ դպրոց	15	8	53.3	4	50.0

Աղյուսակ 25-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Տավուշի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոցում (77.8%՝ 9 շրջանավարտներից ընդունվել են 7-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ Սյունիքի մարզի Ագարակի միջնակարգ դպրոցում (46 շրջանավարտից՝ 30-ը (65.2%))։ Առաջին հայտով անվճար ընդունվածների ամենամեծ թիվը ևս ապահովել է Ագարակի միջնակարգ դպրոցը (21 դիմորդ)։



**Աղյուսակ 26. 2020 թ. բարձր լեռնային գյուղերի 5 և ավելի թվով շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների բարձր տոկոսով առանձնացած մի քանի դպրոցներ**

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդունվածների թվից
Արագածոտն	Բերքառատի միջնակարգ դպրոց	6	5	83.3	4	80.0
Գեղարքունիք	Լանջաղբյուրի միջնակարգ դպրոց	13	7	53.8	2	28.6
	Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց	25	13	52.0	11	84.6

Աղյուսակ 26-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Արագածոտնի մարզի Բերքառատի միջնակարգ դպրոցում (83.3%, 6 շրջանավարտից՝ 5-ը): Ընդունվածների թվով առաջատարը եղել է Գեղարքունիքի մարզի Գեղհովտի թիվ 1 միջնակարգ դպրոցը (25-ից 13-ը՝ 52%-ը): Առաջին հայտով անվճար ընդունվածների ամենամեծ թիվը նույնպես արձանագրվել է այդ դպրոցում (11 դիմորդ):

## 5.5 Հայտագրված և բուհ ընդունված դիմորդների թվերը ըստ նրանց սեռերի


2020 թ. ՀՀ բուհերում հայտագրված 11967 դիմորդներից 5209-ը (43.5%) եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 6758-ը (56.5%)՝ իգական: Մրցույթի հիմնական փուլում ընդունված 8706 դիմորդներից 3387-ը (38.9%) եղել են արական սեռի, 5319-ը (61.1%)՝ իգական, իսկ լրացուցիչ փուլում ընդունված 480 դիմորդներից, համապատասխանաբար, 184 (38.3%) և 296 (61.7%):

Երկու փուլերի հանրագումարում բուհ ընդունված 9186 դիմորդներից 3571-ը (38.9%) եղել են արական սեռի, 5615-ը (61.1%)՝ իգական:

Դիագրամ 4-ում ըստ սեռերի ներկայացված է 2015-2020 թվականներին ՀՀ բուհերում հայտագրված դիմորդների թվի տոկոսային հարաբերակցությունը:

Ինչպես երևում է դիագրամից, դիտարկված ժամանակահատվածում արական սեռի դիմորդների տոկոսն ամենացածրը եղել է 2020 թվականին (38.9%):

**Դիագրամ 4. 2015-2020 թթ. բուհերում հայտագրված դիմորդների թվի տոկոսային հարաբերակցությունը ըստ սեռերի**



## 5.6 Ամենապահանջված մասնագիտությունները

Աղյուսակ 27-ում ներկայացված են 2020 թ. դիմորդների շրջանում ՀՀ պետական բուհերի ամենապահանջված մասնագիտությունները:

Աղյուսակ 27. 2020 թ. ամենապահանջված մասնագիտությունները ըստ բուհերի

Բուհը *	Մասնագիտությունը	Դիմումների թիվը 1-ին հայտով	Տեղերի թիվը	
			անվճար	վճարովի
ԵՊԲՀ	Բուժական գործ	701	59	350
ԵՊՀ	Իրավագիտություն	456	2	138
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	432	36	180
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	355	12	188
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	339	11	189
ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	230	2	122
ԵՊԲՀ	Ստոմատոլոգիա	218	7	130
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	213	13	187
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	212	10	190
ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	211	5	95
<b>Ընդամենը</b>		<b>3367</b>	<b>157</b>	<b>1769</b>

\* Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:

Աղյուսակ 27-ից երևում է, որ 2020 թվականին ամենապահանջվածը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որի համար հայտագրվել է 701 դիմորդ:

Աղյուսակ 28-ում ներկայացված են 2015-2020 թթ. ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի և ԵՊԲՀ-ի մի քանի պահանջված մասնագիտությունների անցողիկ միավորները:

**Աղյուսակ 28. Բարձր պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների անցողիկ միավորները 2015–2020 թթ.\***

	ԵՊՀ			ՀՊՀ						ԵՊՀՀ			
	Իրավագիտություն	Մշտագրային հարբերություններ	Ինֆորմատիկա և կիրառական տեխնոլոգիա	Տնտեսագիտություն	Ֆինանսներ	Կառավարում	Շուկայագիտություն (սուղիորդ)	Վիճակագրություն	Բուժական գործ	Ստատիստիկա	Խմբագրություն		
<b>2015 թ.</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	52	47.75	26	38.75	54	57.5	59.25	57.25	44.5	39.5	39.75	37
<b>2016 թ.</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	52	45.75	25.5	38	56	57	54.25	56.25	55.25	39.75	39.5	39.5
<b>2017 թ.</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	60	59.5	38.5	54	54	59	56.25	54.75	31.5	39.5	39.5	33.75
<b>2018 թ.</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	46.5	39.75	23.75	24	40.25	40.25	34.75	33.5	16	27	23.25	18.5
<b>2019 թ.</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	31.25	26.25	15.75	25.25	52.25	53.75	50.5	54.75	32.25	39	39.75	36.25
<b>2020 թ.*</b>	1-ին հայտ, անվճար վճարովի US	44.5	40.25	29.75	24	23.5	25	25	30.75	27.75	30.25	27.75	24.5
	1-ին հայտ, անվճար վճարովի US	20	20	19.6	17.8	19.3	18.7	18.1	19.1	14.3	20	20	19.6
	1-ին հայտ, անվճար վճարովի US	19.6	17.3	16.8	11.6	14.5	13.1	13.8	10.1	18.9	17	15.3	

\* 2020 թ. նյութում իրականացված «Իրավագիտություն» պայմանագրով «բուժական գործ» բաժնի ընդունվելու համար դիմորդները հանձնել են մեկ քննություն:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերլուծությունը՝ նշենք, որ միասնական քննություն հանձնած դիմորդների թիվը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 921-ով՝ 11046-ից հասնելով 11967-ի: Ի տարբերություն նախորդ տարիների, 2020 թ. միասնական քննություններն անցկացվել են մեկ փուլով:

➤ **Միասնական քննություններ:** 2020թ. միասնական քննություն է հայտագրել 11967 դիմորդ: Նրանցից քննության է ներկայացել 12452-ը: Հայտագրվածներից 12457-ը եղել են Հայաստանի քաղաքացիներ, 164-ը՝ Ռուսաստանի, 86-ը՝ Վրաստանի, 71-ը՝ Արցախի, 29-ը՝ այլ երկրների:

Հայտագրված դիմորդներից 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտներ են եղել 12093-ը (11764-ը ՀՀ-ից, 67-ը՝ Արցախից և 262-ը՝ այլ երկրներից):

Միասնական քննություններից բացակայությունները չեն գերազանցել մասնակիցների թվի 3.6%-ը: Հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդ չի եղել, 5 դիմորդ քննության անցկացման կարգի խախտման պատճառով հեռացվել է քննությունից:

Միասնական քննությունների ընդհանուր միջին միավորներն արձանագրվել են 10.7-ից (հայոց լեզու և հայ գրականություն) մինչև 16.2 (քիմիա) սահմաններում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների քննություններից նախորդ տարվա համեմատությամբ 0.7-1.1 միավորով նվազել են հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի ու աշխարհագրության միջին միավորները: Քիմիայի միջին միավորն ավելացել է 4-ով, մյուս քննություններինը՝ 0.9-1.6 միավորով:

Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը 2020 թվականին մեծամասամբ եղել է մասնակիցների թվի 14-ից 29 տոկոսի սահմաններում: 10 տոկոսից պակաս է եղել օտար լեզուների և քիմիայի համապատասխան ցուցանիշը: Դրական միավորի շեմը չհաղթահարածների բարձր տոկոսը կարելի է մեկնաբանել 2020 թ. ընդունելության մեկ քննության արդյունքով բուհ ընդունվելու հնարավորությունից օգտվելով հանպատրաստից հայտագրված

դիմորդների պատրաստվածության ցածր մակարդակով:

Միասնական քննություններից 18-20 միավոր հավաքած դիմորդների թիվը եղել է 5.7-ից (մաթեմատիկա) մինչև 59.2 (քիմիա) տոկոսի սահմաններում: Այդ առումով ամենամեծաքանակ բարձր միավորներն արձանագրվել են անգլերենից (թվով 526՝ 29.7 տոկոսը):

Միասնական քննությունների արդյունքների հետ անհամաձայնության վերաբերյալ բողոքարկման դիմումներից դրական լուծում է ստացել 71-ը, որոնցից 32-ը՝ մաթեմատիկայից:

Միասնական քննություններից ըստ ՀՀ վարչատարածքային միավորների արձանագրված ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են Երևանում (քիմիայից, ֆիզիկայից, գերմաներենից), Արարատի (հայոց պատմությունից, ռուսաց լեզվից), Գեղարքունիքի (կենսաբանությունից, հայոց լեզվից և հայ գրականությունից), Լոռու (աշխարհագրությունից, իտալերենից), Կոտայքի (մաթեմատիկայից, կենսաբանությունից) և Տավուշի (անգլերենից, ֆրանսերենից) մարզերում:

Բնակավայրերի տիպերից միասնական քննությունների ամենաբարձր միջին միավորներով աչքի են ընկել հատկապես միջին և փոքր քաղաքները (կենսաբանությունից, քիմիայից, անգլերենից, ռուսաց լեզվից):

Հանրակրթական ուսումնական հաստատություններից 2020 թ. միասնական քննություններից բարձր միջին միավորներ են ունեցել առավելապես ավագ դպրոցների և վարժարանների շրջանավարտները:

➤ **Բուհերի ընդունելության մրցույթը:** 2020 թ. ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի համար նախատեսված է եղել անվճար հիմունքներով ուսուցման 2926 տեղ, վճարովի հիմունքներով՝ 21200:

Բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար հայտագրվել է 11967 դիմորդ, որոնցից ընդունվել է 9186-ը (76.8%): Հայտագրված դիմորդներից 11480-ը (95.5%) դիմել են պետական, 487-ը (4.1%)՝ ոչ պետական բուհեր:

Մրցույթի հիմնական փուլում ՀՀ բուհեր ընդունվել է 8706 դիմորդ (հայտագրվածների 72.8%-ը): Նրանցից 1398-ն ընդունվել է

անվճար հիմունքներով (16.1%), 7308-ը՝ վճարովի (83.9%): Ուսուցման անվճար հիմունքներով ընդունվածներից 57-ն ընդունվել են արտոնություններով, այդ թվում՝ բանակից զորացրված դիմորդներից 25-ը:

Մրցույթի լրացուցիչ փուլում հայտագրվել է նախորդ փուլի մրցույթից դուրս մնացած 521 դիմորդ, որոնցից 480-ն (92.1%) ընդունվել են ուսուցման վճարովի հիմունքներով:

2020 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովվածների լավագույն տասնյակում տեղ են գտել 73.1-87.9% արձանագրածները, որոնցից առաջատարը եղել է Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը: Այդ տասնյակից բուհ ընդունվածների ամենամեծ թիվն ապահովել է Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը, որի 118 շրջանավարտներից ընդունվել են 92-ը (78%):

Սահմանամերձ գյուղերում 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար դպրոցը եղել է Տավուշի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոցը (77.8%), իսկ բարձր լեռնային գյուղերում՝ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոցը (52%):

2020 թվականին դիմորդների նախընտրած մասնագիտություններից ամենաապահանջվածների հնգյակը գլխավորել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որին հաջորդել են ԵՊՀ-ի «Իրավագիտություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունները:

Հաշվի առնելով, որ ամենաապահանջված մասնագիտություններն առավելապես ուսուցանվում են ԵՊՀ-ում, ՀՊՏՀ-ում և ԵՊԲՀ-ում՝ դիտարկվել են դրանց 2015-2020 թթ. անցողիկ միավորներն ըստ ուսուցման անվճար և վճարովի ձևի: Վերլուծության մեջ ներկայացվել են ԵՊՀ-ի «Իրավագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», ՀՊՏՀ-ի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Կառավարում», «Շուկայագիտություն», «Վիճակագրություն» և ԵՊԲՀ-ի «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Ֆարմացիա» մասնագիտությունները:

2020 թվականի անցողիկ միավորները համեմատության մեջ չեն դրվել նախորդ տարիների ցուցանիշների հետ՝ կորոնավիրուսային իրավիճակում բուհերի ընդունելության մրցույթը մեկ քննության արդյունքի հիման վրա անցկացնելով պայմանավորված: Աղյուսակում ներկայացված մասնագիտություններից անվճար ուսուցման անցողիկ առավելագույն՝ 20 միավոր է արձանագրվել ԵՊՀ-ի «Իրավագիտություն», «Միջազգային հարաբերություններ», ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով: Վճարովի հիմունքներով ընդունելության անցողիկ ամենաբարձր միավորը եղել է 19.6-ը («Իրավագիտություն»):

Անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորների մի մասը նախորդ տարիների համեմատությամբ 2019 թվականին նվազման միտում են ունեցել: Դիտարկված մասնագիտությունների մեծ մասի վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորների նվազման միտումն ակնհայտ է հատկապես 2016 թվականից սկսած: 2020 թ. 2017 թ. համեմատությամբ (հաշվի առնելով 2018 թ. դիմորդների թվի սակավությունը՝ համեմատվել է 2017 թ. համապատասխան ցուցանիշների հետ) նվազել են ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունների վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2020 թ. միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ
3. 2019 թ. միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն
4. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության քննությունների, տեղերի և ուսման վարձաչափերի ցանկ



## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2020 թ. միասնական քննությունների ժամանակացույցը

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ԺԱՄ)	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ
Օտար լեզուներ	2.5	02.07.2020
Հայոց պատմություն Աշխարհագրություն Քիմիա	3	04.07.2020 թ.
Մաթեմատիկա	3	06.07.2020
Հայոց լեզու և հայ գրականություն Կենսաբանություն	3	08.06.2020 թ.

### ՀԱՎԵԼՎԱԾ 2. Միասնական քննությունների կազմակերպումը

Գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ից և ավարտվում մարտի 15-ին (համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»)<sup>11</sup>: Մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով ԳԹԿ-ից դպրոցներ ուղարկված տվյալները և նոր դիմում-հայտերը ապրիլի 10-15-ը ուղարկվում են ԳԹԿ: Բուհերում դիմորդների հայտագրումը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: ՀՀ երկաթաբացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետություն-

<sup>11</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>

ների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը: Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

### **ՀԱՎԵԼՎԱԾ 3. Միասնական քննությունների լուսաբանումը և իրազեկումը**

Համաձայն Գնահատման և թեստավորման կենտրոնի գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն տվյալ տարվա հունվարի 20-ից ԶԼՄ-ներում պարբերաբար հրապարակում է հայտարարություններ, որոնցում նշվում են միասնական քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվում և պարբերաբար թարմացվում են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը միասնական քննություններին մասնակցելու դիմում-հայտ լրացրած դիմորդների տվյալները էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:

Միասնական քննությունների կազմակերպման գործընթացը (ուղեցույցների մշակում և տրամադրում, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրում, թեստերի տպագրություն) լուսաբանվում է ԶԼՄ-ներով: Քննությունների անցկացման ողջ գործընթացը բաց է լինում լրատվամիջոցների համար: Պարբերաբար այդ թեմայով կազմակերպվում են հարցազրույցներ և ասուլիսներ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 4. Միասնական քննությունների թեստերի կառուցվածքը և գնահատումը**

Միասնական քննությունների թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից: Օտար լեզուների թեստերում պնդումների փնջեր չեն եղել:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պատասխանի 4 հնարավոր տարբերակներից ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքների երկու տիպերից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդակա- նությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվա- յին հաջորդականության պահպանումը պարտադիր չէ: Պնդումների փունջը կազմվում է 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Միայն է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է (50 միավոր՝ Ա, 30 միավոր՝ Բ մակարդակներից): Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է՝

$$U=0.25 * U_{80}$$

բանաձևով, որտեղ  $U$ -ն միավորն է 20 միավորանոց սանդղակում,  $U_{80}$ -ը՝ 80 միավորանոց սանդղակում:

20 միավորանոց սանդղակում դրական են համարվել 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի տրվել է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց սանդղակի՝ 1 միավոր):

Պնդումների փնջերի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար գնահատման 20 միավորանոց սանդղակում տրվում է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվում է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվում և չի հանվում: Ամբողջ փնջին միավոր չի տրվում նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի



---

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ  
ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

**ՀՀ հանրակրթական  
ուսումնական հաստատությունների  
9-րդ դասարաններում հայոց լեզու և  
մաթեմատիկա դասավանդող ուսուցիչների  
հարցման արդյունքների վերլուծություն.  
2019-2020 ուստարի**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ**

2019 թ. հոկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հանրակրթական 234 ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը զուգընթաց այդ դասարաններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացվել է հարցում, որին մասնակցել է 665 ուսուցիչ:

Հարցման նպատակը եղել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաները դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը:

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած և «Աշակերտի հարցաթերթ» լրացրած աշակերտները եղել են 7366-ը: Աշակերտների այդ համակազմի արդյունքներից արձանագրված

ընդհանուր միջին միավորը<sup>12</sup> հայոց լեզվից կազմել է 4.74, հանրահաշվից՝ 4.41:

«Ուսուցչի հարցաթերթը» ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում: Այն կազմված է եղել 16 հարցից:

Հարցման արդյունքները SPSS և EXCEL ծրագրային փաթեթների կիրառմամբ ենթարկվել են ընդհանուր վիճակագրական, և գործոնային վերլուծության: Կատարվել է նաև աշակերտների առաջադիմության վիճակագրական կանխատեսում:

## 1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծության այս բաժնում ներկայացված են ընդհանուր վիճակագրական տվյալներ, տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, ըստ բնակավայրերի տիպերի և ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Հարցման 665 մասնակիցներից 328-ը եղել են հայոց լեզվի, 311-ը՝ մաթեմատիկայի ուսուցիչներ: 26 ուսուցիչ դասավանդած առարկայի վերաբերյալ հարցաթերթում նշում չի կատարել: Այդ պատճառով վերլուծությունն իրականացվել է 639 ուսուցիչների հարցաթերթերի հիման վրա:

Հայոց լեզվի 328 ուսուցիչների հարցման արդյունքները համադրելով այդ առարկայի արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 6427 աշակերտների արդյունքների հետ, հանրահաշվի 311 ուսուցիչներինը՝ 6043 աշակերտների արդյունքների հետ՝ հայոց լեզվի միջին միավորը կազմել է 4.76 (ստանդարտ շեղումը՝ 1.632), հանրահաշվինը՝ 4.40 (ստանդարտ շեղումը՝ 1.524):

Այնուհանդերձ, վերլուծության ընթացքում տարբեր տեսանկյուններից դիտարկված միջին միավորները համեմատվել են արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների

<sup>1</sup> 2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները

[http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019\\_yntacik\\_hoktember\\_9.pdf](http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019_yntacik_hoktember_9.pdf)

ողջ համակազմի ընդհանուր միջին միավորների հետ (հայոց լեզու՝ 4.74, հանրահաշիվ՝ 4.41):

Ներքին գնահատման ընդհանուր միջին միավորը հայոց լեզվից եղել է 6.53, հանրահաշվից՝ 6.17:

### 1.1 Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների հարցման արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են աղյուսակ 1-ում: Միջին միավորների սյունակներում գունավորած են ընդհանուր միջին միավորը գերազանցող միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 1. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման		Ներքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը	միջին միավորը	ստանդարտ շեղումը
<b>ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ</b>						
Երևան	25.3	29.7	5.16	1.556	6.36	2.082
Շիրակ	8.6	7.2	4.59	1.724	6.73	1.720
Տավուշ	8.8	7.6	4.62	1.582	6.54	1.737
Գեղարքունիք	8.6	7.7	4.38	1.564	7.15	1.686
Սյունիք	7.3	6.7	5.06	1.546	6.58	1.849
Լոռի	7.3	6.9	4.65	1.472	6.52	1.839
Արմավիր	8.2	8.2	4.66	1.728	6.43	1.835
Արագածոտն	7.6	6.9	4.65	1.572	6.58	1.751
Արարատ	6.7	6.6	4.23	1.700	6.20	1.870
Կոտայք	6.4	7.8	4.74	1.694	6.39	1.681
Վայոց ձոր	5.2	4.7	4.26	1.558	6.95	1.768
Ընդամենը	100 (328 ուսուցիչ)	100 (6427 աշակերտ)	4.74	1.629	6.53	1.893

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ						
Երևան	25.1	29.7	4.79	1.531	6.27	1.845
Տավուշ	9.6	8.3	4.38	1.450	5.96	1.817
Շիրակ	9.0	7.3	4.13	1.468	6.31	1.781
Սյունիք	8.4	7.1	4.63	1.656	6.20	1.938
Գեղարքունիք	8.4	8.3	3.99	1.450	6.56	1.894
Արագածոտն	7.4	6.3	4.29	1.459	6.04	1.895
Լոռի	7.1	7.2	4.21	1.375	6.01	2.015
Արմավիր	6.7	6.5	4.35	1.558	6.09	1.880
Կոտայք	6.4	7.7	4.19	1.420	6.06	1.751
Արարատ	6.4	6.6	3.85	1.430	5.81	1.866
Վայոց ձոր	5.5	5.0	4.36	1.518	6.24	1.863
Ընդամենը	100 (311 ուսուցիչ)	100 (6043 աշակերտ)	4.41	1.542	6.17	1.873

Աղյուսակ 1-ում տեսնում ենք, որ հարցման մասնակից ուսուցիչների քառորդ մասը և 9-րդ դասարանում սովորող նրանց աշակերտների շուրջ 30 տոկոսը եղել են Երևանից:

Հայոց լեզվի արտաքին և ներքին գնահատումների ընդհանուր միջին միավորների տարբերությունը կազմել է 1.79 միավոր, իսկ հանրահաշվինը՝ 1.76:

Արտաքին գնահատումից ամենացածր միջին միավորներն արձանագրվել են Արարատի մարզում (հայոց լեզվից՝ 4.23, հանրահաշվից՝ 3.85), ամենաբարձրը՝ Երևանում (հայոց լեզվից՝ 5.16, հանրահաշվից՝ 4.79):



Վարչատարածքային բոլոր միավորներում արտաքին գնահատման միջին միավորները ցածր են եղել ներքին գնահատման միջին միավորներից, որոնց տարբերությունը հայոց լեզվի դեպքում կազմել է 1.2-2.77 միավոր, հանրահաշվի դեպքում՝ 1.48-2.57: Երկու առարկայից էլ այդ տարբերությունն ամենավոքորն է եղել Երևանում, ամենամեծը՝ Գեղարքունիքի մարզում:

Հայոց լեզվի և՛ արտաքին, և՛ ներքին գնահատումների ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել Սյունիքի մարզի աշակերտների միջին միավորները: Երևանում համապատասխան ընդհանուր միջին միավորից բարձր է եղել միայն արտաքին գնահատման միջին միավորը: Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում միայն ներքին գնահատման միջին միավորն է բարձր եղել համապատասխան ընդհանուր միջինից:

Հանրահաշվի արտաքին և ներքին գնահատման ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել Երևանի և Սյունիքի մարզի աշակերտների միջին միավորները: Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերում միայն ներքին գնահատման միջին միավորն է գերազանցել համապատասխան ընդհանուր միջին միավորը:

## 1.2 Վիճակագրական տվյալներ ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 2-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ բնակավայրերի տիպերի: Միջին միավորների սյունակներում գունավորած են տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորը գերազանցող միջին միավորների վանդակները:

Հարցմանը մասնակցած հայոց լեզվի և մաթեմատիկայի 639 ուսուցիչների գրեթե 64 տոկոսը դասավանդում է քաղաքային, 36 տոկոսը՝ գյուղական բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Աղյուսակ 2. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Բնակավայրի տիպը	Ոսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը
<b>ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ</b>				
<b>Քաղաքային բնակավայրեր</b>	<b>65.2</b>	<b>72.8</b>	<b>4.94</b>	<b>1.627</b>
այդ թվում				
խոշոր քաղաքներ	29.9	34.4	5.10	1.591
միջին քաղաքներ	17.1	19.0	4.97	1.684
փոքր քաղաքներ	18.2	19.4	4.64	1.595
<b>Գյուղական բնակավայրեր</b>	<b>34.8</b>	<b>27.2</b>	<b>4.27</b>	<b>1.540</b>
այդ թվում				
գյուղեր	24.4	19.9	4.31	1.553
սահմանամերձ գյուղեր	6.1	3.7	4.18	1.494
բարձր լեռնային գյուղեր	4.0	3.4	4.14	1.511
բարձր լեռնային սահմանամերձ գյուղեր	0.3	0.2	3.3	1.252
<b>Ընդամենը</b>	<b>100</b> (328 ուսուցիչ)	<b>100</b> (6427 աշակերտ)	<b>4.74</b>	<b>1.629</b>
<b>ՀԱՆՐԱՆՍԱՇԻՎ</b>				
<b>Քաղաքային բնակավայրեր</b>	<b>63.4</b>	<b>71.1</b>	<b>4.58</b>	<b>1.534</b>
այդ թվում				
խոշոր քաղաքներ	29.6	34.2	4.73	1.524
միջին քաղաքներ	14.5	16.5	4.54	1.618
փոքր քաղաքներ	19.3	20.4	4.37	1.456
<b>Գյուղական բնակավայրեր</b>	<b>36.6</b>	<b>28.9</b>	<b>3.95</b>	<b>1.399</b>
այդ թվում				
գյուղեր	25.4	20.6	3.93	1.397
սահմանամերձ գյուղեր	6.7	4.5	4.12	1.381
բարձր լեռնային գյուղեր	4.2	3.5	3.89	1.393
բարձր լեռնային սահմանամերձ գյուղեր	0.3	0.3	2.93	1.534
<b>Ընդամենը</b>	<b>100</b> (311 ուսուցիչ)	<b>100</b> (6043 աշակերտ)	<b>4.41</b>	<b>1.542</b>

Աղյուսակ 2-ից երևում է, որ հայոց լեզվի և հանրահաշվի ընդհանուր միջին միավորներից բարձր միջին ցուցանիշներ են արձանագրվել միայն խոշոր և միջին քաղաքների հանրակրթական ուսումնական հաստատություններում (հայոց լեզվից՝ մինչև 0.36 միավորով, հանրահաշվից՝ մինչև 0.32-ով):

Ընդհանուր առմամբ, հայոց լեզվի և հանրահաշվի ընդհանուր միջին միավորներից զգալիորեն ցածր են եղել բարձր լեռնային, հատկապես բարձր լեռնային սահմանամերձ գյուղերում արձանագրված միջին միավորները (հայոց լեզվից՝ 0.6-1.4, հանրահաշվից՝ 0.5-1.5 միավորով):

### **1.3 Վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Աղյուսակ 3-ում ներկայացված են հարցման մասնակից ուսուցիչների և նրանց աշակերտների տոկոսներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Գունավորած են ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորների վանդակները:

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակից հանրակրթական 234 ուսումնական հաստատությունների ցանկում ընդգրկված են եղել 113 միջնակարգ, 110 հիմնական դպրոցներ, 3 կրթահամալիր, 1 ավագ դպրոց, 1 վարժարան, 1 հատուկ դպրոց, 1 միջնակարգ մասնագիտական և 4 ոչ պետական ուսումնական հաստատություն:

Հայոց լեզվի և մաթեմատիկայի 639 ուսուցիչների մոտ 59 տոկոսը դասավանդում է հիմնական, 36 տոկոսը՝ միջնակարգ դպրոցներում, մնացած 5 տոկոսն՝ ավագ և հատուկ դպրոցներում, վարժարանում, կրթահամալիրում, մասնագիտական և ոչ պետական ուսումնական հաստատություններում:

Աղյուսակ 3. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Ուսումնական հաստատության տիպը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը
<b>ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ</b>				
Հիմնական դպրոց	59.8	68.4	4.91	1.614
Միջնակարգ դպրոց	35.7	28.4	4.29	1.543
Ոչ պետական ուս. <u>հաստատ.</u>	1.5	1.1	6.51	1.587
Կրթահամալիր	1.2	0.8	4.69	1.597
Ավագ դպրոց	0.9	0.7	6.70	1.821
Վարժարան	0.3	0.2	5.73	1.794
Հատուկ դպրոց	0.3	0.1	4.14	0.690
Մասնագիտական ուս. <u>հաստատ.</u>	0.3	0.3	5.05	1.359
<b>Ընդամենը</b>	<b>100</b> (328 ուսուցիչ)	<b>100</b> (6427 աշակերտ)	<b>4.74</b>	<b>1.629</b>
<b>ՀԱՆՐԱՀԱՇԻՎ</b>				
Հիմնական դպրոց	58.5	67.5	4.54	1.524
Միջնակարգ դպրոց	37.0	29.4	3.97	1.389
Ոչ պետական ուսումն. <u>հաստատ.</u>	1.3	1.0	5.95	1.345
Կրթահամալիր	1.3	0.7	4.69	1.427
Մասնագիտական ուս. <u>հաստատ.</u>	0.65	0.6	3.93	1.233
Ավագ դպրոց	0.65	0.5	7.04	1.835
Վարժարան	0.3	0.2	5.09	1.640
Հատուկ դպրոց	0.3	0.1	3.86	0.378
<b>Ընդամենը</b>	<b>100</b> (311 ուսուցիչ)	<b>100</b> (6043 աշակերտ)	<b>4.41</b>	<b>1.542</b>

Աղյուսակ 3-ից երևում է, որ երկու առարկայից էլ հիմնական և ավագ դպրոցներում, վարժարանում և ոչ պետական ուսումնական հաստատությունում արձանագրված միջին միավորները 0.13-ից մինչև 2.63 միավորով բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջինից: Միջնակարգ դպրոցների ցուցանիշներն ավելի քան 0.4 միավորով եղել են ցածր: Կրթահամալիրում հանրահաշվից արձանագրված միջին միավորը 0.28-ով գերազանցել է ընդհանուր միջին միավորը, իսկ հայոց լեզվինը զիջել է 0.05-ով: Նշվածներից վիճակագրորեն նշանակալի են եղել միայն հիմնական և միջնակարգ դպրոցների ցուցանիշները:

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակից հանրակրթական ուսումնական հաստատություններից առանձին ուշադրություն է դարձվել 10-ից պակաս աշակերտներ ունեցած 33 դպրոցներին (26 միջնակարգ, 5 հիմնական, 2 հատուկ): Հայոց լեզվի միջին միավորը 1 հիմնական և 8 միջնակարգ դպրոցներում ընդհանուր միջինից 0.04-1.06-ով եղել է բարձր: Հանրահաշվի միջին միավորը 0.09-2.16 միավորով բարձր է եղել երկուական միջնակարգ և հիմնական դպրոցներում: Վերոհիշյալ դպրոցները տեղաբաշխված են Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում: Ամենաբարձր միջին միավորներով աչքի են ընկել Բաղանիսի (Տավուշի մարզ) և Սևանի թիվ 5 (Գեղարքունիքի մարզ) միջնակարգ ու Ջերմուկի թիվ 1 (Վայոց ձորի մարզ) հիմնական դպրոցները:

Դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ են արձանագրվել 33 դպրոցներից 20-ում, որոնցից 7-ում՝ և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից, 2-ում՝ միայն հայոց լեզվից և 11-ում՝ միայն հանրահաշվից: Դրանցից 3-ը հիմնական դպրոցներ են, 15-ը միջնակարգ 2-ը՝ հատուկ, և տեղաբաշխված են ՀՀ բոլոր վարչատարածքային միավորներում: Ե՛վ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ արձանագրած դպրոցները գտնվում են Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում: Նշենք, որ այդ դպրոցների 9-րդ դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա դասավանդած ուսուցիչները տարակարգի համար երբևէ չեն դիմել և մեծամասամբ ունեն ավելի քան 20 տարվա մանկավարժական ստաժ:

## 1.4 Վիճակագրական տվյալներ ըստ ուսուցիչների սեռային կազմի

Հարցման մասնակից 639 ուսուցիչներից 603-ը (94.4 %) կանայք են, 26-ը (4 %)՝ տղամարդիկ: 10 (1.6 %) ուսուցիչ հարցաթերթում սեռի վերաբերյալ նշում չի կատարել: Կանանցից 320-ը (53.1 %) դասավանդում են հայոց լեզու, 283-ը (46.9 %)՝ մաթեմատիկա: Տղամարդկանցից միայն երկուսն են (7.7 %) հայոց լեզվի ուսուցիչներ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է 639 ուսուցիչների սեռային կազմի տոկոսային բաշխումն ըստ բնակավայրերի տիպերի և ըստ դասավանդած առարկաների:

**Աղյուսակ 4. Ուսուցիչների սեռային կազմի տոկոսային բաշխումն ըստ բնակավայրերի տիպերի**

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու				Մաթեմատիկա				Ընդամենը՝ հայոց լեզու և մաթեմատիկա
	կին	տղամարդ	չեն սեռը նշել	Ընդամենը	կին	տղամարդ	չեն սեռը նշել	Ընդամենը	
Քաղաք	32.7	0.2	0.6	<b>33.5</b>	29.1	1.4	0.3	<b>30.8</b>	<b>64.3</b>
Գյուղ	17.4	0.2	0.3	<b>17.9</b>	15.2	2.3	0.3	<b>17.8</b>	<b>35.7</b>

Քաղաքաբնակ ուսուցիչները կազմել են հարցման մասնակիցների 64.3 %-ը (հայոց լեզու՝ 33.5 %, մաթեմատիկա՝ 30.8 %), գյուղաբնակները՝ 35.7 %-ը (հայոց լեզու՝ 17.9 %, մաթեմատիկա՝ 17.8 %): Տղամարդկանցից համեմատաբար բարձր՝ 2.3 % տոկոս են կազմել գյուղերում մաթեմատիկա դասավանդողները:

Ըստ մանկավարժական ստաժի դիտարկելով ուսուցիչների սեռային կազմը՝ նկատում ենք, որ քաղաքային և գյուղական բնակավայրերի բոլոր ենթատիպերում, բացի սույն արտաքին գնահատման բնակավայրերի ցանկում ընդգրկված բարձր լեռնային սահմանամերձ միակ գյուղից, և՛ հայոց լեզվի, և՛ մաթեմատիկայի ուսուցիչների բացարձակ մեծամասնությունն ավելի քան 20 տարվա ստաժ ունեցող կանայք են: Բոլոր ենթատիպերում միասին նրանք կազմել

են հարցման մասնակիցների 63.8 %-ը (հայոց լեզու՝ 32.1 %, մաթեմատիկա՝ 31.8 %):

Արական սեռի 26 ուսուցիչներից 24-ը դասավանդում է մաթեմատիկա: Նրանցից 16-ը և հայոց լեզվի մեկ ուսուցիչ ունեն ավելի քան 20 տարվա մանկավարժական ստաժ: Մաթեմատիկայի ուսուցիչներից 6-ը ունեն 6-15 տարվա մանկավարժական ստաժ:

## 2. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱՈՃԸ

Ուսուցիչների գործելաոճի վերաբերյալ ընդհանուր պատկերացում են տալիս հարցաթերթի 6-12-րդ հարցերի (հավելված 1) պատասխանները: Այդ հարցերի պատասխանի տարբերակների խմբավորմամբ առանձնացվել են ուսուցիչների գործելաոճի հետևյալ խմբերը՝

- ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումը կարևորողներ,

- իրավիճակն ինքնահոսի թողնողներ,

- աշխատանքային կարգապահությունը կարևորողներ:

6-12-րդ հարցերից յուրաքանչյուրին պատասխանելու համար նախատեսված է եղել պատասխանի առաջարկվող երեք տարբերակներից միայն մեկը:

### 2.1 Ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցման կարևորումը

Այս գործելաոճի վերաբերյալ պատկերացում կազմելու համար խմբավորվել են հարցաթերթի 6-12-րդ հարցերի պատասխանների հետևյալ տարբերակները՝

- աշխատանքային գործընթացում ստեղծարարությունը կարևորող ղեկավարի հետ աշխատել նախընտրելը,

- դասն անցկացնելիս ստեղծագործական մոտեցում ցուցաբերելը,

- ուսուցչի հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերող աշակերտին հասկանալ փորձելը,

- աշակերտի հայտնած անընդունելի կարծիքի դեպքում նրա տեսակետը հասկանալ փորձելը,

- ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումն

ամենակարևորը համարելը,

- չնախատեսված իրավիճակներում տվյալ իրավիճակն արդյունավետ օգտագործելը,

- տնօրինության կողմից ներկայացված անցանկալի պահանջներին անհամաձայնություն արտահայտելը:

Պատասխանների այս տարբերակներից առնվազն չորսին դրական պատասխանած ուսուցիչները համարել են ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումը կարևորողների շարքերը և կազմել են հարցման մասնակից 639 ուսուցիչների 69 %-ը, որից 38.3%-ը եղել են հայոց լեզվի ուսուցիչները: Այս գործելաոճը չափազանց կարևորողները կազմել են հարցման մասնակիցների 21.6%-ը:

Ստեղծագործական մոտեցումը կարևորող ուսուցիչները հիմնականում այս կամ այն չափով կարևորել են նաև աշխատանքային կարգապահությունը: Մինչդեռ նրանց շարքերում իրավիճակն ինքնահոսի թողնելու կողմնակիցները չնչին տոկոս են կազմել:

## 2.2 Իրավիճակն ինքնահոսի թողնելը

Իրավիճակն ինքնահոսի թողնելու գործելաոճի վերաբերյալ պատկերացում կազմելու համար խմբավորվել են 6-12-րդ հարցերի պատասխանների հետևյալ տարբերակները՝

- ուսուցչի գործունեությանը չխոչընդոտող ղեկավարի հետ աշխատել նախընտրելը,
- դասն անցկացնելիս ըստ իրավիճակի կողմնորոշվելը,
- ուսուցչի հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերող աշակերտի վարքին ուշադրություն չդարձնելը,
- աշակերտի հայտնած անընդունելի կարծիքի դեպքում խուսակցությունը փոխելը,
- ուսումնական հաստատությունում միջանձնային հարաբերությունները ամենակարևորը համարելը,
- չնախատեսված իրավիճակներում տվյալ իրավիճակը շրջանցելը,
- տնօրինության կողմից ներկայացված անցանկալի պահանջներին ըստ ստեղծված իրավիճակի վերաբերվելը:

Պատասխանների այս տարբերակներից առնվազն չորսին դրական պատասխանած ուսուցիչներն ուսուցման գործընթացում



ստեղծված ցանկացած իրավիճակ ինքնահոսի թողնողներն են, այսինքն, լուծման ուղիներ չառաջարկողները: Նրանք կազմել են հարցման մասնակից 639 ուսուցիչների ընդամենը 2.3 %-ը: Հարցման մասնակիցներից իրավիճակն ինքնահոսի թողնելու գործելաձևով ուսուցիչներ չեն եղել Լոռու, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում: Հայոց լեզվի ուսուցիչներից այդպիսիք չեն եղել նաև Շիրակի և Արմավիրի, իսկ մաթեմատիկայի ուսուցիչներից՝ Կոտայքի և Տավուշի մարզերում:

### 2.3 Աշխատանքային կարգապահությունը կարևորելը

Աշխատանքային կարգապահությունը կարևորելու գործելաձևը նկարագրող պատասխանների տարբերակներն են՝

- հստակ և օգտակար հրահանգներ տվող դեկավարի հետ աշխատել նախընտրելը,
- դասի ընթացքում դասապլանին հավատարիմ մնալը,
- ուսուցչի հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերող աշակերտին նույն կերպ պատասխանելը,
- աշակերտի հայտնած անընդունելի կարծիքի դեպքում ուսուցչի կարծիքը պնդելը և աշակերտի սխալը բացատրելը,
- ուսումնական հաստատությունում աշխատանքային կարգապահությունն ամենակարևորը համարելը,
- չնախատեսված իրավիճակներում դրանք վերացնել փորձելը,
- տնօրինության կողմից ներկայացված բոլոր պահանջներն անխտիր կատարելը:


Պատասխանների թվարկված տարբերակներից առնվազն չորսին դրական պատասխան տված ուսուցիչներն աշխատանքային կարգապահությունն առավել կարևորողներն են, որոնք կազմել են հարցման մասնակից 639 ուսուցիչների 3.4 %-ը: Հարցվածներից աշխատանքային կարգապահությունը խիստ կարևորող ուսուցիչներ չեն եղել Շիրակի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում: Հայոց լեզվի ուսուցիչներից նման գործելաձևի կողմնակիցներ չեն եղել նաև Արագածոտնի, իսկ մաթեմատիկայի ուսուցիչներից՝ Սյունիքի մարզերից և Երևանից հարցմանը մասնակցածների մեջ:

## 2.4 Ուսուցիչների գործելաոճի ընդհանուր պատկերը

Հարցաթերթի (հավելված 1) հիման վրա դիտարկված գործելաոճի տեսանկյունից ցայտուն տարբերություն է նկատվում ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումը կարևորելու և իրավիճակն ինքնահոսի թողնելու ու աշխատանքային կարգապահությունը կարևորելու միջև:

Հետևյալ դիագրամում ներկայացված են հարցաթերթի 6-12-րդ հարցերի պատասխանների տարբերակներն ընտրած ուսուցիչների թվերը: Նշում չկատարած կամ մեկից ավելի նշումներ կատարածների թվերը չեն ներկայացվել:

Դիագրամ 1. Ուսուցիչների թվերը ըստ նրանց գործելաոճը ձևավորված 6-12-րդ հարցերի



Դիագրամում հստակ երևում է, որ ուսուցիչների գերակշիռ մասի գործելաոճում առանձնապես կարևորվում է ուսուցման գործընթացին ստեղծագործական մոտեցում ցուցաբերելը: Ընդ որում, ստեղծագործական մոտեցման կարևորումը նկարագրող պատասխանի տարբերակները հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների մեծ մասն ընտրել են հատկապես 7-9-րդ և 11-րդ հարցերից: Դրանք բնութագրում են ուսուցչի կողմից դասն անցկացնելիս ստեղծագործական մոտեցում ցուցաբերելը, ուսուցչի հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերած և ուսուցչի համար անընդունելի կարծիք հայտնած աշակերտներին հասկանալ փորձելն ու չնախատեսված իրավիճակներում տվյալ իրավիճակն արդյունավետ օգտագործելը:

6-12-րդ հարցերում իրավիճակն ինքնահոսի թողնելու հետ կապված պատասխանների ընտրությանը հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչները մասամբ տարբեր մոտեցում են ցուցաբերել, որն ավելի ցայտուն դրսևորում է ունեցել 6-րդ և 7-րդ հարցերում: Այսպես, ուսուցչի գործունեությանը չխոչընդոտող ղեկավարի հետ աշխատել նախընտրողների 56%-ը (234-ից 131-ը) եղել են հայոց լեզվի, իսկ դասն ըստ իրավիճակի անցկացնողների 61%-ը (207-ից 131-ը)՝ մաթեմատիկայի ուսուցիչները: Երկու առարկայի ուսուցիչներն էլ հավասարապես նշել են, որ կատարում են տնօրինության ներկայացրած բոլոր պահանջներն անխտիր, և դիագրամում նրանց վերաբերող սյուներն ամենաբարձրն են:

Կարգապահությունն առավել կարևորած ուսուցիչները մեծամասամբ նախընտրում են հստակ և օգտակար հրահանգներ տվող ղեկավարի հետ աշխատելը, աշխատանքային կարգապահությունը և ստեղծված անցանկալի իրավիճակը վերացնելը (6-րդ, 10-րդ և 11-րդ հարցեր): Ընդ որում, հստակ և օգտակար հրահանգներ տվող ղեկավարի հետ աշխատել նախընտրողների 62 %-ը (181-ից 113-ը) եղել են մաթեմատիկայի ուսուցիչները: Աշխատանքային կարգապահությանը և իրավիճակին վերաբերող պատասխաններն ընտրածների բաշխումն ըստ դասավանդած առարկաների եղել է գրեթե համաչափ:

### **3. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Գլխավոր գործոնների վերլուծության միջոցով վեր են հանվել հարցման արդյունքում ստացված փոփոխականների միջև առկա գծային վիճակագրական կորելյացիաները հիմնավորող և առաջին հայացքից չնկատվող այլ փոփոխականներ: Ըստ էության դրանք գործոններ են, որոնցից յուրաքանչյուրը ձևավորվել է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված փոփոխականներից: Տարբեր գործոններ ձևավորած փոփոխականների միջև փոխկապակցվածությունը լինում է թույլ: Այս մեթոդով վեր հանված գործոններն ավելի լիար-

Ժեքորեն են մեկնաբանում առանձին փոփոխականների միջև դիտարկվող կապերը:

Ուսուցիչների հարցման արդյունքների գործոնային վերլուծությունը վեր է հանել նրանց աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոններ, որոնցից երեքը եղել են գլխավորները (աղյուսակ 5): Գործոնները ձևավորած փոփոխականներից ընտրվել են 0.4-ից բարձր կորելյացիայի գործակից ունեցածները:

Աղյուսակ 5-ում ներկայացված են գլխավոր գործոնները, որոնք ստացվել են առանց ուսուցիչների դասավանդած առարկաները տարբերակելու: «Հարցաթերթի հարցերը» սյունակում ներկայացված է յուրաքանչյուր հարցի համառոտ ձևակերպումը, «Հարցերի համարները» սյունակում՝ հարցաթերթում տվյալ հարցի ունեցած հերթական համարը:

**Առաջին գործոնը** ձևավորվել է բնակավայրի տիպը և վարչատարածքային միավորը ցույց տվող փոփոխականներից: Այս գործոնը համառոտ անվանենք **«բնակության վայր»**:

**Երկրորդ գործոնի** հետ կապված են 6-րդ («Նախընտրելի դեկավարը»), 10-րդ («Ամենակարևորը դպրոցում»), 12-րդ («Տնօրինության ոչ ցանկալի պահանջները») և 13-րդ («Համագործակցությունը») հարցերից ձևավորված փոփոխականները, որոնք կարող են բնութագրել ուսուցչի փոխհարաբերությունները դեկավարության և գործընկերների հետ: Երկրորդ գործոնն անվանենք **«փոխհարաբերություններ»**: Այս համատեքստում վարքի և կառավարման ոճի տեսանկյունից որոշակիորեն ուրվագծվել է ուսուցչի անձի բնավորության կերտվածքը (դեմոկրատ, ավտորիտար կամ անտարբեր):

Աղյուսակ 5. Գլխավոր գործոնները

№	Գլխավոր գործոնները	Հարցաթերթի հարցերը (գործոնները ձևավորած փոփոխականները)	Հարցերի համարները	Գործոնների կորելյացիայի գործակիցները		
				1-ին	2-րդ	3-րդ
1	Բնակության վայրը	Բնակավայրի տիպը		0.853		
		Վարչատարածքային միավորը		0.835		
2	Փոխհարաբերությունները	Նախընտրելի դեկավարը	6		0.621	
		Ամենակարևորը դպրոցում	10		0.568	
		Տնօրինության ներկայացրած ոչ ցանկալի պահանջները	12		0.516	
		Համագործակցությունը	13		0.439	
3	Փորձառությունը	Աշխատանքում բավականություն ստանալը	15			0.620
		Նախընտրելին չնախատեսված իրավիճակներում	11			0.498
		Եթե աշակերտը վատ է վերաբերվում ուսուցչին	8			0.405

Երրորդ գործոնի հետ սերտորեն կապված են հարցաթերթի 15-րդ («Աշխատանքում ինչի՞ց եք բավականություն ստանում»), 11-րդ («Չնախատեսված իրավիճակներում նախընտրելի է») և 8-րդ («Եթե աշակերտը վատ է վերաբերվում Ձեզ») հարցերից ձևավորված փոփոխականները, որոնք կարող են բնութագրել ուսուցչի մանկավարժահոգեբանական փորձառությունը: Երրորդ գործոնը համառոտ անվանենք **«փորձառություն»**:

Գլխավոր գործոնները դիտարկելով ըստ հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների խմբերի առանձին-առանձին՝ ստացվել է վերը ներկայացվածից փոքր-ինչ տարբեր պատկեր:

Աղյուսակ 6-ում ներկայացված են ուսուցիչների դասավանդած առարկայի տարբերակմամբ իրականացված գործոնային վերլուծության արդյունքում վեր հանված գլխավոր գործոնները: Համեմատելով 5-րդ և 6-րդ աղյուսակների տվյալները՝ նկատում ենք, որ

հայոց լեզվի ուսուցիչների համար գլխավոր գործոնները երկուսն են, մաթեմատիկայի ուսուցիչների համար՝ երեքը: Ընդ որում, գործոնների ձևավորումն ընթացել է գլխավորից դեպի երկրորդական գործոններ և հակառակ ուղղությամբ փոփոխականների մասնակի տեղաշարժով: Փոխվել է նաև գլխավոր երրորդ գործոնի բովանդակությունը և անվանման ձևակերպումը:

№	Գլխավոր գործոնները	Հարցաթերթի հարցերը (գործոնները ձևավորած փոփոխականները)	Հարցերի համարները		Գործոնների կորելյացիայի գործակիցները	Հարցաթերթի հարցերը (գործոնները ձևավորած փոփոխականները)	Հարցերի համարները	Գործոնների կորելյացիայի գործակիցները			
			1-ին գործոն	2-րդ գործոն				1-ին գործոն	2-րդ գործոն	3-րդ գործոն	
<b>Հայոց լեզվի ուսուցիչներ</b>						<b>Մաթեմատիկայի ուսուցիչներ</b>					
1	Բնակության վայրը	Բնակավայրի տիպը		0.853		Վարչատարածքային միավորը		0.890			
		Վարչատարածքային միավորը		0.835		Բնակավայրի տիպը		0.868			
2	Փոխհարաբերությունները	Տնօրինության ոչ ցանկալի պահանջները	12		0.795	Նախընտրելի ղեկավարը	6		0.727		
		Նախընտրելի չնախատեսված իրավիճակներում	11		0.743	Դասն անցկացնելու ձևը	7		0.727		
		Աշակերտի անընդունելի կարծիքը	9		0.649	Տնօրինության ոչ ցանկալի պահանջները	12		0.697		
		Ամենակարևորը դպրոցում	10		0.530	Համագործակցությունը	13		0.675		
3	Գոհունակությունը աշխատանքից				Ամենակարևորը դպրոցում	10		0.534			
					Աշխատանքից բավականություն ստանալը	15			0.666		
					Անկկայիները	14			0.594		

### 3.1 Բնակության վայրի գործոնը

Այս գործոնը ձևավորած փոփոխականները, թեև տարբեր հերթականությամբ և կորելյացիայի գործակիցներով, ուսուցիչների երկու խմբի համար էլ եղել են նույնը:

Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բնակավայրերի տիպերի դիտարկելով արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորները՝ նկատում ենք, որ երկու առարկաների ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել քաղաքաբնակ աշակերտների միջին միավորները, ընդ որում, ոչ բոլոր մարզերում: Երկու առարկաների ընդհանուր միջինից բարձր միջին միավորներ են արձանագրվել Երևանում, Արագածոտնի, Արմավիրի, Սյունիքի մարզերի միջին քաղաքներում, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի փոքր քաղաքներում: Բարձր են եղել նաև Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի միջին մեծության քաղաքների աշակերտների միջին միավորները հայոց լեզվից և Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերի աշակերտներինը՝ հանրահաշվից:

Գնահատման 10 միավորանոց համակարգում դրական միավորի շեմից՝ 4-ից ցածր միջին միավորներ են արձանագրվել հայոց լեզվից՝ Արարատի, Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, հանրահաշվից՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի և Սյունիքի մարզերի գյուղերում: 4-ից ցածր են եղել նաև Արարատի մարզի միջին քաղաքների աշակերտների միջին միավորները հայոց լեզվից և Գեղարքունիքի մարզի միջին քաղաքներինը՝ հանրահաշվից:

### 3.2 Փոխհարաբերությունների գործոնը

Երկրորդ գործոնը հայոց լեզվի ուսուցիչների դեպքում ձևավորվել է տնօրինության պահանջներին, չնախատեսված իրավիճակներին, աշակերտի անընդունելի կարծիքին և ուսուցչի կարծիքով դպրոցում ամենակարևոր երևույթին վերաբերող փոփոխականներից, իսկ հանրաքաղվի ուսուցիչների դեպքում՝ նախընտրելի դեկավարին, տնօրինության պահանջներին, համագործակցությանը, դպրոցում ամենակարևոր երևույթին և դասն անցկացնելու ձևին վերաբերողներից: Այս գործոնը թերևս բնութագրում է հայոց լեզվի ուսուցիչների փոխհարաբերությունները դեկավարության և աշակերտների հետ, իսկ մաթեմատիկայի ուսուցիչների դեպքում՝ նաև գործընկերների հետ:

Ուսուցիչների վարքագծի և գործելաոճի տեսանկյունից դիտարկված փոխհարաբերությունների համատեքստում երկրորդ գործոնն ուրվագծել է նրանց **անձի բնավորության կերտվածքը** (ավտորիտար, դեմոկրատ կամ անտարբեր): Պարզվել է, որ հարցման մասնակիցներն ընդհանուր առմամբ դեմոկրատիայի կողմնակիցներ են: Նրանցից շատերը նախընտրում են աշխատել դեմոկրատ և արհեստավարժ դեկավարի հետ, սակայն իրենց համար անցանկալի հանձնարարությունների դեպքում պատրաստ են անհամաձայնություն հայտնել կամ հանձնարարությունը կատարել՝ կախված իրավիճակից: Այս տեսանկյունից տարբերակվել են ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցում ցուցաբերող և իրավիճակն ինքնահոսի թողնող ուսուցիչները: Երկու խմբերում էլ ավելի մեծ է եղել հայոց լեզվի ուսուցիչների բաժինը (մոտ 53 %): Ստեղծարարությունը կարևորող ուսուցիչներից դեկավարության պահանջների հանդեպ «ըմբոստացողները» կազմել են մասնակիցների թվի 17 %-ը, «անտարբերները»՝ 16 %-ը, իսկ իրավիճակը շատ հար-

ցերում ինքնահոսի թողնողներից «ըմբոստացողները»՝ 15 %-ը, «անտարբերները»՝ 19 %-ը:

Աշխատանքում առավելապես ստեղծագործական մոտեցման կողմնակից լինելով՝ ուսուցիչները կարևորում են նաև կարգապահությունը՝ ղեկավար-ուսուցիչ-աշակերտ համակարգի բոլոր մակարդակներում: Սակայն կարգապահությունը չափազանց կարևորողները կազմել են հարցման մասնակիցների ընդամենը 8.5 %-ը, որից 5 %-ը եղել են հայոց լեզվի ուսուցիչները:

### **3.3 Աշխատանքից գոհունակության գործոնը**

Երրորդ գործոնի հետ կապված կա որոշակի վերապահում: Աղյուսակ 4-ում այն համառոտ անվանել ենք «Փորձառություն»: Հայոց լեզվի 328 և մաթեմատիկայի 311 ուսուցիչների հարցման արդյունքների համատեղ գործոնային վերլուծության ղեկավարում այդ գործոնը ձևավորվել է աշխատանքից բավականություն ստանալուն, չնախատեսված իրավիճակներին և աշակերտի վատ պահվածքին վերաբերող փոփոխականներից: Մինչդեռ դասավանդած առարկայի տարբերակմամբ իրականացված գործոնային վերլուծության արդյունքում ստացվել է որոշակի առումով տարբեր պատկեր: Պարզվել է, որ երրորդ գործոնը գլխավոր է եղել մաթեմատիկայի ուսուցիչների համար, իսկ հայոց լեզվի ուսուցիչների համար այն հանդիսացել է երկրորդական գործոն:

Մաթեմատիկայի ուսուցիչների համար երրորդ գործոնը ձևավորվել է աշխատանքից բավականություն ստանալուն և առաջիկա տարիներին ուսուցիչների ակնկալիքներին վերաբերող փոփոխականներից, որոնց միջոցով թերևս նկարագրվում է իրենց աշխատանքից ուսուցիչների գոհ լինելը: Այդ առումով երրորդ գործոնը համառոտ անվանել ենք «Գոհունակություն աշխատանքից»:

Թեև հայոց լեզվի ուսուցիչների համար աշխատանքից գոհունակությունը երկրորդական գործոնների շարքում է հանդես եկել, այնուամենայնիվ, այս գործոնի մեկնաբանությունը ներկայացնենք և՛ մաթեմատիկայի, և՛ հայոց լեզվի ուսուցիչների տեսանկյունից:

Աշխատանքից բավականություն ստանալուն վերաբերող փոփոխականը ձևավորվել է ուսուցչի աշխատանքի գնահատված լինելը, իր աշխատանքից ուսուցչի գոհ լինելը և ընկերական միջավայրում գտնվելը բնութագրող փոփոխականներից, իսկ առաջիկա 2-3 տարիներին ուսուցիչների ակնկալիքներին վերաբերող փոփո-



խականը՝ աշխատավարձի և մանկավարժական որակավորման բարձրացման սպասումները, ինչպես նաև ուսուցչի աշխատանքի հետ կապված ակնկալիք չունենալը բնութագրողներից:

Հարցվածների մոտ 49 %-ն ակնկալում է աշխատավարձի բարձրացում, 41 %-ը՝ մանկավարժական որակավորման բարձրացում, իսկ մոտ 7 %-ն ակնկալիքներ չունի: Աշխատանքից բավականություն ստանալու տեսանկյունից մաթեմատիկայի և հայոց լեզվի ուսուցիչների ակնկալիքների միտումը նույնատիպ է: Իրենց աշխատանքի գնահատված լինելուց բավականություն ստացող ուսուցիչներից աշխատավարձի բարձրացում սպասողները հարցվածների 17 %-ն են կազմել (հայոց լեզու՝ 7 %, մաթեմատիկա՝ 10 %), մանկավարժական որակավորման բարձրացում սպասողները՝ 13 %-ը (հայոց լեզու՝ 6 %, մաթեմատիկա՝ 7 %), ոչ մի ակնկալք չունեցողները՝ 2 %-ը (հայոց լեզու և մաթեմատիկա՝ 1-ական տոկոս):

Իրենց աշխատանքից գոհ լինելուց բավականություն ստացող ուսուցիչներից աշխատավարձի բարձրացում ակնկալողները կազմել են հարցման մասնակիցների 32 %-ը (հայոց լեզու՝ 17 %, մաթեմատիկա՝ 15 %), մանկավարժական որակավորման բարձրացում սպասողները՝ 26 %-ը (հայոց լեզու՝ 15 %, մաթեմատիկա՝ 11 %) և ակնկալքներ չունեցողները՝ 7 %-ը (հայոց լեզու՝ 4 %, մաթեմատիկա՝ 3 %):

Աշխատանքային գործունեության մեջ ընկերական միջավայրում գտնվելուց բավականություն ստանալը նշած միակ ուսուցչիչը (մաթեմատիկայի) առաջիկա տարիներին ակնկալում է մասնագիտական որակավորման բարձրացում:

Հարցաթերթում դասավանդած առարկան նշած ուսուցիչների մոտ երեք տոկոսը երրորդ գործոնը նկարագրող հարցերի վերաբերյալ համապատասխան նշումներ չեն կատարել կամ կատարել են ոչ լիարժեք:

Վերը շարադրվածից հետևում է, որ հարցման մասնակիցներից աշխատավարձի բարձրացում ակնկալող մաթեմատիկայի ուսուցիչները կազմել են 25 %, հայոց լեզվի ուսուցիչները՝ 24 %, մասնագիտական որակավորման բարձրացում ակնկալող մաթեմատիկայի ուսուցիչները՝ 18 %, հայոց լեզվինը՝ 21 %: Ուսուցչի աշխատանքի հետ կապված ակնկալիքներ չունեցողները կազմել են մասնակիցների թվի 7 %-ը (մաթեմատիկա՝ 4 %, հայոց լեզու՝ 3 %):

Ի դեպ, նրանց մեջ չեն եղել հայոց լեզվի ուսուցիչներ Կոտայքի, մաթեմատիկայի ուսուցիչներ՝ Արմավիրի և Սյունիքի մարզերից:

### 3.4 Գլխավոր գործոնների ազդեցության աստիճանները

Աղյուսակ 7-ում ներկայացված են հարցված ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա այս կամ այն չափով ազդող գլխավոր գործոնների ազդեցության աստիճանները: Աղյուսակում գունավորած են տվյալ գործոնի ազդեցության ամենաբարձր տոկոսով աստիճանների, ինչպես նաև ընդհանուր միջին միավորը գերազանցող միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 7. Ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության աստիճանները

Գործոնի համարը	Գործոնը	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
		Գործոնի ազդեցության չափը	Ուսուցիչների տոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը	Գործոնի ազդեցության չափը	Ուսուցիչների տոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը
1	Բնակության վայրը	Ուժգին	23.2	5.19	1.585	Ուժգին	18.3	4.05	1.409
		Միջին	24.1	4.95	1.680	Միջին	35.7	4.18	1.475
		Թույլ	34.1	4.46	1.546	Թույլ	21.2	4.42	1.540
		Բացակայում է	18.6	4.28	1.557	Բացակայում է	24.8	4.80	1.532
2	Փոխհարաբերությունները	Ուժգին	18.3	4.58	1.558	Ուժգին	15.1	4.48	1.495
		Միջին	27.2	4.89	1.613	Միջին	37.9	4.47	1.543
		Թույլ	33.8	4.78	1.658	Թույլ	29.6	4.24	1.486
		Բացակայում է	20.7	4.67	1.656	Բացակայում է	17.4	4.41	1.550
3	Գոհունակությունը աշխատանքից	Ուժգին				Ուժգին	12.5	4.19	1.465
		Միջին				Միջին	32.8	4.51	1.550
		Թույլ				Թույլ	43.1	4.33	1.490
		Բացակայում է				Բացակայում է	11.6	4.58	1.598

Հետևելով աղյուսակի տվյալներին՝ նկատում ենք, որ հայոց լեզվի ուսուցիչների 1/3 մասը բնակության վայրը և ուսուցչի փոխհարաբերությունները նկարագրող գործոնների թույլ ազդեցության կրողներն են: Հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից բարձր են եղել բնակության վայրի գործոնի միջին և ուժգին ազդեցությունը կրողների (հայոց լեզվի ուսուցիչների 47 %-ը) աշակերտների միջին

միավորները: Այդ առումով վիճակագրորեն նշանակալի են եղել Երևանի հիմնական դպրոցների ցուցանիշները: Այդ դպրոցներում դասավանդողները կազմել են հարցման մասնակից հայոց լեզվի ուսուցիչների 21 %-ը:

Դիտարկումը շարունակելով ըստ բնակավայրի տիպի՝ պարզվել է, որ բնակության վայրի գործոնի ուժգին ազդեցության բոլոր կրողները եղել են խոշոր քաղաքների դպրոցներում հայոց լեզու դասավանդող ուսուցիչները, իսկ միջին ազդեցության կրողները՝ խոշոր քաղաքներում և մարզերից առավելապես Սյունիքի, Արմավիրի ու Կոտայքի միջին քաղաքներում դասավանդողները: Գործոնի ազդեցությունը չկրող ուսուցիչները գյուղերից են և փոքր քաղաքներից:

Հայոց լեզվի ուսուցիչների համար գլխավոր երկրորդ՝ ղեկավարության և աշակերտների հետ փոխհարաբերությունների գործոնն ուժգին ազդեցություն ունի և՛ քաղաքաբնակ, և՛ գյուղաբնակ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Այս գործոնի միջին և թույլ ազդեցությունը կրողներն առավելապես քաղաքաբնակներն են:

Մաթեմատիկայի ուսուցիչների 1/3-ից ավելին բնակության վայրը և փոխհարաբերությունները նկարագրող գործոնների միջին ազդեցության կրողներն են, 43 տոկոսը՝ աշխատանքից գոհ լինելու գործոնի թույլ ազդեցության կրողները: Հանրահաշվի ընդհանուր միջին միավորը գերազանցել են բնակության վայրի գործոնի թույլ ազդեցությունը կրող և չկրող ուսուցիչների, գործընկերների հետ փոխհարաբերությունների գործոնի միջին և ուժգին ազդեցությունը կրող և աշխատանքից գոհ լինելու գործոնի միջին ազդեցությունը կրող և չկրող ուսուցիչների աշակերտների միջին միավորները:

Բնակության վայրի գործոնի ուժգին ազդեցությունը կրող մաթեմատիկայի ուսուցիչները եղել են առավելապես Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի գյուղերի, միջին ազդեցության կրողները՝ բոլոր մարզերի գյուղերի և Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի ու Վայոց ձորի մարզերի միջին և փոքր քաղաքների դպրոցներում դասավանդողները: Գործոնի ազդեցությունը չեն կրում խոշոր քաղաքների դպրոցներում դասավանդող ուսուցիչները:

Մաթեմատիկայի ուսուցիչների համար երկրորդ գլխավոր գործոնը՝ ղեկավարության, գործընկերների և աշակերտների հետ փոխհարաբերությունները, ուժգին ազդեցություն ունի և՛ քաղաքաբնակ, և՛ գյուղաբնակ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Գործոնի միջին և թույլ ազդեցություն կրողներն առավելապես քաղաքաբնակներն են:

Երրորդ գլխավոր գործոնը՝ գոհունակությունը աշխատանքից, այս կամ այն ուժգնության ազդեցություն ունի առավելապես քաղաքաբնակ ուսուցիչների շրջանում: Գործոնի ազդեցությունը չկրողները հիմնականում Արմավիրի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի գյուղերից են:

#### **4. ԵՐԿՐՈՐՈՒԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

Վերլուծության այս բաժնում մասնակի անդրադարձ է կատարվել հարցման մասնակից ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա ազդող երկրորդական գործոններին, որոնք ծանրակշիռ ազդեցություն չունեն, սակայն որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:


##### **4.1 Ուսուցիչների մանկավարժական ստաժը**

Ուսուցիչների մանկավարժական ստաժը գլխավոր գործոնների մեջ չէր կարող հանդես գալ, քանի որ հարցման մասնակիցների մեջ բացարձակ մեծամասնություն են կազմել ավելի քան 20 տարվա ստաժ ունեցող ուսուցիչները:

Մանկավարժական ստաժի հետ կապված վիճակագրական տվյալները ներկայացված են հավելված 2.2-ում:

Դիագրամ 2-ում երևում է, որ հայոց լեզվի 328 և հանրահաշվի 311 ուսուցիչների, համապատասխանաբար, 63.7 և 71.4 տոկոսն ունի ավելի քան 20 տարվա մանկավարժական ստաժ: Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր միջին միավորներից (հայոց լեզու՝ 4.74, հանրահաշիվ՝ 4.41) ցածր են եղել միայն մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների և մինչև 10 տարվա ստաժով մաթեմատիկայի ուսուցիչների դասավանդած դասարանների միջին միավորները:

Դիագրամ 2. Վիճակագրական տվյալներ ուսուցիչների մանկավարժական ստաժի վերաբերյալ



Քանի որ ուսումնասիրվել են հարցմանը մասնակցած 665 ուսուցիչներից 639-ի հարցման արդյունքները և նրանց դասավանդած դասարանների առաջադիմությունը (պատճառի մասին խոսվել է էջ 3-ում), տեղին է նաև դիագրամում ներկայացված միջին միավորներն այդ համակարգի ընդհանուր միջին միավորների (հայոց լեզու՝ 4.76, հանրահաշիվ՝ 4.40) հետ համեմատելը: Ըստ այդմ, հայոց լեզվի 4.76 միջին միավորից բարձր են եղել 6-20 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների դասավանդած դասարանների միջին միավորները, հանրահաշվի 4.4 միավորից՝ 10 տարուց ավելի ստաժով ուսուցիչների դասարաններին:

Առանձին անդրադառնանք մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների սեռային կազմին: Ստաժի այդ խմբում 55-ից 32-ը եղել են հայոց լեզվի, 23-ը՝ մաթեմատիկայի ուսուցիչներ: Հայոց լեզու դասավանդողներից 31-ը և մաթեմատիկա դասավանդողներից 21-ը եղել են կանայք: Ուսուցիչներից 2-ը սեռի վերաբերյալ նշում չեն կատարել: Ստաժի այս խմբում, այն էլ մաթեմատիկա դասավանդողների մեջ, եղել է արական սեռի մեկ ուսուցիչ:

## 4.2 Ուսուցիչների որակավորման տարակարգերը

Ուսուցիչների որակավորման տարակարգը ևս գլխավոր գործոն չէր կարող համարվել, քանի որ հարցման մասնակիցների մեծամասնությունը տարակարգի համար երբևէ դիմած չի եղել:

Հարցման մասնակից ուսուցիչների գերակշիռ մասը (86.8%-ը) տարակարգ ստանալու համար երբևէ չի դիմել, 6.6%-ն ունեցել են առաջին տարակարգ, 0.3%-ը՝ երկրորդ, տարակարգի հավակնորդները կազմել են 1.9%, իսկ 4.4%-ը հարցաթերթում տարակարգի վերաբերյալ նշում չի կատարել: Տարակարգի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ըստ առարկաների ներկայացված են հավելված 2.4-ում:

Անդրադառնանք տարակարգ ունեցող և հավակնորդ ուսուցիչների բաշխմանն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Առաջին տարակարգ ունեցող ուսուցիչների ամենաբարձր՝ 11 տոկոսն արձանագրվել է Լոռու և Գեղարքունիքի մարզերից հարցմանը մասնակցածների մեջ: Արմավիրի մարզի ուսուցիչների մեջ տարակարգ ունեցողներ կամ տարակարգի համար դիմածներ չեն եղել: Երկրորդ տարակարգ ունեցողները եղել են Երևանից, տարակարգի համար դիմած, բայց այն դեռևս չստացածները՝ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի մարզերից և Երևանից:

Տարակարգ ունեցող և տարակարգի սպասող ուսուցիչների բաշխումը դիտարկենք ըստ նրանց դասավանդած առարկայի:

Հայոց լեզվու դասավանդողների 8.2%-ը կազմած առաջին տարակարգ ունեցող ուսուցիչները Երևանից, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերից են (1-ից մինչև 5-ական ուսուցիչ), իսկ տարակարգի հավակնորդները (2.1%)՝ Երևանից, Արարատի, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերից (1-2-ական ուսուցիչ): Մարզերից տարակարգ ունեցող և հարցմանը մասնակցած ուսուցիչների համեմատաբար բարձր՝ ավելի քան 10% է արձանագրվել Գեղարքունիքում, Լոռիում, Կոտայքում, Վայոց ձորում և Տավուշում (3 կամ 4 ուսուցիչ յուրաքանչյուր մարզից):

Մաթեմատիկա դասավանդողների 4.8%-ը կազմած առաջին տարակարգ ստացած ուսուցիչները Երևանից, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավու-

2ի մարզերից են (1-3-ական ուսուցիչ), երկրորդ տարակարգ ստացած 2 ուսուցիչ (0.6%)՝ Երևանից, իսկ տարակարգի հավակնորդները (1.6%)՝ Արագածոտնի, Կոտայքի և Սյունիքի (1-2-ական ուսուցիչ) մարզերից: Արմավիրի մարզից հարցմանը մասնակցած բոլոր ուսուցիչները և Սյունիքի մարզի հայոց լեզվի ուսուցիչների 87%-ը տարակարգ ստանալու համար երբևէ չեն դիմել, իսկ 13%-ը եղել են հավակնորդներ:

Տարակարգ ունեցող և հավակնորդ ուսուցիչների բաշխումն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ունի հետևյալ պատկերը:

Առաջին տարակարգ ունեցող հայոց լեզվի 27 ուսուցիչներից 18-ը՝ դասավանդում են հիմնական, 8-ը՝ միջնակարգ դպրոցներում, 1-ը՝ կրթահամալիրում, մաթեմատիկայի 15 ուսուցիչներից 12-ը՝ հիմնական, 3-ը՝ միջնակարգ դպրոցներում: Տարակարգի համար դիմած, բայց դեռևս այն չստացած հայոց լեզվի 7 ուսուցիչներից 6-ը հիմնական դպրոցներից են, 1-ը՝ միջնակարգից, մաթեմատիկայի 5 ուսուցիչներից 3-ը՝ հիմնական, 2-ը՝ միջնակարգ դպրոցներից:

Երկրորդ տարակարգ ստացած մաթեմատիկայի երկու ուսուցիչները դասավանդում են հիմնական դպրոցում:

Տարակարգի հավակնորդ ուսուցիչների 82%-ը դասավանդում են հիմնական, 18%-ը՝ միջնակարգ դպրոցներում:

Հաշվի առնելով այն, որ տարակարգ ստացած ուսուցիչների գերակշիռ մասն ունեն առաջին տարակարգ, դիտարկենք նրանց սեռային կազմը: Այդ խնբում 42-ից 27-ը հայոց լեզվի ուսուցիչներ են, 15-ը՝ մաթեմատիկայի: Կանանցից 25-ը դասավանդում են հայոց լեզու, 13-ը՝ մաթեմատիկա, տղամարդկանցից 1-ը՝ հայոց լեզու, 2-ը՝ մաթեմատիկա: Հայոց լեզվի 1 ուսուցիչ հարցաթերթում սեռի վերաբերյալ նշում չի կատարել:

Տարակարգի 12 հավակնորդներից 10-ը կանայք են, որոնցից 7-ը դասավանդում են հայոց լեզու, 3-ը՝ մաթեմատիկա: Հավակնորդներից արական սեռի միակ ուսուցիչը դասավանդում է մաթեմատիկա, իսկ 2-ը սեռի վերաբերյալ նշում չեն կատարել:

#### **4.3 Միջին միավորները ըստ մանկավարժական ստաժի և որակավորման տարակարգի խմբերի**


Վերլուծության այս ենթաբաժնում ուսուցիչների մանկավարժական ստաժի կտրվածքով ներկայացված է որակավորման

տարակարգի և արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորների միջև դիտարկված կապը:

Դիագրամ 3-ում ներկայացված են տարակարգ ունեցող և չունեցող ուսուցիչների տոկոսներն ըստ նրանց մանկավարժական ստաժի, ինչպես նաև արտաքին ընթացիկ գնահատումից այդ ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորները:

Դիագրամում տեսնում ենք, որ հարցման մասնակիցների զգալի մասը տարակարգ ստանալու համար դեռևս դիմած չեն եղել: Հայոց լեզվի 328 ուսուցիչներից մինչև հարցումը տարակարգ ստանալու համար դիմել և այն դեռևս ստացած չի եղել (առաջին տարակարգի հավակնորդներ) 2.1 %-ը, իսկ առաջին տարակարգ ունեցել է 8.2 %-ը: Մաթեմատիկայի 311 ուսուցիչներից տարակարգի հավակնորդ է եղել 1.6 %-ը, առաջին տարակարգ ունեցել է 4.8 %-ը, երկրորդ տարակարգ՝ 0.6 %-ը:

Դիագրամ 3. Վիճակագրական տվյալներ ուսուցիչների մանկավարժական ստաժի և տարակարգի մասին





Թեև հարցման մասնակիցներից տարակարգ ստացած և տարակարգի հավակնորդ ուսուցիչները եղել են փոքրաթիվ (հայոց լեզվի ուսուցիչների 10.3 %-ը և մաթեմատիկայի ուսուցիչների 6.8 %-ը), և դրանով պայմանավորված՝ նրանց աշակերտների միջին միավորները վիճակագրորեն նշանակալի չեն, այնուամենայնիվ ներկայացնենք դրանց ընդհանուր պատկերը:

Առաջին տարակարգ ունեցող ուսուցիչների դասավանդած դասարաններում հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից բարձր է եղել (0.3-ով) միայն 6-10 տարվա մանկավարժական ստաժ ունեցողների աշակերտների միջին միավորը: Մինչդեռ 11-20 տարվա ստաժ ունեցողների աշակերտների միջին միավորները եղել են 0.4-ով ցածր: Ընդհանուր միջին միավորից բարձր են եղել առաջին տարակարգի հավակնորդ ուսուցիչների աշակերտների միջին միավորները: Ըստ ստաժի խմբերի և տարակարգի դիտարկված միջին միավորները հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից բարձր են եղել առավելագույնը 0.3 միավորով: Բացառություն է կազմել 16-20 տարվա ստաժ ունեցողների խմբում տարակարգի հավակնորդ ուսուցիչների դասավանդած դասարանների միջին միավորը, որն ընդհանուր միջին միավորը գերազանցել է 1.18-ով:

Մաթեմատիկայի ուսուցիչներից առաջին տարակարգ ունեցողների դասավանդած դասարաններում հանրահաշվի ընդհանուր միջին միավորից բարձր է եղել միայն 11-15 տարվա մանկավարժական ստաժի խմբի ուսուցիչների աշակերտների միջին միավորը (1 միավորով), իսկ ավելի քան 15 տարվա ստաժ ունեցողների միջին միավորները եղել են 0.04-0.4-ով ցածր: Երկրորդ տարակարգ ստացած 2 ուսուցիչների աշակերտների միջին միավորն ընդհանուր միջինը գերազանցել է 0.7 միավորով: Ընդհանուր միջին միավորից 0.3-ով բարձր է եղել առաջին տարակարգի հավակնորդների խմբի ավելի քան 20 տարվա ստաժ ունեցողների աշակերտների միջին միավորը, իսկ մինչև 5 տարվա ստաժ ունեցողների աշակերտներինը եղել է 0.2-ով ցածր:

Հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչներից տարակարգ ստանալու համար երբևէ չդիմաձնների դասավանդած դասարաններում արձանագրված միջին միավորները մոտ են եղել ընդհանուր միջին միավորներին, որովհետև ուսուցիչների այդ խումբը կազմել է հարցվածների գերակշիռ մասը:

## 5. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հարցաթերթի վերջում «բաց հարցի» ձևաչափով ուսուցիչներին հնարավորություն է տրվել շարադրելու իրենց աշխատանքային գործունեության մեջ գնահատված լինելուն նպաստող մինչև երեք հանգամանք: Համապատասխան գրառումներ կատարել են հարցման մասնակիցներից 606-ը: Նրանց ներկայացրած բազմաթիվ տեսակետները խմբավորելով և դիտարկելով գործոնային վերլուծության տեսանկյունից՝ վեր են հանվել 4 հիմնական գործոններ, որոնք ընդգծում են աշակերտ-ուսուցիչ-ղեկավարություն-հասարակություն համակարգի փոխհարաբերությունների «առողջացման», ուսումնանյութական բազայի բարելավման, հանրակրթական պետական ծրագրի և պետական մակարդակով ուսուցիչների խրախուսման մեխանիզմների վերանայման կարևորությունը:

Ուսուցիչների շարադրած տեսակետները մեկ անգամ ևս ամրագրել են նրանց աշխատանքի արդյունքների վրա ազդող գլխավոր գործոնները, որոնք ներկայացվել են սույն վերլուծության 3-րդ գլխում:

### ▪ Փոխհարաբերությունները

Այս գործոնն ընդգրկել է աշակերտ-ուսուցիչ-ղեկավարություն-հասարակություն փոխհարաբերություններում հատկապես ուսուցչի աշխատանքի գնահատումը, մանկավարժական համագործակցությունը, բարենպաստ աշխատանքային միջավայրը, հանդուրժողականությունը և, առհասարակ, միջանձնային հարաբերությունները:

Թվարկված հանգամանքները կարևորել է ուսուցիչների 20-44 %-ը:

### ▪ Ուսումնանյութական բազայի բարելավումը

Ուսուցիչների մի մասը նշել է դպրոցի ուսումնանյութական բազայի և շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը: Որպես առաջնային խնդիրներ շեշտադրվել են հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, դիդակտիկ նյութե-

րով ապահովումը և դպրոցների հիմնանորոգումը: Այս գործոնը կարևորել է ուսուցիչների 15 %-ը:

▪ **Հանրակրթական պետական ծրագրի վերանայումը**

Այս գործոնով առավելապես կարևորվել է 12-ամյա կրթության վերանայումը, առարկայական ծրագրերի, դասագրքերի բեռնաթափումը, դասարաններում աշակերտների առավելագույն թվի նվազեցումը և այլն: Դրանք կարևոր է համարել ուսուցիչների 13 %-ը:

▪ **Պետության կողմից ուսուցչի գնահատված լինելը**

«Բաց հարցը» լրացրած 606 ուսուցիչների 31-43 %-ը կարևորել է ուսուցչի աշխատանքի գնահատումը պետական մակարդակով (աշխատավարձի բարձրացում, պարգևավճարներ, խրախուսման այլ ձևեր, դրույքաչափի և մանկավարժական կենսաթոշակի չափի վերանայում, տարակարգի ստացում):

## **6. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ**

Վերլուծության այս բաժնում ուսուցիչների և նրանց աշակերտների հարցումներից ձևավորված փոփոխականների համադրմամբ վարքագծային, հուզական, ինչ-որ առումով նաև իմացական չափանիշներով դիտարկվել են նրանց փոխհարաբերությունները:

### **6.1 Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները**

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մասին պատկերացում կազմելու նպատակով ուսուցիչների և աշակերտների տվյալների բազաներում համադրվել են ուսուցչի վերաբերմունքից աշակերտի գոհունակությանը, դասի ընթացքում նրա ակտիվությանը և ուսուցչի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերող ու անընդունելի կարծիք արտահայտող աշակերտներին, ինչպես նաև ուսուցչի աշխատանքի հետ կապված ակնկալիքներին վերաբերող փոփոխականները:

Պարզվել է, որ հայոց լեզվի ուսուցիչների վերաբերմունքից գոհ է եղել նրանց աշակերտների 91 %-ը, մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից՝ 87 %-ը:

Աշակերտների գոհունակությունն արտացոլվել է նրանց առաջադիմության մեջ: Դասի ընթացքում ուսուցչի հարցերին ակտիվորեն պատասխանող այն աշակերտները, որոնց ուսուցիչները դպրոցում ամենակարևորը համարում են ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն ունենալը, հայոց լեզվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորից ունեցել են 0.49-ով բարձր միջին միավոր, հանրահաշվից՝ 0.05-ով: Այն ակտիվ աշակերտները, որոնց ուսուցիչներն ամենակարևորը համարում են միջանձնային հարաբերությունները, երկու առարկաների ընդհանուր միջին միավորներից ունեցել են 0.5-ով բարձր միջին ցուցանիշներ, իսկ աշխատանքային կարգապահությունը կարևորողների դեպքում՝ հայոց լեզվից 0.51-ով, հանրահաշվից՝ 0.28-ով: Միջին ակտիվություն ցուցաբերող աշակերտների արդյունքները միայն հանրահաշվից են համեմատաբար բարձր եղել, այն էլ՝ միջանձնային հարաբերությունները կարևորող ուսուցիչների դասարաններում (0.1 միավորով): Ուսուցիչների վերը նշված խմբերի դասարաններում պասիվ աշակերտների միջին միավորները երկու առարկայի դեպքում էլ 0.2-0.4 միավորով եղել են ընդհանուր միջինից ցածր:

Աշակերտի վատ պահվածքի և անընդունելի կարծիքի դեպքում նրան հասկանալ փորձող, ինչպես նաև աշխատանքային գործունեությունից բավականություն ստացող ուսուցիչների աշակերտների արտաքին գնահատման արդյունքներն ընդհանուր միջին միավորներից եղել են բարձր: Աշակերտին հասկանալ փորձող ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորները արձանագրվել են 4.82-4.87 միջակայքում: Իրենց աշխատանքի գնահատանքից բավականություն ստացողների աշակերտների միջին միավորը հայոց լեզվից եղել է 4.92-ը, հանրահաշվից՝ 4.86-ը, իսկ իրենց կատարած աշխատանքից գոհ ուսուցիչներինը, համապատասխանաբար, 4.69-ը և 4.83-ը:

Վերը նշված իրավիճակներում անտարբերություն ցուցաբերող, ինչպես նաև չափազանց խստաբարո փոքրաթիվ ուսուցիչների աշակերտների միջին միավորները եղել են միջինից բավական

ցածր: Նշենք նաև, որ դրանք եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի ցուցանիշներ:

Անդրադառնանք նաև ուսուցչի՝ աշխատանքի հետ կապված ակնկալիքներով պայմանավորված առաջադիմությանը:

Աշխատավարձի և մանկավարժական որակավորման բարձրացում ակնկալող ուսուցիչների, նաև մանկավարժի աշխատանքի հետ կապված ակնկալիքներ չունեցողների դասերին տարբեր ակտիվություն ցուցաբերող աշակերտների միջին միավորները երկու առարկայից էլ գերազանցել են համապատասխան ընդհանուր միջին միավորը: Ցածր են եղել միայն հարցման մասնակիցներից ուսուցիչների ակնկալիքներին և աշակերտների ակտիվությանը վերաբերող նշումների բացթողումներ թույլ տվածների ցուցանիշները:

Ուսուցիչների ակնկալիքների և նրանց վերաբերմունքից աշակերտների գոհունակության առումով առաջադիմության դիտարկումից հետևում է, որ ընդհանուր միջին միավորից բարձր են եղել աշխատավարձի բարձրացում ակնկալող և ոչինչ չակնկալող հայոց լեզվի ու մաթեմատիկայի ուսուցիչների, ինչպես նաև որակավորման բարձրացում ակնկալող մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից գոհ աշակերտների միջին միավորները: Աշխատավարձի բարձրացում ակնկալողներից հայոց լեզու դասավանդողների դեպքում միավորների տարբերությունը կազմել է 0.22 միավոր, մաթեմատիկայի դեպքում՝ 0.12, մանկավարժական որակավորման բարձրացում ակնկալող մաթեմատիկայի ուսուցիչների դեպքում՝ 0.04, աշխատանքի հետ կապված ոչ մի ակնկալիք չունեցող հայոց լեզվի ուսուցիչների դեպքում՝ 0.35, մաթեմատիկայի ուսուցիչների դեպքում՝ 0.14: Դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ են ունեցել ոչ մի ակնկալիք չունեցողների վերաբերմունքից դժգոհ աշակերտները, սակայն նրանց ցուցանիշները եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի:

## **6.2 Աշակերտների կողմից մատուցվող նոր նյութի ընկալումը՝ կախված ուսուցիչների գործելառճից**

Ուսուցիչների և նրանց աշակերտների հարցումներից ձևավորված փոփոխականների համադրմամբ պարզվել է, որ ուսուցչի մատուցած նոր նյութը միանգամից յուրացնում է աշակերտների

16-17 %-ը, կրկին և ավելի մատչելի կերպով ներկայացնելու կարիք երբեմն ունենում է 23-24 %-ը, իսկ մանրամասն ներկայացնելու կարիք հաճախ ունենում է 60 %-ը: Ընդ որում, հայոց լեզվի և մաթեմատիկայի դեպքում տոկոսային տարբերությունը մեծ չէ:

Անդրադառնալով աշակերտների 60 %-ը կազմած խմբի ցուցանիշներին՝ նկատում ենք, որ հայոց լեզվի նոր նյութի մանրամասն ներկայացման կարիք հաճախ ունեցողների 69 %-ը դասն անցկացնելիս ստեղծագործական մոտեցում ցուցաբերող ուսուցիչների աշակերտներն են (միջին միավորը՝ 4.86), 23 %-ը՝ ըստ իրավիճակի կողմնորոշվողներինը (միջին միավորը՝ 4.70): Մաթեմատիկայի դեպքում, համապատասխանաբար, 51 և 40 %-ն է (միջին միավորները՝ 4.88 և 4.67):

## 7. ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Վերլուծության այս բաժնում առանձին փոփոխականների հետ կապված՝ կատարվել է աշակերտների առաջադիմության վիճակագրական կանխատեսում:

Կանխատեսման համար դիտարկվել են ուսուցիչների տարակարգին, գործելաոճին, ակնկալիքներին և աշխատանքից բավականություն ստանալուն վերաբերող փոփոխականները: Ուսուցիչների գործելաոճը նկարագրող փոփոխականներից վիճակագրորեն նշանակալի են եղել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններին, չնախատեսված իրավիճակներին և դպրոցում ամենակարևոր գործընթացներին վերաբերողները:

Տարակարգի հետ կապված կանխատեսումը հարցման մասնակիցների աշակերտների միջին առաջադիմության շոշափելի փոփոխություն չի ենթադրում: Սակայն եթե որակավորման համար չդիմած ուսուցիչները տարակարգ ստանան, իսկ ունեցողների տարակարգը բարձրանա մեկ աստիճանով, ապա հնարավոր է, որ հայոց լեզվի ընդհանուր միջին միավորը մինչև 0.5 միավորով բարձրանա Արագածոտնի, Արմավիրի, Տավուշի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի, իսկ հանրահաշվինը՝ 0.4-ով՝ Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում:

Միջին միավորների աճը վիճակագրորեն նշանակալի կարող է լինել փոքր քաղաքներում (հայոց լեզվից՝ 0.1, հանրահաշվից՝ 0.01 միավորով) և գյուղերում (հայոց լեզվից՝ 0.5, հանրահաշվից՝ 0.4 միավորով), իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններից՝ միջնակարգ դպրոցներում (հայոց լեզվից՝ 0.5, հանրահաշվից՝ 0.4 միավորով):

Անդրադառնանք ուսուցիչների գործելաձևը բնութագրող փոփոխականներին, որոնցից կանխատեսման համար վիճակագրորեն նշանակալի են եղել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններին, չնախատեսված իրավիճակներին և դպրոցում ամենակարևոր գործընթացներին վերաբերողները:

Հայոց լեզվից առաջադիմության կանխատեսման համար վիճակագրորեն նշանակալի են եղել ուսուցչի նկատմամբ վատ վարք ցուցաբերող աշակերտների հանդեպ ուսուցիչների վերաբերմունքը և դպրոցում ամենակարևոր գործընթացը բնութագրող փոփոխականները: Հանրահաշվի դեպքում նշանակալի են եղել վատ վարք ցուցաբերող և անընդունելի կարծիք արտահայտող աշակերտների հանդեպ ուսուցչի վերաբերմունքն ու չնախատեսված իրավիճակներում ուսուցիչների վարքը բնութագրողները: Այդ տեսանկյունից շեշտադրվել է հիմնականում դեմոկրատական մոտեցումը, որի հետ կապված՝ կանխատեսվել է հետևյալ հնարավոր իրավիճակը:

Եթե փոխհարաբերություններում ավտորիտարիզմ կամ անտարբերություն ցուցաբերող ուսուցիչները դառնան դեմոկրատական մոտեցման կողմնակիցներ, ապա հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները կարող են մինչև 0.5 միավորով ավելանալ Շիրակի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերում: Միջին միավորի ավելացում հնարավոր է նաև հայոց լեզվից՝ Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի, հանրահաշվից՝ Կոտայքի մարզերում: Ընդ որում, հայոց լեզվից միավորների աճը վիճակագրորեն նշանակալի կլինի փոքր քաղաքներում և գյուղերում, հանրահաշվից՝ միայն գյուղերում: Այստեղից հետևում է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերից միջին միավորները կարող են նշանակալիորեն աճել միջնակարգ դպրոցներում, որովհետև դրանք տեղաբաշխված են առավելապես գյուղերում: Այդ

դպրոցներում հայոց լեզվի միջին միավորը կարող է բարձրանալ 0.5-ով, հանրահաշվինը՝ 0.4-ով:

Առաջադիմությունը կանխատեսվել է նաև համագործակցության, ակնկալիքների և աշխատանքից բավականություն ստանալու հետ կապված: Այդ առումով հայոց լեզվի առաջադիմության համար վիճակագրորեն նշանակալի փոփոխականներ են հանդիսացել ուսուցիչների ակնկալիքները և աշխատանքից բավականություն ստանալը նկարագրողները: Հանրահաշվի առաջադիմության կանխատեսման համար նշանակալի է եղել աշխատանքային համագործակցությունը նկարագրող փոփոխականը:

Կանխատեսմամբ հաշվարկվել է, որ առաջիկա 2-3 տարիներին ուսուցիչների ակնկալիքների իրականացումը (աշխատավարձի բարձրացում, որակավորման տարակարգի ստացում) և աշխատանքից բավականություն ստանալն ավելի շատ կարող են ազդել հայոց լեզվի, իսկ աշխատանքային համագործակցության սերտացումը՝ մաթեմատիկայի ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա:

Այս դիտարկմաբ, թեև ընդհանուր միջին միավորների էական փոփոխություն չի սպասվում, սակայն վարչատարածքային միավորների, բնակավայրերի և դպրոցների տիպերի կտրվածքով հնարավոր են որոշակի փոփոխություններ: Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում մինչև 0.5 միավորով հնարավոր է ավելանան հայոց լեզվի և մինչև 0.6-ով՝ հանրահաշվի ընդհանուր միջին միավորները: Այդ ցուցանիշը 0.1-0.2 միավորով կարող է ավելանալ, հանրահաշվից՝ Կոտայքի, հայոց լեզվից՝ Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում: Վիճակագրորեն նշանակալի կարող են լինել գյուղերի, հետևաբար և միջնակարգ դպրոցների համար կանխատեսված միջին միավորները (հայոց լեզվից՝ 0.4-0.5, հանրահաշվից՝ 0.2-0.5 միավորով):

Համագործակցություն ենթադրող աշխատանքների հետ կապված՝ պարզվել է, որ կանխատեսված միջին միավորների վիճակագրորեն նշանակալի աճ հնարավոր է համագործակցության կողմնակից մաթեմատիկայի ուսուցիչների աշակերտների արդյունքներում (0.1 միավորով):

Ակնկալիքների տեսանկյունից արձանագրված և կանխատեսված միջին միավորների համեմատությունը ցույց է տալիս, որ վի-



ճակագրորեն նշանակալի դրական փոփոխություն սպասվում է մանկավարժական որակավորման բարձրացում ակնկալող հայոց լեզվի ուսուցիչների աշակերտների արդյունքներում (0.1 միավորով):

Աշխատանքից բավականություն ստանալու հետ կապված՝ արձանագրված և կանխատեսված միավորների միջև նշանակալի տարբերություններ չեն եղել:

## ԱՄՓՈՓՈՒՄ

### ▪ Ընդհանուր տեղեկություններ

2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով անցկացված հարցմանը մասնակցել է հանրակրթական 234 ուսումնական հաստատություններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող 665 ուսուցիչ: Նրանցից 328-ը եղել են հայոց լեզվի, 311-ը՝ մաթեմատիկայի ուսուցիչներ: Ուսուցիչներից 26-ը հարցաթերթում չեն նշել դասավանդած առարկան: Այդ պատճառով նրանց հարցման տվյալները չեն վերլուծվել: Հայոց լեզվի 328 ուսուցիչների դասավանդած դասարաններից հայոց լեզվի արտաքին գնահատմանը մասնակցել է 6427 աշակերտ, մաթեմատիկայի 311 ուսուցիչների դասարաններից հանրահաշվի արտաքին գնահատմանը՝ 6043-ը:

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների ամբողջ համակազմի (7366 աշակերտ) արդյունքներից արձանագրված ընդհանուր միջին միավորը հայոց լեզվից կազմել է 4.74, հանրահաշվից՝ 4.41: Վերլուծության համար պիտանի հարցաթերթեր լրացրած հայոց լեզվի 328 ուսուցիչների 6427 աշակերտների միջին միավորը հայոց լեզվի արտաքին գնահատումից կազմել է 4.76, մաթեմատիկայի 311 ուսուցիչների 6043 աշակերտներինը հանրահաշվից՝ 4.4 միավոր: Վերլուծության մեջ միջին միավորների համեմատությունները կատարվել են արտաքին ընթացիկ գնահատման մասնակից-

ների ողջ համակազմի ընդհանուր միջին միավորների հետ (հայոց լեզու՝ 4.74, հանրահաշիվ՝ 4.41):

Ներքին գնահատման ընդհանուր միջին միավորները եղել են հայոց լեզվից՝ 6.53-ը, հանրահաշվից՝ 6.17-ը:

**▪ Տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Հարցման մասնակից 639 ուսուցիչների քառորդ մասը և արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած նրանց աշակերտների 30 տոկոսը եղել են Երևանից:

Արտաքին գնահատումից ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են Երևանում (հայոց լեզվից՝ 5.16, հանրահաշվից՝ 4.79), ամենացածրը՝ Արարատի մարզում (հայոց լեզվից՝ 4.23, հանրահաշվից՝ 3.85):

Բոլոր վարչատարածքային միավորներում արտաքին գնահատման միջին միավորները ցածր են եղել ներքին գնահատման միջին միավորներից (հայոց լեզվից՝ 1.2-2.77, հանրահաշվից՝ 1.48-2.57 միավորով): Ամենավոքր տարբերությունը երկու առարկայից էլ եղել է Երևանում, ամենամեծը՝ Գեղարքունիքի մարզում:

Երևանում և Սյունիքի մարզում արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորները 0.22-0.38-ով բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից:

Հարցման 639 մասնակիցների գրեթե 64 %-ը դասավանդում է քաղաքային, 36 %-ը՝ գյուղական բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Արտաքին գնահատման միջին միավորները երկու առարկաների ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել միայն խոշոր և միջին քաղաքների հանրակրթական ուսումնական հաստատություններում (հայոց լեզվից՝ մինչև 0.36 միավորով, հանրահաշվից՝ մինչև 0.32-ով): Ցածր են եղել բարձր լեռնային, հատկապես բարձր լեռնային սահմանամերձ գյուղերում արձանագրված միջին միավորները (0.5-1.5 միավորով):

Հարցմանը մասնակցած ուսուցիչների մոտ 59 տոկոսը դասավանդում է հիմնական դպրոցներում, 36 տոկոսը՝ միջնակարգ, 5 տոկոսը՝ հատուկ և ավագ դպրոցներում, վարժարանում, կրթա-

համալիրում, մասնագիտական և ոչ պետական ուսումնական հաստատություններում:

Վիճակագրորեն նշանակալի են եղել հիմնական և միջնակարգ դպրոցներում սովորողների միջին միավորները: Հիմնական դպրոցների դեպքում միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորից (0.13-0.17-ով), միջնակարգ դպրոցների դեպքում ցածր են եղել մոտ 0.4-ով:

Առանձին ուշադրություն է դարձվել 9-րդ դասարանում 10-ից պակաս աշակերտներ ունեցած 33 դպրոցների արդյունքներին: Ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի այդպիսի մի քանի դպրոցների միջին միավորները: Դպրոցներից 20-ում, որոնցից 15-ը միջնակարգ են, արձանագրվել են դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ: Երկու առարկաներից դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ են արձանագրվել Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում:

#### ▪ Ուսուցիչների գործելաձևը

Հարցաթերթի միջոցով բացահայտվել է ուսուցիչների գործելաձևի միտվածությունը: Այդ առումով պարզվել է, որ հարցված 639 ուսուցիչների 69 %-ն ուսուցման գործընթացում կարևորում է ստեղծագործական մոտեցումը (հայոց լեզվի ուսուցիչներ՝ 38.3%, մաթեմատիկայի ուսուցիչներ՝ 30.7 %): Ստեղծագործական մոտեցումը չափազանց կարևորողները կազմել են հարցման մասնակիցների 21.6%-ը:

Գործելաձևի առումով առանձնացվել է նաև աշխատանքային կարգապահությունը կարևորելը և իրավիճակն ինքնահոսի թողնելը: Ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումը կարևորող ուսուցիչների մեծ մասը նաև աշխատանքային կարգապահության կողմնակիցներ են:

▪ **Ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող գլխավոր և երկրորդական գործոնները**

**Գլխավոր գործոններ**

Հարցման արդյունքների գործոնային վերլուծությունը վեր է հանել ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա ազդող գլխավոր երեք գործոններ: Դրանք բնակության վայրի, փոխհարաբերությունների և աշխատանքից գոհունակության գործոններն են, որոնցից երրորդը հայոց լեզվի ուսուցիչների համար հանդես է եկել երկրորդական գործոնների շարքում:

Գործոնների ազդեցության չափի առումով միջին միավորների դիտարկումից հետևում է, որ հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից բարձր են եղել բնակության վայրի գործոնի ուժգին և միջին ազդեցությունը կրողների (հայոց լեզվի ուսուցիչների 47 %-ը) և փոխհարաբերությունների գործոնի միջին և թույլ ազդեցությունը կրողների (հայոց լեզվի ուսուցիչների 61 %-ը) աշակերտների միջին միավորները:

Մաթեմատիկայի դեպքում բնակության վայրի գործոնը հակառակ ազդեցություն է ունեցել: Ընդհանուր միջին միավորից բարձր են եղել գործոնի ազդեցությունը չկրողների և թույլ ազդեցությունը կրողների աշակերտների հավաքած միջին միավորները (մաթեմատիկայի ուսուցիչների 46 %-ը):

Փոխհարաբերությունների գործոնի ուժգին և միջին ազդեցությունը կրող մաթեմատիկայի ուսուցիչների աշխատանքի արդյունավետությունը եղել է բարձր, որն էլ արտացոլվել է նրանց աշակերտների հավաքած միջին միավորներում (դրանք եղել են ընդհանուր միջին միավորից բարձր):

Աշխատանքից գոհունակության գործոնի միջին ազդեցությունը կրող մաթեմատիկայի ուսուցիչների և ազդեցությունը չկրողների (44 %) աշակերտների միջին միավորները եղել են ընդհանուր միջին միավորից բարձր:

Ուսուցիչների աշխատանքի՝ ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորներով դրսևորված արդյունավետությունը, որն այս կամ այն չափով կրել է գլխավոր գործոնների ազդեցությունը, վիճակագրորեն նշանակալի լինելու առումով վարչատարած-

քային միավորներում և հանրակրթական ուսումնական հաստատություններում ունեցել է հետևյալ պատկերը:

Մաթեմատիկայի դեպքում երեք գործոնների ազդեցության աստիճանների հետ կապված բարձր միջին միավորներ են արձանագրվել վարչատարածքային բոլոր միավորներում, որտեղ վիճակագրորեն նշանակալի են եղել հիմնական դպրոցների ցուցանիշները: Փոխհարաբերությունների և աշխատանքից գոհունակության գործոնների պարագայում նշանակալի են եղել նաև միջնակարգ դպրոցների ցուցանիշները:

Հայոց լեզվի դեպքում ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա բնակության վայրի գործոնի ազդեցության աստիճանով պայմանավորված՝ միջինից բարձր ցուցանիշներ են արձանագրվել Երևանում և Շիրակի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Սյունիքի մարզերում, որտեղ վիճակագրորեն նշանակալի եղել են հիմնական դպրոցներում սովորողների միջին միավորները: Փոխհարաբերությունների գործոնի ազդեցությամբ պայմանավորված՝ ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշներ են դիտարկվել վարչատարածքային բոլոր միավորներում: Դրանցից վիճակագրորեն նշանակալի են եղել հիմնական, մասամբ՝ նաև միջնակարգ դպրոցներում սովորողների միջին միավորները:

Ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա ազդող երկրորդական գործոններից առանձին ուշադրություն է դարձվել նրանց մանկավարժական ստաժին և որակավորման տարակարգին:

Հայոց լեզվի ուսուցիչների 63.7 %-ը և հանրահաշվի ուսուցիչների 71.4 %-ը եղել են ավելի քան 20 տարվա մանկավարժական ստաժ ունեցողները: Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր միջին միավորներից ցածր են եղել 0-5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների և 0-10 տարվա ստաժ ունեցող մաթեմատիկայի ուսուցիչների դասավանդած դասարանների միջին միավորները:

## Երկրորդական գործոններ

Հարցման մասնակից 639 ուսուցիչներից 555-ը (86.8%-ը) տարակարգ ստանալու համար երբևէ դիմած չեն եղել, 42-ն (6.6%) ունեցել է առաջին տարակարգ, 2-ը (0.3%)՝ երկրորդ: Ուսուցիչներից 12-ը (1.9%) եղել են տարակարգի հավակնորդները, իսկ 28-ը (4.4%) հարցաթերթում տարակարգի վերաբերյալ նշում չի կատարել:

ՀՀ վարչատարածքային միավորներից տարակարգ ունեցողների համեմատաբար բարձր՝ 11 տոկոս է արձանագրվել Գեղարքունիքի և Լոռու մարզերում: Տարակարգ ունեցողներ կամ տարակարգի համար դիմածներ (հավակնորդներ) չեն եղել Արմավիրի մարզում: Երկրորդ տարակարգ ունեցող երկու ուսուցիչները եղել են Երևանից, իսկ տարակարգի հավակնորդները՝ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի մարզերից և Երևանից:

Առաջին տարակարգ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների դասավանդած դասարաններում ընդհանուր միջին միավորից բարձր է եղել միայն 6-10 տարվա մանկավարժական ստաժ ունեցողների աշակերտների միջին միավորը: Մաթեմատիկայի ուսուցիչների դեպքում բարձր է եղել 11-15 տարվա ստաժի խմբի ցուցանիշը:

Երկրորդ տարակարգ ունեցող երկու ուսուցիչներն ունեն ավելի քան 20 տարվա մանկավարժական ստաժ, և նրանց աշակերտների հավաքած միջին միավորները նույնպես բարձր են եղել ընդհանուր միջին միավորից:

Ընդհանուր միջին միավորից բարձր են եղել առաջին տարակարգի հավակնորդ հայոց լեզվի բոլոր ուսուցիչների աշակերտների միջին միավորները: Հանրահաշվի ընդհանուր միջին միավորից բարձր է եղել տարակարգի հավակնորդ մաթեմատիկայի ուսուցիչներից ավելի քան 20 տարվա ստաժ ունեցողների աշակերտների միջին միավորը:

Տարակարգ ստանալու համար երբևէ չդիմած ուսուցիչների խմբում հայոց լեզվից և հանրահաշվից նրանց աշակերտների հավաքած միջին միավորները մոտ են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորին, որովհետև ուսուցիչների այդ խումբը կազմել է հարցման մասնակիցների գերակշիռ մասը:

**▪ Ուսուցիչների կարծիքով աշխատանքային գործունեության մեջ գնահատված լինելուն նպաստող հանգամանքները**

Աշխատանքային գործունեության մեջ ուսուցչի գնահատված լինելուն նպաստող հանգամանքների շարադրմամբ հարցման մասնակիցները հիմնականում բարձրացրել են աշակերտ-ուսուցիչ- դեկավարություն-հասարակություն փոխհարաբերությունների «առողջացման», ուսումնանյութական բազայի բարելավման, հանրակրթական պետական ծրագրի և պետական մակարդակով ուսուցիչների խրախուսման մեխանիզմների վերանայման կարևորությունն ընդգծող հարցեր:

**▪ Ուսուցիչների և նրանց աշակերտների հարցումների արդյունքների համադրմամբ վեր հանված տեղեկություններ**

Ուսուցիչների և աշակերտների հարցումներից ձևավորված փոփոխականների համադրմամբ վիճակագրորեն նշանակալի տեղեկություններ են վեր հանվել աշակերտների կողմից ուսուցչի մատուցած նոր նյութի ընկալման և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների կտրվածքով:

Հարցման մասնակիցների համակազմում ուսուցչի մատուցած նոր նյութը կրկին և մանրամասն ներկայացնելու կարիք հաճախ ունենում է աշակերտների 60 %-ը, որոնց մեծ մասը դասի ընթացքում ստեղծագործական մոտեցում ցուցաբերող ուսուցիչների աշակերտներն են, և հայոց լեզվից ու հանրահաշվից նրանց հավաքած միջին միավորները եղել են համապատասխան ընդհանուր միջին միավորից բարձր: Իսկ դասն անցկացնելիս ըստ իրավիճակի կողմնորոշվող ուսուցիչների աշակերտների միջին միավորները երկու առարկայի դեպքում էլ եղել են ընդհանուր միջինից ցածր:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների տեսանկյունից պարզվել է, որ հայոց լեզվի ուսուցիչների վերաբերմունքից գոհ է եղել նրանց աշակերտների 91 %-ը, մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից՝ 87 %-ը:

Աշակերտների գոհունակությունն անդրադարձել է նրանց առաջադիմության վրա:

Դպրոցում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն ունենալը, միջանձնային հարաբերությունները և աշխատանքային կարգապահությունը կարևորող ուսուցիչների այն աշակերտները, որոնք դասի ընթացքում ակտիվորեն պատասխանում են ուսուցիչների հարցերին, ունեցել են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորներ:

Միջին ակտիվություն ցուցաբերող աշակերտները միայն հանրահաշվից են ունեցել համեմատաբար բարձր միջին միավոր, այն էլ՝ միջանձնային հարաբերությունները կարևորող ուսուցիչների դասարաններում: Պասիվ աշակերտների միջին միավորները նշված բոլոր դեպքերում եղել են համապատասխան ընդհանուր միջին միավորից ցածր:

Աշակերտի վատ պահվածքի և անընդունելի կարծիքի դեպքում նրան հասկանալ փորձող և աշխատանքային գործունեությունից բավականություն ստացող ուսուցիչների դասավանդած դասարաններում միջին արդյունքները եղել են բարձր համապատասխան ընդհանուր միջին միավորից: Նույն իրավիճակներում անտարբերություն ցուցաբերող և չափազանց խստաբարո ուսուցիչների աշակերտների միջին միավորները եղել են բավական ցածր, սակայն դրանք եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի ցուցանիշներ:

Առաջիկա 2-3 տարիներին աշխատավարձի բարձրացում ակնկալող և աշխատանքի հետ կապված ոչինչ չակնկալող հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից գոհ աշակերտների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորից: Բարձր են եղել նաև որակավորման բարձրացում ակնկալող մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից գոհ աշակերտների միջին միավորները:

**▪ Աշակերտների առաջադիմության վիճակագրական կանխատեսումը**

Հարցման մասնակից ուսուցիչների տարակարգի, գործելաոճի, ակնկալիքների և աշխատանքից բավականություն ստանալու հետ կապված՝ կատարվել է աշակերտների առաջադիմության կանխատեսում, որով թեև ընդհանուր միջին միավորների նկատելի փոփոխություն չի արձանագրվել, սակայն վիճակագրորեն նշանակալի



որոշակի փոփոխություններ ուրվագծվել են ըստ վարչատարածքային միավորների, բնակավայրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Այսպես, որակավորման տարակարգի հետ կապված՝ հնարավոր է, որ ընդհանուր միջին միավորների աճ արձանագրվի Տավուշի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում: Միջին միավորների աճը վիճակագրորեն նշանակալի կարող է լինել փոքր քաղաքներում և գյուղերում, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններից՝ միջնակարգ դպրոցներում:

Ուսուցիչների գործելառճի հետ կապված՝ միջին միավորների աճ կարելի է ակնկալել, եթե փոխհարաբերություններում ավտորիտար կամ անտարբեր մոտեցում ունեցող ուսուցիչները ցուցաբերեն դեմոկրատական մոտեցում: Այդպիսի փոփոխություն կարող է լինել Շիրակի, Լոռու, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի մարզերում:

Հայոց լեզվից միավորների աճը վիճակագրորեն նշանակալի կարող է լինել փոքր քաղաքներում և գյուղերում, հանրահաշվից՝ միայն գյուղերում: Այն նշանակալի կլինի միջնակարգ դպրոցներում:

Առաջիկա 2-3 տարիներին ուսուցիչների ակնկալիքների (աշխատավարձի բարձրացում, որակավորման տարակարգի ստացում) իրականացման հետ կապված՝ հաշվարկվել է, որ դրանք ավելի շատ կարող են ազդել հայոց լեզվի ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Մաթեմատիկայի ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա կարող է դրական ազդեցություն ունենալ աշխատանքային սերտ համագործակցությունը: Այս կանխատեսմամբ Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում հնարավոր կլինի արձանագրել առաջադիմության բարձրացում, որը վիճակագրորեն նշանակալի կլինի գյուղերում, հետևաբար՝ միջնակարգ դպրոցներում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ

1. 2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացված հարցման էլեկտրոնային տվյալների բազա:
2. Նույն ժամանակահատվածում և նույն ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում հայոց լեզվից և հանրահաշիվից անցկացված արտաքին ընթացիկ գնահատման էլեկտրոնային տվյալների բազաներ:
3. Նույն արտաքին գնահատմանը մասնակցած աշակերտների հարցման էլեկտրոնային տվյալների բազա:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

1. **Ձեր սեռը**  արական  իգական
2. **Մանկավարժական ստաժը**  0-5 տարի  6-10 տարի  11-15 տարի  16-20 տարի  21 տ. և ավելի
3. **Ձեր դասավանդած առարկան**  հայոց լեզու  մաթեմատիկա
4. **Ձեր դասավանդած դասարանը** 9
5. **Ի՞նչ տարակարգ ունեք** I  II  III  IV  դիմել եմ, բայց դեռ չեմ ստացել  չեմ դիմել
6. **Ես նախընտրում եմ աշխատել այնպիսի դեկավարի հետ, որը** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
  - աշխատանքային գործընթացում կարևորում է ստեղծարարությունը
  - չի խոչընդոտում ուսուցչի գործունեությանը
  - տալիս է հստակ և օգտակար հրահանգներ:
7. **Հիմնականում ինչպե՞ս եք անցկացնում դասը** (նշե՛ք միայն մեկ վանդակ):
  - Կողմնորոշվում եմ ըստ իրավիճակի:
  - Տվյալ պահին նախընտրում եմ ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:
  - Հավատարիմ եմ մնում իմ կազմած դասապլանին:
8. **Երբ տեսնում եմ, որ աշակերտը փորձում է ցուցադրաբար վատ վերաբերմունք դրսևորել իմ նկատմամբ** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
  - Ես փորձում եմ հասկանալ պատճառը
  - ցույց եմ տալիս, որ չեմ նկատել
  - պատասխանում եմ նույն կերպ:
9. **Եթե աշակերտը կարծիք է հայտնում, որն ընդունելի չէ ինձ համար** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
  - Ես փորձում եմ հասկանալ իր տեսակետը
  - փորձում եմ խոսակցությունը փոխել
  - պնդում եմ իմ կարծիքը և բացատրում իր սխալը:

10. **Ըստ Ձեզ՝ ուսումնական հաստատությունում ո՞րն է ամենակարևորը** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
- ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցում: ցուցաբերելու հնարավորություն ունենալը:
  - միջանձնային լավ հարաբերությունները:
  - աշխատանքային կարգապահությունը:
11. **Ձեր կարծիքով չնախատեսված իրավիճակներում նախընտրելի է** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
- տվյալ իրավիճակն օգտագործել արդյունավետ:
  - պարզապես շրջանցել այն:
  - փորձել վերացնել ստեղծված իրավիճակը:
12. **Ինչպե՞ս եք վերաբերվում տնօրինության այն պահանջներին, որոնք Ձեզ դուր չեն գալիս կամ թվում են անհիմն** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
- Ես հայտնում եմ իմ անհամաձայնությունը:
  - Կախված է իրավիճակից:
  - Ես անխտիր կատարում եմ տնօրինության ներկայացրած պահանջները:
13. **Նախապատվություն տալի՞ս եք այնպիսի աշխատանքին, որը ենթադրում է համագործակցություն այլ մարդկանց հետ** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
- Հիմնականում այո:
  - Երբեմն:
  - Հիմնականում ոչ:
14. **Մոտակա 2-3 տարում ի՞նչ ակնկալիքներ ունեք** (նշե՛ք միայն մեկ վանդակ)
- Աշխատավարձի բարձրացում:
  - Մանկավարժական որակավորման բարձրացում:
  - Ներկայիս աշխատանքի հետ կապված՝ ոչ մի:
15. **Աշխատանքային գործունեության մեջ մեծ բավականություն եմ ստանում** (նշե՛ք միայն մեկ վանդակ)՝ **արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները:**
- աշխատանքս գնահատվելուց:
  - աշխատանքիցս գոհ լինելուց:
  - ընկերական միջավայրում գտնվելուց:
16. **Ըստ ցանկության նշեք մինչև 3 հանգամանք, որոնք Ձեզ հնարավորություն կտան ավելի գնահատված զգալու Ձեր աշխատանքային գործունեության մեջ:**

**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՍՏ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՀԱՐՑԵՐԻ**

Բոլոր աղյուսակների տվյալները հաշվարկված են հարցաթերթում դասավանդած առարկան հստակորեն նշած հայոց լեզվի 328 և մաթեմատիկայի 311 ուսուցիչների պատասխանների և արտաքին գնահատմանը մասնակցած նրանց աշակերտների հավաքած միավորների հիման վրա:

**Հավելված 2.1. Մեռը**

Ձեր սեռը								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Արական	2	0.6	4.94	1.765	24	7.7	4.17	1.668
Բզական	320	97.6	4.77	1.632	283	91.0	4.42	1.512
Նշում չկա	6	1.8	4.44	1.550	4	1.3	4.13	1.412
Ընդհանուր տվյալներ	328	100	4.74	1.629	311	100	4.41	1.542

**Հավելված 2.2. Մանկավարժական ստաժը**

Մանկավարժական ստաժը (տարի)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
0-5	32	9.8	4.57	1.546	23	7.4	4.08	1.458
6-10	21	6.4	4.89	1.649	21	6.8	4.29	1.703
11-15	27	8.2	4.83	1.570	15	4.8	4.48	1.613
16-20	36	11.0	4.78	1.593	22	7.1	4.49	1.544
21 և ավելի	209	63.7	4.75	1.652	222	71.4	4.42	1.507
Նշում չկա	3	0.9	5.33	1.847	8	2.6	4.57	1.400

**Հավելված 2.3. Դասավանդած առարկան**

Ձեր դասավանդած առարկան					Արտաքին ընթացիկ գնահատման	
Պատասխանները	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ընդհանուր միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը				
<b>Հայոց լեզու</b>	328	49.3	4.76	1.632	4.74	1.629
<b>Հանրահաշիվ</b>	311	46.8	4.40	1.524	4.41	1.542
Նշում չկա	26	3.9				

**Հավելված 2.4. Դասավանդած դասարանը**

Ձեր դասավանդած դասարանը								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
9 <sup>ա</sup>	220	67.1	4.63	1.619	208	66.9	4.35	1.486
9 <sup>բ</sup>	72	22.0	4.97	1.667	76	24.4	4.44	1.570
9 <sup>գ</sup>	23	7.0	4.97	1.599	16	5.2	4.62	1.529
9 <sup>դ</sup>	9	2.7	5.07	1.459	9	2.9	4.80	1.785
9 <sup>ե</sup>	2	0.6	5.00	1.732	1	0.3	4.53	1.467
Նշում չկա	2	0.6	4.33	1.093	1	0.3	3.26	1.098

**Հավելված 2.5. Տարակարգը**

Ի՞նչ տարակարգ ունեք								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Առաջին	27	8.2	5.30	1.430	15	4.8	4.55	1.571
Երկրորդ					2	0.6	5.11	1.392
Դիմել եմ, բայց դեռ չեմ ստացել	7	2.1	4.75	1.637	5	1.6	4.59	1.553
Չեմ դիմել	280	85.4	4.90	1.663	275	88.4	4.37	1.508
Նշում չկա	14	4.3	4.46	1.595	14	4.5	4.44	1.714

**Հավելված 2.6. Նախընտրելի դեկավարը**

Ես նախընտրում եմ աշխատել այնպիսի դեկավարի հետ, որը (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Աշխատանքում կարևորում է ստեղծարարությունը	123	37.5	4.79	1.617	90	28.9	4.47	1.554
Չի խոչընդոտում ուսուցչի գործունեությանը	131	39.9	4.80	1.652	103	33.1	4.44	1.500
Տալիս է հստակ և օգտակար հրահանգներ	68	20.7	4.57	1.578	113	36.3	4.31	1.520
Նշում չկա	3	0.9	5.16	1.944	3	1.0	3.96	1.383
Մեկից ավելի նշումներ	3	0.9	5.44	1.809	2	0.6	4.30	1.579

**Հավելված 2.7. Դասապրոցեսի անցկացման նախընտրելի ձևը**

Հիմնականում ինչպե՞ս էր անցկացնում դասը (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Կողմնորոշվում եմ ըստ իրավիճակի	81	24.7	4.64	1.609	126	40.5	4.38	1.530
Նախընտրում եմ ցուցաբերել ստեղծագործական մոտեցում	221	67.4	4.81	1.626	150	48.2	4.45	1.510
Հավատարիմ եմ մնում իմ կազմած դասապլանին	22	6.7	4.68	1.687	32	10.3	4.26	1.543
Նշում չկա	1	0.3	4.63	1.499	1	0.3	5.00	1.633
Մեկից ավելի նշումներ	3	0.9	4.63	2.121	2	0.6	3.96	1.708

**Հավելված 2.8. Վերաբերմունքը վատ վարքով աշակերտների նկատմամբ**

Երբ տեսնում եմ, որ աշակերտը փորձում է ցուցադրաբար վատ վերաբերմունք դրսևորել իմ նկատմամբ (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Ես փորձում եմ հասկանալ պատճառը	286	87.2	4.77	1.633	276	88.7	4.42	1.529
Ցույց եմ տալիս, որ չեմ նկատել	40	12.2	4.65	1.616	32	10.3	4.27	1.466
Պատասխանում եմ նույն կերպ					1	0.3	4.00	2.000
Նշում չկա	2	0.6	5.14	1.827	1	0.3	4.69	1.500

**Հավելված 2.9. Վերաբերմունքը աշակերտի անընդունելի կարծիքի նկատմամբ**

Եթե աշակերտը կարծիք է հայտնում, որն ընդունելի չէ ինձ համար (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Փորձում եմ հասկանալ իր տեսակետը	310	94.5	4.76	1.629	259	83.3	4.43	1.531
Փորձում եմ փոխել խոսակցությունը	3	0.9	5.11	1.565	4	1.3	4.15	1.296
Պնդում եմ իմ կարծիքը և բացատրում իր սխալը	15	4.6	4.62	1.707	46	14.8	4.25	1.490
Նշում չկա					2	0.6	4.69	1.500

**Հավելված 2.10. Ամենակարևորը ուսումնական հաստատությունում**

Ըստ Ձեզ ուսումնական հաստատությունում ո՞րն է ամենակարևորը (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն ունենալը	153	46.6	4.77	1.628	160	51.4	4.42	1.520
Միջանձնային լավ հարաբերությունները	42	12.8	4.66	1.577	25	8.0	4.32	1.578
Աշխատանքային կարգապահությունը	126	38.4	4.75	1.645	123	39.5	4.39	1.517
Նշում չկա	3	0.9	4.82	1.522	3	1.0	4.30	1.522
Մեկից ավելի նշումներ	4	1.2	5.63	1.793				

**Հավելված 2.11. Նախընտրելին չնախատեսված իրավիճակներում**

Ձեր կարծիքով չնախատեսված իրավիճակներում նախընտրելի է (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Իրավիճակն օգտագործել արդյունավետ	240	73.2	4.78	1.635	230	74.0	4.45	1.522
Պարզապես շրջանցել այն	4	1.2	4.86	1.583	7	2.3	4.07	1.490
Փորձել վերացնել ստեղծված իրավիճակը	81	24.7	4.70	1.635	69	22.2	4.28	1.525
Նշում չկա	3	0.9	4.51	1.425	4	1.3	4.33	1.418
Մեկից ավելի նշումներ					1	0.3	3.71	1.553

**Հավելված 2.12. Վերաբերմունքը տնօրինության ներկայացրած ոչ հաճելի պահանջների նկատմամբ**

Ինչպե՞ս եք վերաբերվում տնօրինության այն պահանջներին, որոնք Ձեզ դուր չեն գալիս կամ թվում են անհիմն (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Ես հայտնում եմ իմ անհամաձայնությունը	140	42.7	4.69	1.642	126	40.5	4.36	1.523
Կախված է իրավիճակից	154	47.0	4.83	1.622	160	51.4	4.45	1.518
Անխտիր ատարում եմ տնօրինության ներկայացրած պահանջները	33	10.1	4.68	1.640	21	6.8	4.24	1.591
Նշում չկա	1	0.3	4.36	1.342	4	1.3	4.22	1.315

**Հավելված 2.13. Վերաբերմունքը համագործակցային աշխատանքի նկատմամբ**

Նախապատվություն տալի՞ս եք այնպիսի աշխատանքին, որը ենթադրում է համագործակցություն այլ մարդկանց հետ (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Հիմնականում այո	152	46.3	4.75	1.637	130	41.8	4.26	1.524
Երբեմն	160	48.8	4.76	1.631	162	52.1	4.53	1.525
Հիմնականում ոչ	12	3.7	5.01	1.640	12	3.9	3.89	1.322
Նշում չկա	4	1.2	4.59	1.472	7	2.3	4.38	1.400



**Հավելված 2.14. Ակնկալիքները**

Մոտակա 2-3 տարում ի՞նչ ակնկալիքներ ունեք (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Աշխատավարձի բարձրացում	152	46.3	4.86	1.646	157	50.5	4.40	1.543
Մանկավարժական որակավորման բարձրացում	138	42.1	4.59	1.590	119	38.3	4.40	1.524
Ներկայիս աշխատանքի հետ կապված՝ ոչ մի	32	9.8	4.95	1.690	28	9.0	4.39	1.406
Նշում չկա	5	1.5	4.91	1.642	7	2.3	4.56	1.494
Մեկից ավելի նշումներ	1	0.3	5.23	1.142				

**Հավելված 2.15. Աշխատանքից բավականություն ստանալը**

Աշխատանքային գործունեության մեջ մեծ բավականություն եմ ստանում (նշե՛ք միայն մեկ վանդակ)								
Պատասխանները	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ուսուցիչների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը		
Աշխատանքը գնահատվելուց	95	29.0	4.59	1.554	116	37.3	4.42	1.519
Աշխատանքիցս գոհ լինելուց	231	70.4	4.82	1.655	192	61.7	4.40	1.526
Ընկերական միջավայրում գտնվելուց					1	0.3	3.13	1.544
Նշում չկա	2	0.6	5.13	1.734	2	0.6	3.78	1.544

---

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների  
բաժնի գլխավոր մասնագետ

## 2019 թ. հայազիտական առարկաներից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 137 հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից անցկացվել է ազգային ստուգատես: Ստուգատեսի նպատակն է եղել պարզել հայազիտական առարկաներից հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը և դրանց ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները:

## Համառոտ ակնարկ

Արտաքին գնահատման մեջ կարևոր դեր ու նշանակություն ունեն ազգային և միջազգային ստուգատեսները: Եթե միջազգային ստուգատեսներն անցկացվում են մասնակից երկրների կրթության մակարդակը պարզելու և այլ երկրների կրթական մակարդակների հետ այն համեմատելու համար, ապա ազգային ստուգատեսներն անցկացվում են երկրի կրթական ոլորտում եղած խնդիրների բացահայտման, կրթական տարբեր մակարդակների ու խմբերի ուսման որակի հետազոտման նպատակով: Ստուգատեսների թեստերը կազմվում են իրական կյանքում հանդիպող իրավիճակներին համապատասխան խնդիրներից՝ ի տարբերություն հայ աշակերտներին ծանոթ թեստերի, որոնք կազմվում են գուտ գործող առարկայական ծրագրերի շրջանակներում և առանձնանում են իրենց ոճով ու բնույթով: 2010 թվականից Հայաստանի Հանրապետությունում ամեն տարի անցկացվում է ազգային ստուգատես ուսումնական տարբեր բնագավառներից՝ հայագիտական (ՀԱԱՍ), բնագիտական (ԲԱԱՍ) առարկաներից կամ օտար լեզուներից (ՕԼԱՍ): 2019 թվականին ազգային ստուգատեսն անցկացվել է հայագիտական առարկաներից: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թեստ-գրքույկների առաջադրանքները և՛ ձևակերպման, և՛ բովանդակության առումով եղել են գրավիչ ու հետաքրքիր:

## ՀԱԱՍ-ի կազմակերպումը

Հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսը անցկացվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի աշխատակիցների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են ստուգատեսի ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

## Ընտրանքը

Ազգային ստուգատեսին մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում գտնվող 1 վարժարանի, 87 միջնակարգ և 49 հիմնական դպրոցների 8-րդ դասարանի 3362 աշակերտներ:

## Թեստերի կառուցվածքը

Թեստ-գրքույկը բաղկացած է եղել երեք մասից. 1-ին և 2-րդ մասերում ներկայացված առաջադրանքները եղել են հայոց լեզվից, հայ գրականությունից և հայոց պատմությունից: Յուրաքանչյուր մասի կատարմանը հատկացվել է 45 րոպե: Գրքույկի 3-րդ մասում տրվել են աշակերտի նախասիրությունների, դպրոցի մասին և այլ հարցեր: Այս հարցաշարի լրացման համար աշակերտներին հատկացվել է լրացուցիչ 15 րոպե:

## Նպատակը

ՀԱԱՍ – 2019-ի նպատակն է եղել պարզել հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի աշակերտների ունակությունները հայագիտական առարկաներից հետևյալ ուղղություններով.

- **գիտելիք** – բացահայտվում է երևույթների և փաստերի իմացությունը,
- **կիրառություն** – գիտելիքը ծանոթ իրավիճակում օգտագործելու ունակությունը,
- **արժևորում** – գիտելիքը անծանոթ իրավիճակում օգտագործելու հմտությունը:

## ՀԱԱՍ-ի արդյունքների վերլուծությունը

Հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի արդյունքների և հարցաթերթի վերլուծությունը կատարվել է հետևյալ հիմնական ուղղություններով:

- **ընդհանուր** վերլուծություն, որտեղ ներկայացվել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի

քաններում անցկացված ազգային ստուգատեսի ընդհանուր արդյունքները,

➤ **առարկայական վերլուծություն**, որտեղ ներկայացվել է թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների և թեստերում ընդգրկված բաժինների (տրամադրվել է առարկայական մասնագետներին),

➤ **երկրորդային վերլուծություն**, որտեղ ներկայացվել են ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ, ներկայացվել են նաև առաջադիմության վրա ազդող գործոնները:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱԱՍ-ի թեստերի առաջադրանքները


Ազգային ստուգատեսի ընթացքում օգտագործվել է թեստերի 4 տարբերակ: Յուրաքանչյուր թեստ բաղկացած է եղել 50 առաջադրանքից, որից 25-ը՝ հայոց լեզվից և հայ գրականությունից, 25-ը՝ հայոց պատմությունից: Առաջադրանքներից 16-ը եղել է ընտրովի պատասխանով, 9-ը՝ կարճ պատասխանով: Կարճ պատասխանով առաջադրանքները կատարելու համար սովորողից պահանջվել է կատարել մեկ կամ երկու գործողություն: Ընտրովի պատասխանով և մեկ գործողություն պահանջող կարճ պատասխանով 5 առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով (համապատասխանաբար՝ սխալ կամ ճիշտ կատարման դեպքում), իսկ երկու գործողություն պահանջող 4 առաջադրանքները գնահատվել են 0, 1 կամ 2 միավորով (համապատասխանաբար՝ սխալ, մասնակի ճիշտ կամ ճիշտ կատարման դեպքում): Այսպիսով, ստուգատեսի թեստերից հնարավոր է եղել վաստակել առավելագույնը 58 միավոր, 29-ը՝ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներից, 29-ը՝ «Հայոց պատմություն» առարկայից:

## 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


### 2.1. Միավորների բաշխման հիստոգրամները

Միավորների բաշխման հիստոգրամը սյունների հաջորդականություն է: Սյուններից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Սյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):

Հայոց լեզու և հայ գրականություն



Հայոց պատմություն




Միավորների բաշխման հիստոգրամներում տեսնում ենք, որ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դեպքում միավորների բաշխման կորը համաչափ է, իսկ «Հայոց պատմություն»


առարկայի դեպքում միավորների բաշխման կորը շեղված է դեպի ցածր միավորները: Միավորների բաշխման կորերից և միջին միավորներից կարելի է եզրակացնել, որ հայոց պատմության թեստերը տվյալ ընտրանքի համար ավելի բարդ են եղել:

Միավորների բաշխման հիստոգրամները արդյունքների սանդղակավորումից հետո:

Հայոց լեզու և հայ գրականություն



Հայոց պատմություն



## 2.2. Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 1

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը <sup>1</sup>	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը) <sup>2</sup>	Հուսալիությունը <sup>3</sup>
Հայոց լեզու, հայ գրականություն	3362	5.38	0.032	1.854	0.83
Հայոց պատմություն		4.16	0.026	1.513	0.78

<sup>1</sup> Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:


<sup>2</sup> 10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1.5-ից:

<sup>3</sup> Հուսալիության գործակիցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

### 2.3. Միավորների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Սույն վերլուծության մեջ միավորները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի (1-3, 4-5, 6-8 և 9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 1



### 3. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ

Ինչպես նշվել է ներածությունում, աշակերտների ունակությունները ստուգվել են ըստ ունակային երեք տիրույթների.

- Գիտելիք ստուգող են համարվում այն առաջադրանքները, որոնցում բացահայտվում է երևույթների և փաստերի իմացությունը:
- Կիրառություն ստուգող են համարվում այն առաջադրանքները, որոնց միջոցով պարզվում է աշակերտի գիտելիքը ծանոթ իրավիճակում օգտագործելու ունակությունը:



- Արժևորում ստուգող առաջադրանքները ի հայտ են բերում աշակերտի՝ գիտելիքը անձանոթ իրավիճակում կիրառելու հմտությունը:

Աղյուսակ 2-ում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են թեստերի առաջադրանքների տոկոսային թվերը՝ ըստ ունակային տիրույթների:

Աղյուսակ 2

Առարկան	Ունակային տիրույթների առաջադրանքների տոկոսային թվերը			Առավելագույն միավորը
	Գիտելիք	Կիրառություն	Արժևորում	
Հայոց լեզու, հայ գրականություն	40.5 %	36.2 %	23.3 %	116
Հայոց պատմություն	62.9 %	22.4 %	14.7 %	116

Թեստերի 4 տարբերակներում առաջադրանքները չեն կրկնվել, յուրաքանչյուր առարկայի համար օգտագործված 100 առաջադրանքները գնահատվել են առավելագույնը 116 միավորով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայի համար ունակային տիրույթների առաջադրանքների առավելագույն միավորը և տվյալ ունակային տիրույթի առաջադրանքների բարդությունը:

Աղյուսակ 3

Ունակային տիրույթները	Հայոց լեզու, հայ գրականություն		Հայոց պատմություն	
	Առավելագույն միավորը	Բարդությունը	Առավելագույն միավորը	Բարդությունը
Ընդհանուր թեստը	116	0.48	116	0.33
Գիտելիք	47	0.51	73	0.30
Կիրառություն	42	0.47	26	0.43
Արժևորում	27	0.46	17	0.29

Ի տարբերություն «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների, որոնց դեպքում աշակերտները լավ արդյունքներ են ցուցաբերել թե՛ գիտելիք, թե՛ կիրառություն և թե՛ արժևորում ստուգող առաջադրանքներում, «Հայոց պատմություն» առարկայի դեպքում աշակերտները լավ արդյունքներ են ցուցաբերել կիրառություն ստուգող առաջադրանքները կատարելիս, որը կարելի է բացատրել աշակերտների գիտելիքների ձեռքբերմամբ՝ ֆիլմերից, գեղարվեստական գրքերից և այլ աղբյուրներից:

#### 4. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՌՆԵՐԻ


Մասնակիցների 49.5 տոկոսը աղջիկներ են եղել, 50.5 տոկոսը՝ տղաներ: Աղյուսակ 4-ում ներկայացված են նշված առարկաներից մասնակիցների միջին միավորները և ստանդարտ շեղումները (ըստ սեռերի):

Աղյուսակ 4

Առարկան	Տղաներ		Աղջիկներ	
	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու, հայ գրականություն	4.87	1.835	5.89	1.728
Հայոց պատմություն	4.00	1.504	4.33	1.527

Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներից աղջիկների միջին միավորը բարձր է տղաների միջին միավորից 1 միավորով, «Հայոց պատմություն» առարկայից՝ 0.33 միավորով:

Ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները. հայոց լեզվից և հայ գրականությունից գերակշռում են տղաների ցածր միավորները, աղջիկների՝ բարձր միավորները, հայոց պատմությունից գերակշռում են և՛ աղջիկների, և՛ տղաների ցածր միավորները:




## 5. ՀԱԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային միավորների արդյունքների վիճակագրական տվյալներն ըստ առարկաների: Մզեցված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Վարչատարածքային միավորը	Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	0 – 3 միավորներ հավաքած մասնակիցների ստիկոսը	4 – 5 միավորներ հավաքած մասնակիցների ստիկոսը	6 – 8 միավորներ հավաքած մասնակիցների ստիկոսը	9 – 10 միավորներ հավաքած մասնակիցների ստիկոսը
Երևան	Հայոց լեզու, հայ գրականություն	596	5.65	12,9	30,5	54,1	2,5
	Հայոց պատմություն		4.23	31,4	50,5	17,4	0,7
Արագածոտն	Հայոց լեզու, հայ գրականություն	150	4.99	27,3	34,6	34,7	3,3
	Հայոց պատմություն		3.74	48,7	38,7	12,7	-
Արարատ	Հայոց լեզու, հայ գրականություն	233	4.92	25,3	34,3	40,0	0,4
	Հայոց պատմություն		4.11	36,1	46,8	17,2	-
Արմավիր	Հայոց լեզու, հայ գրականություն	239	4.87	31,8	27,6	40,1	0,5
	Հայոց պատմություն		3.77	46,9	40,2	12,9	-
Գեղարքունիք	Հայոց լեզու, հայ գրականություն	409	5.61	16,1	28,8	51,2	3,9
	Հայոց պատմություն		4.68	26,2	43,3	28,8	1,7
Լոռի	Հայոց լեզու, հայ գրականություն	355	5.50	18,6	30,1	46,8	4,5
	Հայոց պատմություն		4.25	35,8	43,3	19,2	1,7
Վոտայք	Հայոց լեզու, հայ գրականություն	249	5.36	18,5	33,0	45,4	3,1
	Հայոց պատմություն		4.11	36,9	43,8	19,3	-
Շիրակ	Հայոց լեզու, հայ գրականություն	354	5.02	22,6	38,4	37	2
	Հայոց պատմություն		3.82	41,5	47,8	10,7	-
Սյունիք	Հայոց լեզու, հայ գրականություն	382	5.73	11,8	32,8	51,8	3,7
	Հայոց պատմություն		4.25	34,0	44,0	21,4	0,6
Վայոց ձոր	Հայոց լեզու, հայ գրականություն	128	5.14	21,1	35,2	43,7	-
	Հայոց պատմություն		3.86	39,8	50,0	10,2	-
Տավուշ	Հայոց լեզու, հայ գրականություն	207	5.31	19,3	35,8	43,0	1,9
	Հայոց պատմություն		4.28	36,7	42,0	20,8	0,5

Ըստ վարչատարածքային միավորների աշակերտների միջին միավորների համեմատությունն ավելի ակնառու է դիագրամ 2-ում:


Դիագրամ 2



Դիագրամում տեսնում ենք, որ երկու առարկաներից էլ լավագույն արդյունքները ցուցաբերել են Երևանում, Գեղարքունիքում, Սյունիքում, Լոռիում: Ցածր արդյունքներ են գրանցվել Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում:

## 6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսին մասնակցած 137 հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների 51.4 տոկոսը հիմնական դպրոցների, 47.8 տոկոսը միջնակարգ դպրոցների և 0.8 տոկոսը վարժարանների աշակերտներ են:



Դիագրամում տեսնում ենք, որ երկու առարկաների դեպքում էլ ցածր արդյունքներ ցուցաբերել են միջնակարգ դպրոցների աշակերտները:

## 7. ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսին մասնակցել են Հայաստանի Հանրապետության 137 հանրակրթական ուսումնական հաստատությունների 3673 աշակերտներ: Ուսումնական հաստատություններից 64-ը հայոց լեզվից և հայ գրականությունից, 61-ը հայոց պատմությունից գրանցել են ընտրանքի ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավոր: Հետևյալ աղյուսակում ներկայացված են լավագույն 10 ուսումնական հաստատությունները, որոնք երկու առարկաներից էլ ցուցաբերել են բարձր արդյունքներ:

	Վարչատարածքային միավորը	Ուսումնական հաստատությունները	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
				Հայոց Լեզու, հայ գրակ.	Հայոց պատմություն
1	Սյունիք	Գորայքի միջն. դպրոց	4	7,75	6,75
2	Սյունիք	Մառնակունքի միջն. դպր.	3	7,33	6,33
3	Տավուշ	Արճիսի միջն. դպրոց	5	6,80	5,40
4	Սյունիք	Սյունիքի միջն. դպրոց	7	6,57	5,57
5	Գեղարքունիք	Սևանի թիվ 5 միջն. դպրոց	10	6,70	6,80
6	Գեղարքունիք	Սևանի թիվ 4 հիմն. դպրոց	26	5,96	6,23
7	Տավուշ	Վազաշենի միջն. դպրոց	6	6,50	5,67
8	Գեղարքունիք	Վարդենիսի թիվ 3 հիմն. դպրոց	59	6,42	5,73
9	Լոռի	Լեոնապատի միջն. դպրոց	20	6,40	6,20
10	Երևան	Երևանի թիվ 45 հիմն. դպր.	70	6,33	5,06


Աղյուսակի տվյալներից երևում է, որ, չնայած «Հայոց պատմություն» առարկայից ընդհանուր ցածր միջին միավորին, շատ դպրոցներ գրանցել են բավականին բարձր արդյունքներ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ միջին միավորների ցածր լինելը պայմանավորված է ոչ թե թեստի բարդությամբ, այլ աշակերտների ոչ պատշաճ պատրաստվածությամբ:

## 8. ՄՏՈՒԳԱՏԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ


### ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Դիագրամ 4-ում ներկայացված է ստուգատեսի մասնակիցների ընտրանքն ըստ բնակավայրերի տիպերի:

Դիագրամ 4



Դիագրամ 5



Դիագրամ 5-ում տեսնում ենք, որ այս տարիքում բոլոր տիպի բնակավայրերում էլ հայոց լեզվին և հայ գրականությանը ավելի լավ են տիրապետում, քան հայոց պատմությանը: Քաղաքային բնակավայրերի աշակերտների արդյունքներն ավելի բարձր են, քան գյուղական բնակավայրերի աշակերտներինը:



## 9. ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեստ-գրքույկի 3-րդ մասում 8-րդ դասարանի աշակերտներին տրվել են հարցեր հետևյալ բաժիններից.

- Քո մասին,
- Ձեր դպրոցը,
- Հայոց լեզուն ձեր դպրոցում,
- Հայոց պատմությունը ձեր դպրոցում:

«Քո մասին» բաժնում աշակերտներին տրվել է հրահանգ՝ 10 համարակալված շրջանակներից ընտրել որևէ մեկը: Սա դիագնոստիկ գործիք է, որն իրենից ներկայացնում է սիմվոլային պրոյեկտիվ թեստ՝ ուղղված չափելու ինքնավերաբերմունքը և ինքնանույնականացումը: Այս մեթոդիկան մշակողները ելել են այն ենթադրությունից, որ ֆիզիկական տարածությունը, որը կա թղթի վրա եղած համարակալումների միջև, խորհրդանշում է «ես»-ը, և նշանակալի է, թե որքանով է արժևորվում սեփական «ես»-ը: Ընտրված թիվը որքան ձախ է գտնվում, այնքան սեփական «ես»-ի կարևորությունը մեծ է:

Աղյուսակ 7

Աշակերտի ինքնագնահատականը	Աշակերտ- ների տոկոսը	Միջին միավորը	
		Հայոց լեզու, հայ գրականություն	Հայոց պատմություն
շատ բարձր ինքնագնահատական	9.5	5.15	4.0
բարձր ինքնագնահատական	6.1	5.47	4.2
նորմալ ինքնագնահատական	28.1	5.44	4.25
ցածր ինքնագնահատական	40.4	5.48	4.39
շատ ցածր ինքնագնահատական	11.1	5.26	4.08
չեն պատասխանել	4.7	4.24	3.56

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ աշակերտների 40.4 տոկոսն ունի ցածր ինքնագնահատական: Երեք առարկաներից էլ բարձր արդյունքներ են գրանցել ցածր ինքնագնահատական ունեցող աշակերտները, ցածր արդյունքներ՝ չպատասխանած աշակերտները:

«Ձեր դպրոցը» բաժնի «*Հետևյալներից ո՞րը կուզեիր, որ փոխվեր կամ բարելավվեր*» հարցին աշակերտների պատասխանների տոկոսային թվերը և միջին միավորները ներկայացված են աղյուսակ 8–ում: Աշակերտներին հնարավոր յոթից թույլատրվել է նշել մինչև երեք տարբերակ:

Աղյուսակ 8

	1-ին տարբերակ		2-րդ տարբերակ		3-րդ տարբերակ	
	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը
Դասավանդման որակ	22.7	5.28	0.18	5.14	0.64	5.85
Դասասենյակի ձևավորում	35.4	5.65	9.93	4.98	0.18	5.14
Դպրոցի շենքային պայմաններ	10.7	5.92	<b>19.11</b>	5.59	5.27	4.85
Դպրոցի նյութատեխնիկական ապահովվածություն	6.72	5.76	17.69	5.90	11.51	5.67
Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններ	3.18	5.17	10.24	5.72	8.15	5.52
Աշակերտների միջև փոխհարաբերություններ	1.70	<b>5.98</b>	8.00	5.85	11.45	5.71
Դասագրքերի նյութը	1.57	5.68	4.12	<b>5.95</b>	<b>23.62</b>	5.78
Այլ նշումներ	2.67	4.25	4.82	4.66	5.75	4.86
Չեն պատասխանել	15.3	4.63	25.92	4.86	33.43	5.07

Աղյուսակում տեսնում ենք, որ 1-ին տարբերակով աշակերտների 35.4 տոկոսի համար կարևոր է դասասենյակի ձևավորումը, 22.7 տոկոսի համար՝ դասավանդման որակը: Երկրորդ ընտրությամբ՝ 19.11 տոկոսը կարևորել է դպրոցի շենքային պայմանները, 17.69 տոկոսը՝ դպրոցի նյութատեխնիկական ապահովվածությունը: Երրորդ ընտրությամբ աշակերտների 23.6 տոկոսը կարևորել է դասագրքերի նյութի որակը:

*«Գրականության ինչպիսի՞ նյութն էս առավել հեշտ յուրացնում»*  
 հարցին աշակերտների տված պատասխանների տոկոսային թվերը ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

	Չեն պատասխանել		Միջին միավորը	Աշակերտների տոկոսը
	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը		
Համամիտ չեմ	Միջին միավորը	5.7	4.9	5.2
	Աշակերտների տոկոսը	13.9	6.2	11.1
Դժվարանում եմ պատասխանել	Միջին միավորը	5.5	4.9	5.4
	Աշակերտների տոկոսը	16.7	15.6	22.1
Համամիտ եմ	Միջին միավորը	5.4	5.7	5.6
	Աշակերտների տոկոսը	63.1	70.6	59.1
Բանաստեղծություն անգիր սովորել				4.2
Արձակ ստեղծագործություն կարդալ				4.1
Վերլուծել ստեղծագործությունը և բնութագրել կերպարներին				4.2

Փորձը ցույց է տալիս, որ շատ աշակերտների անգիր սովորելը հեշտ չի տրվում, սակայն աշակերտների 63.1 տոկոսը նշել է, որ հեշտ է անգիր սովորում: Արդյունքում նրանց միջին միավորը 0.3-ով ցածր է «համամիտ չեմ» պատասխանած 13.9 տոկոս աշակերտների միջին միավորից: Արձակ ստեղծագործություն կարդալը հեշտ է հարցված աշակերտների 70.6 տոկոսի համար, որոնց միջին միավորը, իրոք, բարձր է՝ 5.7: Աշակերտների 59.1 տոկոսին հեշտ է տրվում ստեղծագործությունը վերլուծելն ու կերպարներին բնութագրելը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշակերտներն անկեղծ են պատասխանել *«Որքա՞ն լավ ես տիրապետում հայոց լեզվի և հայոց պատմության հետևյալ բաժիններին»* հարցին: Երկու առարկանրից էլ ամենաբարձր միջին միավորները գրանցել են իրենց գիտելիքը գերազանց գնահատողները (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Հայոց լեզու	Գերազանց		Լավ		Բավարար		Վատ		Չեն պատասխանել	
	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը
Ուղղագրություն	12.7	6.3	45.1	6	32.6	4.7	2.7	3.9	7.0	3.9
Կետադրություն	7.6	5.9	47.0	5.9	34.3	5.1	3.4	4.3	7.7	3.9
Բառագիտություն	13.6	6.1	45.0	5.9	29.3	4.9	3.1	4	8.9	3.9
Խոսքի մասեր	19.6	6.2	39.2	5.8	29.8	4.8	3.0	4.4	8.4	3.9
Նախադասության անդամներ	22.8	6.2	38.6	5.8	27.4	4.8	3.6	4.2	7.6	3.9
Հայոց պատմություն										
Հին շրջան	11.2	4.5	36.8	4.5	36.5	3.8	3.9	3.6	11.6	3.6
Միջնադար	9.7	4.8	40.9	4.4	34.4	3.8	2.9	3.2	12.1	3.6
Նոր շրջան	18.2	4.6	38.6	4.4	28.1	3.7	3.1	3.3	12.0	3.6

*«Հայոց պատմության դասերը սովորելիս ի՞նչն ես առավել հեշտ ընկալում և մտապահում»* հարցին աշակերտների տված պատասխանների տոկոսային թվերը ներկայացված են աղյուսակ 11-ում:

	Համամիտ են		Դժվարանում են պատասխանել		Համամիտ չեն		Չեն պատասխանել	
	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը	Աշակերտների տոկոսը	Միջին միավորը
Պատմական իրադարձությունները	64.1	4.3	18.7	3.8	6	3.7	11.1	3.6
Տարեթվերը	36.3	4.1	31.4	4.1	19.8	4.2	12.4	3.6
Պատմական անձանց կյանքն ու գործունեությունը	52.8	4.3	25.6	3.9	9.5	4.0	12.1	3.5

Աղյուսակ 11-ում տեսնում ենք, որ աշակերտների 64.1 տոկոսը հեշտ է ընկալում և մտապահում պատմական իրադարձությունները, 52.8 տոկոսը՝ պատմական անձանց կյանքն ու գործունեությունը. նրանց միջին միավորները նշանակալի բարձր են այլ կարծիք արտահայտածների միջին միավորներից: Ինչպես նշվել է էջ 122-ում, այս գիտելիքները ձեռք են բերվում նաև տարբեր աղբյուրներից: Աշակերտների 36.3 տոկոսն է համամիտ, որ իրենք հեշտ են ընկալում և մտապահում տարեթվերը, սակայն նրանց միջին միավորը նշանակալորեն չի տարբերվում աշակերտների այն խմբերից, որոնք համամիտ չեն կամ դժվարացել են պատասխանել այդ հարցին:

## 10. ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱԱՍ-ի հարցաթերթերից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացվել է կորելյացիոն վերլուծություն: Վերլուծության արդյունքում որոշ հարցեր, որոնց կորելյացիայի գործակիցը մեծ կամ հավասար է 0.4-ի, միավորվել են, և ձևավորվել են նոր փոփոխականներ (ինդեքսներ): Հետագա վերլուծությունն ավելի պարզ դարձնելու նպատակով նոր փոփոխականներին տրվել են իմաստավորված անվանումներ: Ըստ էության դրանք գործոններ են, որոնք կապված են սովորողների առաջադիմության հետ և ինչ-որ չափով ազդում են դրա վրա: Հետևյալ աղյուսակներում «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաների համար ներկայացված են կորելյացիոն վերլուծության արդյունքում ստացված գլխավոր գործոնները:

Գործոնները	«Հայոց լեզու» առարկայի հարցաթերթի հարցերը	Կորելյացիայի գործակիցը
<b>Ուսուցչի արդյունավետ դասավանդում</b>	Ես հաճույքով եմ հայոց լեզու սովորում	0.60
	Հայոց լեզու իմանալը կարևոր է	0.62
	Հայոց լեզվի դասերի ժամանակ ես հաճախ եմ ձեռք բարձրացնում	0.51
	Հայոց լեզվի ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը	0.72
	Մեր դասարանի աշակերտները հայոց լեզվի դասին ակտիվորեն մասնակցում են	0.52
	Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը	0.74
	Իմ ուսուցիչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս	0.70
<b>Աշակերտի ակնկալիքները</b>	Ես խոսում եմ ծնողներիս հետ իմ դպրոցական կյանքի մասին	0.48
	Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում	0.50
	Ծնողներս համոզվում են, որ կատարում եմ տնային առաջադրանքներս	0.49
	Ես ուզում եմ, որ դասընկերներս լավ կարծիք ունենան իմ մասին	0.55
	Ես սիրում եմ լինել դպրոցում	0.51
	Ես ուզում եմ դասարանում լինել լավագույն աշակերտը	0.48
	Ինձ հաճելի է հաղթահարել ուսման գործընթացում առաջացող դժվարությունները	0.47
	Միրում եմ դասերը, որոնց ընթացքում կարելի է քննարկումներ անել	0.41

<b>Ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին</b>	Ծնողներս օգնում են ինձ՝ կատարելու տնային առաջադրանքները	0.53
	Հայոց լեզու սովորելը ինձ համար բարդ է	0.68
	Հայոց լեզվի դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում	0.74

Գործոնները	«Հայոց պատմություն» առարկայի հարցաթերթի հարցերը	Կորելյացիայի գործակիցը
<b>Ուսուցչի արդյունավետ դասավանդում</b>	Ես հաճույքով եմ հայոց պատմություն սովորում	0.72
	Հայոց պատմություն իմանալը կարևոր է	0.70
	Հայոց պատմության դասերի ժամանակ ես հաճախ եմ ձեռք բարձրացնում	0.66
	Հայոց պատմություն ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը	0.77
	Մեր դասարանի աշակերտները հայոց պատմության դասին ակտիվորեն մասնակցում են	0.64
	Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը	0.76
	Իմ ուսուցիչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս	0.74
<b>Աշակերտի ակնկալիքները</b>	Ես խոսում եմ ծնողներին հետ իմ դպրոցական կյանքի մասին	0.47
	Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում	0.45
	Ծնողներս համոզվում են, որ կատարում եմ տնային առաջադրանքներս	0.44
	Ես ուզում եմ, որ դասընկերներս լավ կարծիք ունենան իմ մասին	0.49
	Ես սիրում եմ լինել դպրոցում	0.58
	Ես ուզում եմ դասարանում լինել լավագույն աշակերտը	0.48
	Ինձ հաճելի է հաղթահարել ուսման գործընթացում առաջացող դժվարությունները	0.53
	Սիրում եմ դասերը, որոնց ընթացքում կարելի է քննարկումներ անել	0.48
	Ես հասկանում եմ, որ աշակերտը պետք է լավ սովորի	0.49
	Մեր դասարանի աշակերտները զիտեն, որ կարող են ուսուցիչներից լրացուցիչ օժանդակություն ստանալ	0.42
	Մեր դպրոցի ուսուցիչները հավասարապես հոգատար են բոլոր աշակերտների նկատմամբ	0.45

<b>Ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին</b>	Ծնողներս օգնում են ինձ՝ կատարելու տնային առաջադրանքները	0.70
	Հայոց պատմություն սովորելը ինձ համար բարդ է	0.61
	Հայոց պատմության դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում	0.66

Տեսնենք, թե ստացված փոփոխականներից որոնք են ունեցել նշանակալի ազդեցություն սովորողների առաջադիմության վրա:

## 11. ՀԱԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 11.1. «Հայոց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն

Հետևյալ մոդելը սովորողների միջև առաջադիմության տարբերությունները բացատրում է 23 տոկոսով ( $R \text{ Square} = 0.23$ ):

«Հայոց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունի ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին:

$Y = 5.39 + 0.02 \cdot \text{ուսուցչի արդյունավետ դասավանդում} - 0.02 \cdot \text{աշակերտի ակնկալիքները} + 0.85 \cdot \text{ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին} + \varepsilon$

Մեր մոդելի բոլոր գործոնների բացակայության դեպքում սովորողի արդյունքը «Հայոց լեզու» առարկայից կլինի 5.39 միավոր (10 միավորանոց սանդղակով):

### 11.2. «Հայոց պատմություն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն

«Հայոց պատմություն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունի ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին:



Սովորողների միջև հետևյալ մոդելը առաջադիմության տարբերությունները բացատրում է 12 տոկոսով ( $R \text{ Square} = 0.124$ ):

$Y = 4.089 + 0.04 \cdot \text{ուսուցչի արդյունավետ դասավանդում} - 0.06 \cdot \text{աշակերտի ակնկալիքները} + 0.53 \cdot \text{ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին} + \varepsilon$ :

$Y$  – ը սովորողների կանխատեսվող միավորներն են «Հայոց պատմություն» առարկայից, իսկ  $\varepsilon$ -ը՝ մոդելի սխալն է, որը ներառում է այն բոլոր փոփոխականները, որոնք նույնպես ազդում են առաջադիմության վրա, սակայն չեն ներառված մեր մոդելում և հարցաթերթում: Նշված գործոնների ազդեցության բացակայության դեպքում 10 միավորանոց սանդղակում աշակերտի արդյունքը հայոց պատմությունից կլինի 4.089 միավոր:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

### Ստուգատեսի կազմակերպման և անցկացման մասին

2019 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 137 հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից անցկացվել է ազգային ստուգատես: Ստուգատեսն իրականացվել է ստուգատեսների անցկացման ընթացակարգին համապատասխան՝ սկսած թեստեր կազմելուց, դպրոցների ընտրությունից, վերջացրած տվյալների համակարգչային մուտքագրմամբ և արդյունքների վերլուծությամբ: Արդյունքների արժանահավատությունն ապահովված է, քանի որ յուրաքանչյուր թեստի համար ընտրանքը կազմել է 813-858 աշակերտ:

Վերլուծությունից պարզվել է, որ բոլոր թեստերը եղել են միջին բարդության և հուսալի, ընդ որում՝ յուրաքանչյուր դասարանի համար կազմված չորս թեստերը եղել են միմյանց համարժեք:

## **Նպատակը**

ՀԱԱՄ-2019-ի նպատակն է եղել պարզել հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը և դրանց ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները: Աշակերտների պատրաստվածությունը հայագիտական առարկաներից ստուգվել է երեք ուղղություններով՝ գիտելիք, կիրառություն և արժևորում:

## **ՀԱԱՄ-ի արդյունքների վերլուծությունը**

Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ բոլոր ուղղություններով էլ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների առաջադրանքներին աշակերտներն ավելի լավ են պատասխանել, քան «Հայոց պատմություն» առարկայի առաջադրանքներին:

## **Աշակերտների մի քանի ունակությունները հայագիտական առարկաներից**

Ի տարբերություն «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների, որոնց դեպքում աշակերտները լավ արդյունքներ են ցուցաբերել թե՛ գիտելիք, թե՛ կիրառություն և թե՛ արժևորում ստուգող առաջադրանքներում, «Հայոց պատմություն» առարկայի դեպքում աշակերտները լավ արդյունքներ են ցուցաբերել կիրառություն ստուգող առաջադրանքները կատարելիս, որը կարելի է բացատրել աշակերտների գիտելիքների ձեռքբերմամբ՝ ֆիլմերից, գեղարվեստական գրքերից և այլ աղբյուրներից:

## **Վերլուծություն ըստ սեռերի**

Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներից աղջիկների միջին միավորը բարձր է տղաների միջին միավորից 1 միավորով, «Հայոց պատմություն» առարկայից՝ 0.33 միավորով:

**ՀԱԱՄ-ի արդյունքներն ըստ վարչատարածքային  
միավորների**

Երեք առարկաներից էլ լավագույն արդյունքներ ցուցաբերել են Երևանում, Գեղարքունիքում, Սյունիքում, Լոռիում: Ցածր արդյունքներ են գրանցվել Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում:

**Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական  
ուսումնական հաստատությունների տիպերի**

Երեք առարկաների դեպքում էլ ցածր արդյունքներ ցուցաբերել են միջնակարգ դպրոցների աշակերտները:

**Մասնակից ուսումնական հաստատությունների միջին  
միավորներն ըստ առարկաների**

Չնայած «Հայոց պատմություն» առարկայի ընդհանուր ցածր միջին միավորին, շատ դպրոցներ գրանցել են բավականին բարձր արդյունքներ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ միջին միավորների ցածր լինելը պայմանավորված է ոչ թե թեստի բարդությամբ, այլ աշակերտների ոչ պատշաճ պատրաստվածությամբ:

**Ստուգատեսի արդյունքներն ըստ բնակավայրերի  
տիպերի**

Քաղաքային բնակավայրերի աշակերտների արդյունքներն ավելի բարձր են, քան գյուղական բնակավայրերի աշակերտներինը:

**Ազգային ստուգատեսի հարցման արդյունքների  
վերլուծություն**

Կատարվել է երկրորդային վերլուծություն, որտեղ ներկայացվել են ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ, ներկայացվել են նաև առաջադիմության վրա ազդող որոշ գործոններ:

Վերլուծության արդյունքում պարզ է դառնել, որ աշակերտների 40.4 տոկոսն ունի ցածր ինքնագնահատական: Երկու առարկաներից էլ բարձր արդյունքներ են գրանցել ցածր ինքնագնահատական ունեցող աշակերտները, ցածր արդյունքներ՝ չպատասխանած աշակերտները:


Հարցված աշակերտների 35.4 տոկոսի համար կարևոր է դասասնյակի ձևավորումը, 22.7 տոկոսի համար՝ դասավանդման որակը: Երկրորդ ընտրությամբ՝ 19.11 տոկոսը կարևորել է դպրոցի շենքային պայմանները, 17.69 տոկոսը՝ դպրոցի նյութատեխնիկական ապահովվածությունը: Երրորդ ընտրությամբ աշակերտների 23.6 տոկոսը կարևորել է դասագրքերի նյութի որակը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշակերտներն անկեղծ են պատասխանել «Որքա՞ն լավ ես տիրապետում հայոց լեզվի և հայոց պատմության հետևյալ բաժիններին» հարցին: Երկու առարկաներից էլ ամենաբարձր միջին միավորները գրանցել են իրենց գիտելիքը գերազանց գնահատողները:

**Կորեյացիոն վերլուծության արդյունքում վեր հանված գլխավոր գործոնները, որոնք ազդում են սովորողների առաջադիմության վրա**

Վերլուծության արդյունքում որոշ հարցեր միավորվել են, և ձևավորվել են նոր փոփոխականներ, որոնք կապված են սովորողների առաջադիմության հետ և ինչ-որ չափով ազդում են դրա վրա: «Հայոց լեզու» և «Հայ գրականություն», ինչպես նաև «Հայոց պատմություն» առարկաների արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվել է, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունի ծնողների մասնակցությունը աշակերտի ուսման գործընթացին:

ՀՈՂՎԱԾՆԵՐ



## Ծայրահեղ օրինակների մեթոդը<sup>1</sup>

Հայտնի է, որ մաթեմատիկայում օրինակները ոչինչ չեն ապացուցում, կարելի է հանդիպել հայտնի անեկդոտի իրավիճակի. «99 օրինակով ստուգել ենք, որ 1, 2, ..., 99 թվերը փոքր են 100-ից և որոշել ենք, որ բոլոր թվերը 100-ից փոքր են»: Թերևս կարելի է բերել «հակաօրինակներ»՝ ապացուցելու համար հակառակ պնդումները (Ժխտելու համար ուղիղ պնդումները). «1000 թվի օրինակը ցույց է տալիս, որ ոչ բոլոր թվերն են եռանիշ»:

Ցավոք, թեստաբանության մեջ հազվադեպ է հաջողվում ինչ-որ պնդում հստակ ապացուցել: Սակայն այստեղ օրինակներն այլ դեր են կատարում: Թեստաբանության մեջ օրինակները կարող են լինել եթե ոչ թեստաբանական այս կամ այն պնդման հստակ ապացույցներ, ապա կարող են ծառայել որպես պնդման ճշմարտացիության միանգամայն համոզիչ փաստարկներ: Այստեղ օրինակը խաղում է ոչ այնքան փաստարկի ժխտման («հակաօրինակի»), որքան դրա համոզիչ լինելու՝ գրեթե ապացույցի դեր: Հաճախ հիմնախնդրի էությունը ցույց տալու համար բերվում են ծայրահեղ իրավիճակների օրինակներ, որոնք կյանքում երբեք տեղի չեն ունենում, բայց տեղի են ունենում նմանատիպ, առավել իրական իրավիճակներում, սակայն հիմնախնդրի ավելի նվազ ակնառու դրսևորմամբ: Դա չպետք է ազդի օրինակի համոզչության վրա, քանի որ տվյալ դեպքում օրինակը ոչ թե վկայություն է, այլ հիմնախնդրի ներկայացման միջոց: Այս իրավիճակը հիշեցնում է խոշորացույց (մանրադիտակ)՝ չափսերը իրականից տարբերվում են, սակայն հնարավորություն են տալիս բացահայտելու անտեսանելի, բայց իրականում գոյություն ունեցող առարկաներ ու երևույթներ:

<sup>1</sup> Качество образования в Евразии, журнал ЕАОКО N 7, 4 – 7, 2020

Ներկայացվող մոտեցումը մենք անվանում ենք *ծայրահեղ օրինակների մեթոդ* (ՇՕՄ) և այն դիտարկում որպես թեստաբանական պնդումների ստուգման (բացահայտման, հիմնավորման, ապացուցման) միջոց (մեթոդ): Քննարկենք այս մեթոդի կիրառումը թեստաբանական կարևորագույն հասկացությունների վերաբերյալ կոնկրետ օրինակների վրա (տե՛ս [1,2])

## 1. Թեստաբանությունը որպես գիտություն

Ցավոք, մեր ժամանակներում պետք է ապացուցել նաև այս պնդումը (այս գիտությունը սկզբնավորվել է դեռ XIX դարում): Մեր հասարակության մեջ դժվար թե որևէ մեկը (ոչ ֆիզիկոս) դատողություններ անի, օրինակ, միջուկային ֆիզիկայի նրբությունների մասին, բայց հազվադեպ են հանդիպում մարդիկ, որոնք գիտակցում են, որ նույն կերպ գլուխ չեն հանում թեստաբանությունից (բիզնեսից, քաղաքականությունից, ֆուտբոլից), որ այն նույնպես գիտություն է, որ այն նույնպես ունի իր օրինաչափություններն ու համապատասխան տեսությունը, որի տարրերի մասին իրենք պատկերացում անգամ չունեն, և որ իրենց մակերեսային դատողությունները խելամիտ և գիտականորեն հիմնավորված չեն: Այդպիսի մարդկանց անհիմաստ (գրեթե անհնար) է ինչ-որ բան ապացուցելը գիտական բանավեճի միջոցով (նրանք չունեն համապատասխան գիտելիքներ, նրանք չեն հասկանա, թե ինչի մասին ես դու խոսում, բայց ունեն իրենց կարծիքը և, որ ավելի վատ է, համոզմունքները): Այս իրավիճակում առավել արդյունավետ է գործում ՇՕՄ-ը, քանի որ մտածող մարդուն շատ ավելի արդյունավետ են համոզում օրինակները, քան անձանոթ թեմայով, անձանոթ տերմինաբանությամբ գիտական պնդումները:

Ներկայացվող օրինակը ենթադրական չէ, այն տեղի է ունեցել անձամբ ինձ հետ: Ամբողջ կյանքում (դպրոցում, համալսարանում) որպես օտար լեզու ես ուսումնասիրել եմ գերմաներենը և բացարձակապես չգիտեի անգլերեն (բացի լատիներեն տառերից): Մոտավորապես 20 տարի առաջ որոշեցի մասնակցել անգլերենի դասընթացների՝ չունենալով ոչ մի գիտելիք: Դասընթացը բաղկացած էր 7 մակարդակից, և կազմակերպիչները պնդեցին, որ ես թեստ հանձնեմ, որպեսզի պարզեն իմ մակարդակը (թեև ես վստահ էի, որ իմ մակարդակը զրոյական է և ես պետք է սկսեմ № 0 դասընթացից):

Ես հանձնեցի համապատասխան թեստը, և դրա արդյունքներով ինձ առաջարկեցին № 5 դասընթացը: Բնականաբար, ես հրաժարվեցի սկսեցի № 0 դասընթացից:

Այսպիսով, կարելի է կազմել այնքան անհաջող թեստ (իմ գահատականը բարձր էր ոչ թե այն բանի համար, որ ես «խելացի» եմ, այլ որովհետև թեստը բանի պետք չէր), որի արդյունքով անգամ ոչ մի գիտելիք չունեցող մասնակիցը հնարավոր 7 մակարդակներից հայտնվի № 5 մակարդակում (գրոյականի փոխարեն): Շատ ավելի վատ (բայց ավելի իրական) կլինեք, եթե իմ իսկական մակարդակը լինեք, օրինակ, № 3, այդ դեպքում ես չէի բացահայտի չափման սխալը և կսկսեի «ոչ իմ» № 5 դասընթացից:

Հիմա պատկերացնենք, որ թեստավորումը մրցութային տիպի էր, *մեծ խաղաղություններով* (կյանքի ու մահվան խնդիր), և գրոյական (կամ անգամ երրորդ) մակարդակի գիտելիքներ ունեցող մասնակիցը (ավելի արժանավոր մասնակիցների փոխարեն) ընկնում է չվաստակած հինգերորդ մակարդակ, իսկ չափման սխալը չի հայտնաբերվում: Այդպիսի դեպքեր մեր կյանքում տեղի են ունենում մշտապես և ամենուր, իրական, պատասխանատու իրավիճակում: Իմ դեպքում դժվար թե դա էր կազմակերպիչների նպատակը, նրանք անգամ չէին էլ պատկերացրել, որ իրենց թեստն անհաջող է, տալիս է խեղաթյուրված արդյունքներ, ինչն, իհարկե, չի նվազեցնում նրանց պատասխանատվության աստիճանը:

Բերված օրինակը, կարծում եմ, համոզում է, որ գոյություն ունի գնահատման գործիքի (թեստի) որակ հասկացությունը, այդ դեպքում կարելի է հավատալ, որ գոյություն ունի դրա ապահովման համապատասխան տեսություն (թեստաբանություն):

## 2. Թեստային առաջադրանքի ընդունելի բնութագիրները

Քանի որ մենք համոզվեցինք, որ գոյություն ունի թեստաբանություն գիտությունը, ապա այն պետք է ունենա իր ուսումնասիրության նպատակը: Համարենք, որ թեստաբանության հիմնական նպատակը գնահատման «լավ» (որակյալ) գործիքի՝ թեստի ստեղծումն է: Բնականաբար, «լավ» թեստը պետք է կազմված լինի «լավ» առաջադրանքներից: Այդ դեպքում հարց է առաջանում՝ *ո՞ր առաջադրանքները համարել լավ և ինչպես դրանք մյուսներից տարբերել ու*



*Ճանաչել:* Պատկերացնենք, որ մաթեմատիկայի ուսուցիչը դասարանին տալիս է հետևյալ առաջադրանքները (տե՛ս [3]).

**Օրինակ 1.** *Գտնել հետևյալ արտահայտության արժեքը. 2+2:*

Ամբողջ դասարանը կատարում է առաջադրանքը, այն շատ հեշտ է: Ուսուցիչը որոշում է տալ ավելի բարդ առաջադրանք և տալիս է հետևյալը.

**Օրինակ 2.** *Լուծել Ֆերմի պրոբլեմը:*

Այս անգամ ոչ ոք չի կատարում առաջադրանքը, այն չափազանց բարդ է:

**Եզրակացություն 1.** *Գոյություն ունի առաջադրանքի օպտիմալ միջին բարդության աստիճան:*

Բերված օրինակներն ունեն ընդհանուր առանձնահատկություն՝ դրանցով հնարավոր չէ բացահայտել պատրաստված աշակերտներին, բացակայում է տարբերակման գործոնը:

**Եզրակացություն 2.** *Գոյություն ունեն առաջադրանքներ, որոնք լուծում է լավ պատրաստված աշակերտը և չի լուծում ավելի քիչ պատրաստված աշակերտը, դրանցում առկա է ընդունելի տարբերակում:*

Այսպիսով, ԾՕՄ-ի վերը բերված կիրառումը համոզում է, որ «լավ» թեստային առաջադրանքը պետք է.

- ունենա բարդության ընդունելի աստիճան,
- ունենա տարբերակման ընդունելի ցուցանիշ:

**3.** «Լավ» առաջադրանքների ամբողջությունը միշտ չէ, որ «լավ» թեստ է

Այս պնդումը հիմնավորելու համար պատկերացնենք, որ *քիմիայից* աշակերտների պատրաստվածության աստիճանը գնահատելիս տրվում է «լավ» թեստ ֆիզիկայից (բոլոր առաջադրանքներն ունեն բարդության օպտիմալ աստիճան և տարբերակման իդեալական ցուցանիշ): Այդուամենայնիվ, դժվար թե այդպիսի թեստը լավ թեստ համարվի. այդ թեստը լավ հանձնած աշակերտն ուժեղ է ֆիզիկա-

յից, ոչ թե քիմիայից, թեստը չի համապատասխանում գնահատման նպատակին:

#### 4. Թեստի հավաստիությունը

Անպատասխան է մնում այն հարցը, թե որն է «լավ» թեստը: Հասկանալի է, որ այն պետք է կազմված լինի «լավ» առաջադրանքներից, բայց, ինչպես նախորդ օրինակն է ցույց տալիս, դա բավարար չէ: Իրականում ՏՕՍ-ի վերը բերված կիրառումն ապացուցում է ավելին, քան ձևակերպված պնդումը. *թեստը պետք է գնահատի այն, ինչը գնահատելու համար նախատեսված է*: Թեստի այդ հատկությունը կոչվում է **հավաստիություն**: Քննարկենք հետևյալ ծայրահեղ օրինակը, որն ապացուցում է այդ հասկացության կարևորությունը:

**Օրինակ 3.** Ենթադրենք, թե 5-րդ դասարանի մաթեմատիկայի թեստի կազմման համար առանձնացվել են հետևյալ թեմաները.

- *բնական թվեր,*
- *թվաբանական գործողություններ բնական թվերով,*
- *բացականչական նախադասություններ,*
- *սովորական կոտորակներ,*
- *խառը թվեր:*

Նկատում ենք, որ 3-րդ թեման (բացականչական նախադասություններ) հայոց լեզվի բաժին է: Հետևաբար, որքան էլ որակյալ կազմված լինի թեստը (թեստային առաջադրանքները), այն հավաստի չի լինի, լիարժեք չի գնահատի քննարկվող առարկայական նյութը (մաթեմատիկան): Բերված օրինակը չափազանց ծայրահեղ է, հաջորդ ավելի իրական օրինակն, ըստ էության, նրանից չի տարբերվում:

**Օրինակ 4.**Նորից ենթադրենք, թե 5-րդ դասարանի մաթեմատիկայի թեստի կազմման համար առանձնացվել են թեմաներ.

- *բնական թվեր,*
- *թվաբանական գործողություններ բնական թվերով,*
- *քառակուսային հավասարումներ,*
- *սովորական կոտորակներ,*
- *խառը թվեր:*

Այս օրինակում 3-րդ թեման (*քառակուսային հավասարումներ*), 5-րդ դասարանում չեն անցնում (անցնում են բարձր դասարաններում), թեստը նորից հավաստի չի լինի:

Իհարկե, բերված օրինակները ծայրահեղ են, ոչ ոք քիմիայից գիտելիքները գնահատելու համար ֆիզիկայից թեստ չի օգտագործի, մաթեմատիկայի թեստում չեն հայտնվի հայոց լեզվի թեմաներ, բարձր դասարանների նյութը չի մտցվի 5-րդ դասարանի թեստի մեջ: Սակայն վերը բերվածներից, ըստ էության, քիչ է տարբերվում այն լրիվ իրական իրավիճակը, երբ ուսուցիչը իր առարկայից գնահատական է նշանակում՝ ելնելով դասարանում աշակերտի վարքից. կարգապահ աշակերտին բարձր է գնահատում, անկարգապահ աշակերտի գնահատականը իջեցնում: Ներկայացված բոլոր իրավիճակներում աշակերտների ստացած գնահատականը հավաստի չէ, այն չի համապատասխանում գնահատման առարկային:

## 5. Թեստի հուսալիությունը

Թեստը, որպես գնահատման գործիք, ինչպես ամեն մի գործիք, պետք է հուսալի լինի: Պատկերացնենք, որ հնարել են մի «կշեռք», որի վրա կանգնելիս կշեռքն արտաբերում է կանգնողի գնահատականը այս կամ այն առարկայից (օրինակ, մաթեմատիկայից): Տարօրինակ կլիներ, որ կանգնելով սովորական կշեռքին տեսնեինք սեփական քաշը, օրինակ, 75 կգ, իսկ մեկ ժամ հետո՝ 90 կգ: Մենք հաստատ չէինք հավատա չափման արդյունքին, կհամարեինք, որ գործիքը (կշեռքը) հուսալի չէ: Քաշի աննշան փոփոխություններ կարելի էր արձանագրել (օրինակ, առավոտյան և երեկոյան կշռվելիս), սակայն ցուցումների տարբերությունը (չափման սխալը) պետք է լինի խելամտության սահմաններում: Նման հուսալիություն պետք է ունենա նաև թեստը՝ որպես գնահատման գործիք. աշակերտի գնահատականները իդեալական պայմաններում ենթադրական բազմակի թեստավորումներից հետո մեկը մյուսից պետք է տարբերվեն ընդունելի փոքր չափով (չափման ստանդարտ սխալ):

## 6. Առաջադրանքի բարդությունը

Առաջադրանքի բարդությունը գնահատելիս չի կարելի հույսը դնել անձնական կարծիքի («աչքաչափի») վրա: Աչքաչափը կարող է խա-

բել. թվացյալ հեշտ առաջադրանքն աշակերտները կարող է վատ կատարեն, իսկ դժվար թվացող առաջադրանքը՝ հաջողությամբ կատարել: Քննարկենք հետևյալ երկու օրինակները.

**Օրինակ 5.** *Հաշվել հետևյալ ինտեգրալը.*  $\int x dx$

**Օրինակ 6.** *Հաշվել 4 սմ, 8 սմ, 11 սմ կողմերով եռանկյան ամենափոքր բարձրության երկարությունը:*

Եթե սոցիոլոգիական հարցում անցկացնենք «Որ առաջադրանքն է ավելի բարդ» թեմայով, ապա, կարծում եմ, հարցվածների մեծամասնությունը «աչքաչափով» կընտրի առաջինը՝ ինտեգրալը հաշվելու վերաբերյալ: Քննարկենք իրավիճակն ավելի մանրամասն: Եթե հարցումն անցկացվի միջնակարգ դպրոցում, ապա *առաջին առաջադրանքն, իհարկե, ավելի բարդ է*, որովհետև աշակերտները ծանոթ չեն անորոշ ինտեգրալ հասկացության հետ, և նրանցից ոչ մեկը առաջադրանքը չի կատարի: Իսկ երկրորդ առաջադրանքը, թեև պահանջում է որոշակի գիտելիքներ երկրաչափությունից, ճշգրիտ հաշվարկներ և եզրակացություններ, շատերը կկատարեն: Իսկ եթե հարցումն անցկացվի մաթեմատիկական բուհի ուսանողների շրջանում, որոնք ծանոթ են անորոշ ինտեգրալ հասկացության հետ, ապա առաջին առաջադրանքը կկատարեն բոլորը: Այն հիշեցնում է «Ասա, թե որն է Ֆրանսիայի մայրաքաղաքը» տիպի առաջադրանք, իմացողը, կարդալով առաջադրանքը միանգամից կասի ճիշտ պատասխանը: Երկրորդ առաջադրանքը ճիշտ կկատարեն շատերը, բայց կարող է սխալվեն հաշվարկներում, իսկ մյուսները կարող է չհիշեն դպրոցական երկրաչափությունից համապատասխան գիտելիքներն ու բանաձևերը: Հետևաբար, *ուսանողների համար երկրորդ առաջադրանքը ավելի բարդ է:*

Բերված ծայրահեղ օրինակները համոզում են, որ *առաջադրանքի բարդության իրական աստիճանը բացահայտվում է՝ ելնելով այն բանից, թե փորձարկվողների որ մասն է այն ճիշտ կատարում:*

Այսպես կարելի է անցնել ամբողջ թեստաբանությամբ՝ ծայրահեղ օրինակներով հիմնավորելով համապատասխան հասկացությունների և պնդումների էությունը: Իհարկե, շատ թեստաբանական (հիմնականում հոգեչափական) պնդումներ ապացուցվում են մաթեմատիկական վիճակագրության և հավանականության տե-

սության մեթոդների հիման վրա (մասնավորապես, թեստի դասական և ժամանակակից տեսությունների, թեստի հուսալիության տեսության, ընտրանքի տեսության, վարկածների ստուգման և այլ տեսությունների հիմնական դրույթները):

Բայց շատ դեպքերում զուտ մաթեմատիկական ապացույցներ կարող են չլինել, կամ դրանք կարող են ոչ մասնագետներին թվալ չափազանց բարդ և անհասկանալի: Հաճախ նման դեպքերում հեղինակները խուսափում են մանրամասն շարադրելուց և «հարթում են սուր անկյունները»: Ընթերցողին մնում է միայն հավատալ այդպիսի պնդման ճշտությանը: Կարծում եմ, նման դեպքերում ծայրահեղ օրինակների մեթոդի կիրառումը կարող է շտկել իրավիճակը և ոչ պակաս համոզությամբ վկայել քննարկվող օրինաչափության ճշտության մասին:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Крокер Л., Алгина Дж. Введение в классическую и современную теорию тестов. // Логос, Москва, 2012, с. 667.
2. Чельшкова М.Б. Теория и практика конструирования педагогических тестов, “Логос”, Москва, 2002, 431 стр.
3. Арутюнян К.В., Багдасарян А.Г. Международное исследование по математике и предметам естествознания TIMSS 2003 в Армении. // Астгик, Ереван, 2004, 52 стр.

---

*Ընդհանուր տեղեկատվության համար շարունակում ենք ներկայացնել հոդվածներ մի շարք երկրների կրթական համակարգերի վերաբերյալ:*

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի առաջատար մասնագետ

## Անգլիայի կրթական համակարգը

2008 թվականից Անգլիայում պարտադիր կրթությունը 13-ամյա է (5-18 տարեկան): Այո իրականացվում է 5 հիմնական փուլերով.

- 1-ին և 2-րդ հիմնական փուլեր՝ տարրական դպրոց (համապատասխանաբար՝ 2 և 4 տարի),
- 3-րդ և 4-րդ հիմնական փուլեր՝ միջին դպրոց (համապատասխանաբար՝ 3 և 2 տարի),
- 5-րդ փուլ՝ ավագ դպրոց կամ հետագա մասնագիտացման քոլեջ (2 տարի տևողությամբ):

Աշակերտները ավարտական քննություններ են հանձնում 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ փուլերը ավարտելիս:

## Դպրոցների տիպերը

Անգլիայում աշակերտների 93%-ը հաճախում է պետական դպրոցներ, որոնց թիվը մոտ 15050 է: Գործում են 11-18 տարեկանների համար միայն տղաների և միայն աղջիկների մասնավոր դպրոցներ, ինչպես նաև երկու սեռերի համար ընդհանուր մասնավոր դպրոցներ: 1960-1970 թվականներին կային նաև այդպիսի պետական դպրոցներ: Անգլիայում գործում են նաև պետական կրոնական դպրոցներ, որոնք կազմում են դպրոցների 38 տոկոսը:

1988 թվականին ընդունված «Կրթական բարեփոխումների օրենքով» նախատեսվում է ազգային ուսումնական պետական ծրագրի ստուգում:

1-ին և 2-րդ հիմնական փուլերի ավարտին աշակերտները հանձնում են ստանդարտ ունակությունների թեստ: Թեստերի միջոցով ստուգվում են աշակերտների՝

- գրագիտությունը (ընթերցանություն և գրավոր աշխատանք),
- գիտելիքները մաթեմատիկայից,
- գիտելիքները բնագիտությունից:

2-րդ հիմնական փուլի ավարտին թեստավորման արդյունքների հիման վրա աշակերտներն ընտրում են իրենց հետագա կրթության ուղղվածությունը: Անգլիայում գործում են քերականական դպրոցներ, ակադեմիաներ և բնագիտական ուղղվածության դպրոցներ:

4-րդ հիմնական փուլի ավարտին աշակերտները հանձնում են միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի քննություններ: Նրանք քննություն են հանձնում նվազագույնը 6 առարկայից: Աշակերտները իրենց ընտրությամբ կարող են ավելացնել քննական առարկաներ:

Կախված ավարտական քննությունների արդյունքներից՝ աշակերտին տրվում է միջնակարգ կրթության ընդհանուր վկայական. կրթական 1-ին մակարդակի վկայական՝ 1-3 գնահատականների դեպքում, կրթական 2-րդ մակարդակի վկայական 4-9 գնահատականների դեպքում:

16 տարեկան աշակերտները կարող են ընդունվել կա՛մ Ա մակարդակի քոլեջներ, կա՛ մ հետագա մասնագիտացման քոլեջներ: Նշենք, որ այս երկու տիպի քոլեջներն ավարտելուց հետո աշակերտներ կարող են շարունակել ուսումը՝ ընդունվելով բարձրագույն կամ մասնագիտական կրթության համալսարաններ:

### **Գնահատումն ու թեստավորումը**

Անգլիայի Կրթության վարչության գործակալությունը կարգավորում է գնահատումների և հաշվետվությունների գործընթացները, իրականացնում է վաղ տարիքի երեխաների գնահատում, ինչպես նաև աշակերտների գնահատում 1-ին և 2-րդ հիմնական փուլերն ավարտելիս:

Գործակալության հիմնական գործունեությունն ուղղված է դպրոցական ծրագրի գնահատման ցիկլի ապահովմանը, որը ներառում է նաև թեստերի մշակման և թեստավորման գործընթացները:

2020 թվականից ամբողջ Անգլիայում իրականացվում է բազմապատկման աղյուսակի իմացության համակարգչային ստուգում 8-9 տարեկան աշակերտների շրջանում: Համակարգչային ստուգումը ներառում է 25 հարցից բաղկացած թեստով թեստավորում: Ընդ որում, յուրաքանչյուր հարցի լուծմանը տրամադրվում է 6 վայրկյան:

Կրթության վարչության գործակալությունը աջակցում է դպրոցներին աշակերտների թեստավորման ժամանակ, մշակում և սահմանում է թեստերի չափորոշիչները:

### **Ստանդարտ ունակությունների թեստերի կառուցվածքը**

«Անգլերեն» առարկայից ընթերցանության թեստի հանձման տևողությունը 60 րոպե է, այն ընդգրկում է 3 տեքստ՝ 32 առաջադրանքով: Թեստի կատարումից աշակերտը կարող է ստանալ առավելագույնը 50 միավոր:

«Մաթեմատիկա» առարկայից քննությունը բաղկացած է 3 մասերից, և հաշվիչի օգտագործումն արգելված է: 1-ին թեստով ստուգվում են աշակերտի գիտելիքները թվաբանությունից, 2-րդ թեստով՝ տրամաբանությունից: Այս երկու թեստերը աշակերտները հանձնում են միևնույն օրը, իսկ 3-րդ թեստը, որով նորից աշակերտների տրամաբանությունն է ստուգվում, հանձնում են հաջորդ օրը:

Քերականության, կետադրության և ուղղագրության թեստը բաղկացած է 2 մասից: 1-ին մասը կարճ պատասխաններով առաջադրանքներից բաղկացած թեստ է, իսկ 2-րդ մասով ստուգվում են աշակերտների ունակությունները ուղղագրությունից. Ուսուցիչը



բարձրաձայն թելադրում է մինչև 150 բառ, որոնք աշակերտները գրում են:

### **Անգլիայի գնահատման և թեստավորման կենտրոնները և քննությունների տիպերը**

Անգլիայում 16 տարեկան աշակերտները հանձնում են ավարտական քննություններ, որոնք պարտադիր են: Երկրում գործում են չորս հիմնական քննական կենտրոններ, որոնք կազմակերպում և իրականացնում են և՛ ավարտական քննությունները, և՛ բուհերի ընդունելության քննությունները: Բուհ ընդունվողները (18 տարեկան) հանձնում են խորացված առարկայական Ա մակարդակի թեստեր և մասնագիտական որոշ քննություններ:

Միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի քննություններից են հետևյալ առարկայական քննությունները. «Արվեստ և դիզայն», «Կենսաբանություն», «Բիզնես», «Քիմիա», «Բնագիտություն», «Օրագրավորում», «Դիզայն և տեխնոլոգիա», «Թվային տեխնոլոգիաներ», «Թատրոն», «Անգլերեն», «Անգլիական գրականություն», «Ֆրանսերեն», «Աշխարհագրություն», «Գերմաներեն», «Պատմություն», «Սնունդ և կերակուր», «ՏՀՏ», «Իռլանդերեն», «Ժուռնալիստիկա», «Կյանքի և աշխատանքի ուսուցում», «Երաժշտություն», «Ֆիզիկական կուլտուրա», «Ֆիզիկա», «Քաղաքացիություն», «Կրոնական ուսուցում», «Գիտություններ», «Իսպաներեն», «Ուելսերեն», «Չինարեն», «Մաթեմատիկա», «Թվաբանություն» և «Ժամանակակից օտար լեզուներ»:

### **Գնահատման և թեստավորման այլանս**

Գնահատման և թեստավորման այլանսը ոչ պետական, բարեգործական կազմակերպություն է: Կազմակերպում է միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի քննություններ, բուհերի ընդունելության տարբեր մակարդակների վկայականների մասնագիտական 39 առարկաներից քննություններ, 87 Ա մակարդակի քննություններ և 15 տիպի որակավորումներ: Քննություններ հանձնողների թվի աճով պայմանավորված՝ այլանսը ներմուծել է նաև համակարգչային թեստավորում և գնահատում՝ ի հավելումն սովորա-

կան թեստավորման, որպեսզի բարձրացնի քննությունների արդյունքների ճշգրտությունն ու արդյունավետությունը:

### **ԷԴԵՔՍԵԼ՝ <<Կրթություն և գերազանցություն>> քննական խորհուրդ**

ԷԴԵՔՍԵԼԸ միակ շահույթ հետապնդող քննական խորհուրդն է: Այն բրիտանական կրթական ծրագրին համապատասխան կառավարում է դպրոցական քննությունները՝ առաջարկելով դպրոցականների որակավորումներ՝ երկրի և միջազգային մակարդակով: <<Կրթություն և գերազանցություն>> քննական խորհուրդը դպրոցների և քոլեջների շրջանավարտներին, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների աշխատաշուկաներին ակադեմիական և մասնագիտական որակյալ կադրերով ապահովող ամենամեծ կազմակերպությունն է:

### **<<ՎԻՋԵՔ>> քննական խորհուրդ**

<<ՎԻՋԵՔ>> քննական խորհուրդը ծառայություններ է իրականացնում Անգլիայում, Ուելսում և Հյուսիսային Իռլանդիայում: <<ՎԻՋԵՔ>>-ի կողմից իրականացվող որակավորումներն ավանդական ակադեմիական և աշխատանքի անցնելու համար շատ կարևոր են: Այս քննական խորհուրդը կազմակերպում է միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի քննություններ, բուհերի ընդունելության Ա կամ մասնակի Ա մակարդակի քննություններ, աշխատաշուկա անցնելու համար մուտքի մակարդակի քննություններ, որոնցով ստուգվում են անձի հիմնական հմտությունները: Քանի որ քննական խորհուրդների միջև առկա է մրցակցություն միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի կրթական չափորոշիչների և Ա մակարդակի որակավորման ծրագրի համար, բրիտանական խորհրդարանը որոշ հարցեր է ուղղել <<ՎԻՋԵՔ>>-ին, որը, իր հերթին, հայտարարություն է հրապարակել, որտեղ պատասխանել է բարձրացված հարցերին: Խոսվել է նաև քննական թեստերի կրկնակի գնահատման անհրաժեշտության մասին, քանի

որ աճել է <<ՎԻՋԵՔ>>-ի կողմից անարդյունավետ գնահատումների վերաբերյալ բողոքների թիվը: <<ՎԻՋԵՔ>>-ը նույնպես սկսել է կիրառել համակարգչային թեստավորման համակարգ՝ քննական գործընթացը բարելավելու և գնահատման արդյունավետությունը բարձրացնելու համար:

### **<<Օքսֆորդ-Քեմբրիջ և արվեստների կայսերական հանրություն>>**

<<Օքսֆորդ - Քեմբրիջ և արվեստների կայսերական հանրություն>>-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Քեմբրիջի գնահատման բաժինը գործում է նույնանուն համալսարանի կազմում այն միակ բրիտանական համալսարանի, որը ուղիղ կապ ունի դպրոցների քննական խորհրդի հետ: Կազմակերպությունը տրամադրում է միջնակարգ կրթության ընդհանուր վկայական և Ա մակարդակի քննությունների մասնագիտական որակավորումներ ավելի քան 40 հանրակրթական առարկաներից և 450 արհեստագործական որակավորումներ Անգլիայում, Ուելսում և Հյուսիսային Իռլանդիայում:

<<Օքսֆորդ-Քեմբրիջ և արվեստների կայսերական հանրություն>> կազմակերպությունը համագործակցում է ուսուցիչների, դասախոսների և առարկայական փորձագետների հետ, կազմակերպում է զագաթնաժողովներ, որոնց ընթացքում քննարկվում են որակավորման բարելավման հետ կապված բազմաթիվ հարցեր: 16 տարեկանից բարձր աշակերտների համար իրականացնում է ներքին և արտաքին գնահատումներ հանրակրթության 4-րդ փուլի ավարտին, ինչպես նաև 5-րդ փուլում (1-ին և 2-րդ մակարդակներում):

### **ՅՈՒՔԱՄ՝ Համալսարանների և քոլեջների ընդունելության ծառայություն**

<<ՅՈՒՔԱՄ>>-ը ընդունում է բուհերի ընդունելության դիմում-հայտերը առցանց համակարգի միջոցով: Այս կազմակերպությունը տրամադրում է բուհերի ընդունելության վերաբերյալ տեղեկություններ, խորհրդատվություն և այլ ծառայություններ: Այն ֆինանս-

սավորվում է դիմում-հայտի հետ դիմորդներից ծառայությունների դիմաց գանձված վճարներով, համալսարաններից և քոլեջներից յուրաքանչյուր ընդունված դիմորդի համար գանձվող վճարներով, ինչպես նաև <<ՅՈՒՔԱՍ Մեդիա ՍՊԸ>> քույր ձեռնարկության եկամուտներով: Եվրամիության քաղաքացիություն ունեցող դիմորդների դիմում-հայտերը ընդունվում են յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից հունվարի 15-ը: Հունիսի 30-ը բոլոր դիմում-հայտերի ընդունելության վերջնաժամկետն է:

<<ՅՈՒՔԱՍ>>-ի կայքի միջոցով դիմորդը առցանց մուտքագրում է իր դիմում-հայտը, թեստավորումից հետո՝ իր միավորները, անձնական նախասիրությունների վերաբերյալ նամակները, ընտրում է մասնագիտություն և կցում է <<ՅՈՒՔԱՍ>>-ի ծառայության դիմաց վճարման անդորագիրը: Թույլատրվում է հայտագրել 5-ից ոչ ավելի մասնագիտություններ: Եթե դիմորդը չի ընդունվել իր նախընտրած որևէ մասնագիտության հայտով, ապա այս կայքում դիմորդը կարող է գտնել այն բուհերը, որոնք դեռևս ունեն թափուր տեղեր և դիմորդին առաջարկում են իրենց մասնագիտությունները: <<ՅՈՒՔԱՍ>>-ի տարիֆային հաշվիչը օգնում է հաշվել դիմորդի որակավորումների ընդհանուր հավաքական միավորը, որն անհրաժեշտ է տվյալ բուհ դիմելու համար: Ոչ բոլոր համալսարաններն են օգտագործում տարիֆներ, որոշ բուհեր օգտագործում են դիմորդների զուտ քննական գնահատականները: <<ՅՈՒՔԱՍ>> պորտալի տարիֆային միավորները կիրառելի են միայն 3-րդ-6-րդ մակարդակի որակավորումների համար, դրանք չեն կիրառվում 2-րդ մակարդակի միջնակարգ կրթության ընդհանուր վկայական ստանալու համար: Այսինքն՝ դեռևս միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի գնահատականներ ունենալը բավարար չէ բուհ ընդունվելու համար: Հարկավոր է շարունակել ուսումը Ա կամ մասնակի Ա մակարդակի քոլեջներում, որից հետո միայն կարելի է ընդունվել բուհ:

## Օգտագործված աղբյուրներ

1. [www.ed.gov](http://www.ed.gov)
2. [www.edweek.org/ew/section/multimedia/states-require-students-take-sat-or-act.html](http://www.edweek.org/ew/section/multimedia/states-require-students-take-sat-or-act.html)
3. [www.btec.co.uk](http://www.btec.co.uk), Ministry of Higher Education, Research and Innovation
4. <https://stateofed.thekeysupport.com/#quote>
5. <https://www.theeducationwebsite.co.uk/index.php?page=testsexams>
6. <https://www.reed.co.uk/career-advice/levels-of-education-what-do-they-mean/> Levels of Education in UK
7. <https://www.goodschoolsguide.co.uk/international/curricula-and-exams/uk-overview>
8. <https://www.gov.uk/government/organisations/standards-and-testing-agency/about>
9. <https://exampapersplus.co.uk/sats-uk/> SAT tests stage 1 and stage 2
10. [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/667372/SFR69\\_2017\\_text.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/667372/SFR69_2017_text.pdf)
11. <https://www.shoutoutuk.org/2018/07/20/the-3-biggest-problems-with-the-education-system-in-the-uk/>
12. <http://theconversation.com/englands-school-system-is-in-crisis-could-labours-national-education-service-be-the-solution-111555>
13. <http://www.satspapers.org.uk/Page.aspx?TId=3> (թեստերի բովանդակության վերաբերյալ)
14. use [www.CoolCleverKids.co.uk](http://www.CoolCleverKids.co.uk) for preparation
15. <https://www.bbc.com/bitesize/levels/z98jmp3> GSEC exams

---

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի  
առաջատար մասնագետ

## Հարավային Կորեայի կրթական համակարգը

Հարավային Կորեայի կրթական համակարգը համարվում է ամենալավնաշխարհում: Սակայն երբ խոսվում է լավագույն կրթական համակարգի մասին հարկավոր է շեշտել նաև կառավարության դերն ու մեծ աջակցությունը այդ ոլորտին: Կրթության ոլորտում շարունակական համեմատաբար բարձր ֆինանսավորումը 60 տարիների ընթացքում ստեղծել է նախադրյալներ աղքատ երկրից տնտեսապես զարգացած երկիր դառնալու համար՝ արձանագրելով արագ աճ: 2016 թվականից երկիրը ՀՆԱ-ի 5.4%-ը տրամադրում է կրթության ոլորտին: Այս ցուցանիշը 0.4 տոկոսով բարձր է ԵԱՀԿ միջին ցուցանիշից: Բնակչության գրագիտությունը 100 տոկոս է: Երեխաները 2-3 տարեկանից սովորում են կարդալ ոչ միայն կորեերեն, այլ նաև անգլերեն: Նրանք հաճախում են պետական կեսօրյա մանկապարտեզ, կան նաև մասնավոր մանկապարտեզներ 3-5 տարեկանների համար: Մանկապարտեզ հաճախում է այդ տարիքի երեխաների գրեթե 90 տոկոսը:

### **Տարրական դպրոց**

Հարավային Կորեայում երեխաները 6 տարեկանում ընդունվում են դպրոց: Պարտադիր կրթությունը 9 ամյա է՝ 6 տարի տարրական

դպրոց, 3 տարի կրտսեր միջնակարգ դպրոց: 3 տարի սովորում են բարձր միջնակարգ դպրոցում, որը կա՛մ ակադեմիական է, կա՛մ մասնագիտական, արհեստագործական: Տարրական դպրոցում կա միայն մեկ ուսուցիչ, որն աշակերտներին սովորեցնում է բոլոր առարկաները: Բոլոր ծնողները ցանկանում են իրենց երեխաներին տալ ամենալավ կրթությունը, ընդլայնել նրանց գիտելիքների ծավալը և մեծացնել հեղինակավոր բուհեր ընդունվելունրանց հնարավորությունները, ուստի երկրում կան նաև մասնավոր դպրոցներ: Սակայն ոչ բոլորը կարող են վճարել մասնավոր դպրոցներում իրենց երեխաների ուսուցման համար:

### Միջին դպրոց

12 տարեկան հասակում աշակերտներն անցնում են միջին՝ կրտսեր միջնակարգ դպրոց, առանց քննություն հանձնելու: Միջին դպրոցը, ինչպես նշվեց, եռամյա է:

### Ավագ դպրոց

Աշակերտների 80 տոկոսն ընդունվում է ավագ՝ բարձր միջնակարգ դպրոց, իսկ 20 տոկոսը՝ մասնագիտական, արհեստագործական դպրոց: Ավագ դպրոցում աշակերտները պատրաստվում են համալսարան ընդունվելուն: 1990-ական թվականներին մասնագիտական, արհեստագործական դպրոցներ հաճախում էր աշակերտների 40 տոկոսը: Եթե սովորողը չի ցանկանում ընդունվել բուհ, նա կարող է ընդունվել մասնագիտական քոլեջ: Այս փուլում աշակերտներն ուսումնասիրում են 11 առարկա, և դասերն ավարտվում են ուշ երեկոյան:

### Կրթական ծրագրեր

Հարավային Կորեայում կրթական քաղաքականությունը մշակում և իրականացնում է կրթության նախարարությունը, որը վերանայում է կրթական ծրագրերը ամեն 5-10 տարին մեկ: Վերջին անգամ

կրթական քաղաքականությունը մշակվել է 2015 թվականին կյանքի կոչվել 2020 թվականից: Նոր ծրագրում ավելացվել են 21-րդ դարում անհրաժեշտ 6 հիմնական ունակություններ, ինչպես նաև 6 հատուկ ունակություններ, որոնք բնորոշ են տվյալ առարկային: Օրինակ, ստեղծագործական մտածողությունը հիմնական ունակություն է, մինչդեռ պատմական իրողություններ վերլուծելը և մեկնաբանելը <<Պատմություն>> առարկային հատուկ ունակություն է: Դպրոցներն ունեն ծրագրի բովանդակության ավելացումներ կատարելու իրավունք: Տարրական և միջին դպրոցի ծրագրերը ներառում են նաև ստեղծագործական փորձառական ուսուցում, որը գործնական գործունեություն է՝ ակումբներին մասնակցություն, կամավորականություն և կարիերայի ուսումնասիրություն: Միջին դպրոցում շաբաթը մեկ ժամ նախատեսված է կարիերայի ուսումնասիրության համար:

Տարրական դպրոցում աշակերտներն ուսումնասիրում են <<Կորեերեն>>, <<Մաթեմատիկա>>, <<Լավ կյանք>>, <<Իմաստուն կյանք>>, <<Երջանիկ կյանք>> առարկաները: Այս առարկաների ուսուցման ժամանակ շեշտը դրվում է դպրոցական կյանքի անցման փուլերի հաղթահարման վրա՝ զարգացնելով հիմնական սովորելու, խնդիրներ լուծելու, ստեղծագործելու և խաղի միջոցով հմտություններ ձեռք բերելու երեխաների կարողությունները:

## **Հազվունգս**

Աշակերտների 80 տոկոսը հաճախում է հազվունգս (մեզ ծանոթ կրկնուսույցի ինստիտուտն է), որը գործում է դպրոցի ժամերից հետո և հանգստյան օրերին: Այսպիսի դպրոցներում դասերը կոչվում են <<թափառող դասեր>>: Կառավարությանը հազվունգսն անհանգստացնում է, քանի որ աշակերտները երկար ժամեր են անցկացնում այդ դպրոցներում, դրանք նաև ավելացնում են սոցիալական լարվածությունը, ավելի է ընդգծվում աշակերտների միջև անհավասարությունը, քանի որ ոչ բոլոր ծնողները կարող են վճարել այդ դպրոցների վարձավճարները: Որպես լուծում կառավարությունը ավելացրել է պետական դպրոցներին աջակցությունը՝ տալով աշակերտներին լրացուցիչ պարապմունքների հնարավորություն և դրանով ստեղծելով այլընտրանք: Կառավարությունը նաև սահմա-



նափակումներ է մտցրել հազվունգսներում՝ հարկեր գանձելով դրանցում դասավանդող ուսուցիչների եկամուտներից, արգելելով ուսուցանել առարկաներ, որոնք չեն դասավանդվում ավագ դպրոցներում, սահմանելով աշխատանքային (մինչև 22:00) և պարետային ժամեր:

Հարավային Կորեայում ավագ դպրոցը նույնպես եռամյա է: Միջին դպրոցն ավարտած այն աշակերտները, որոնք կամ հանձնել են ավարտական քննությունն և/կամ ունեն համապատասխան կրեդիտներ կարող են ընդունվել ավագ դպրոց: Կան չորս տիպի ավագ դպրոցներ.

- ընդհանուր ավագ դպրոց,
- հատուկ նպատակային ավագ դպրոց,
- արհեստագործական ավագ դպրոց,
- ինքնավար ավագ դպրոց:

Աշակերտների ընտրությունը կախված է ավագ դպրոցի տիպից կամ վայրից (խոշոր քաղաք կամ գյուղական դպրոց): Նրանք վճարում են ուսման վարձ կամ ընդունելության վճար, քանի որ Հարավային Կորեայում ավագ դպրոցը պարտադիր չէ:

**Ընդհանուր ավագ դպրոցը** տալիս է ընդհանուր կրթությունն տարբեր ոլորտներից: Աշակերտներն այդպիսի կրթություն ստանում են բոլոր տիպի ավագ դպրոցներում: Նրանք ընտրվում են իրենց ակադեմիական ձեռքբերումների և ընդունելության տարածաշրջանային քննության արդյունքների հիման վրա:

**Նպատակային ավագ դպրոցները** նպատակ ունեն ապահովել մասնագիտական կրթություն և/կամ մասնագիտական վերապատրաստում: Այսպիսի դպրոցները բաժանվում են մի քանի խմբերի: Բնագիտական դպրոցները զարգացնում են բնագիտական առարկաներից սովորողների գիտելիքները, օտար լեզուների ավագ դպրոցում սովորում են օտար լեզուներից առաջադիմած աշակերտներ, միջազգային ավագ դպրոցներում պատրաստում են ապագա միջազգայնագետներ, արվեստների ավագ դպրոցներում պատրաստում են արվեստագետներ, սպորտային ավագ դպրոցներում՝ մարզիկներ, իսկ արդյունաբերական կարիքներին հարմարեցված ավագ

դպրոցում սովորեցնում են արդյունաբերական ոլորտին վերաբերող ծրագրերով: Նպատակային ավագ դպրոցներ աշակերտներին ընտրում են նրանց գիտելիքները փաստող նախորդ փուլի ուսումնական արդյունքների հիման վրա, ուսուցիչների երաշխավորական նամակների, հարցազրույցի արդյունքի, կատարողական քննության արդյունքի հիման վրա:

**Մասնագիտական ավագ դպրոցները** նպատակ ունեն ստեղծագործող և ինտելեկտուալ սովորողներին գիտելիքներ տրամադրել մասնագիտական տարբեր ոլորտների վերաբերյալ: Այս ոլորտներն են՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն, ձկնորսություն, բիզնես և այլն: Աշակերտներին ընտրում են իրենց նախկին գնահատականների, հարցազրույցների, կատարողականի հիման վրա:

**Ինքնավար ավագ դպրոցները** ունեն ավելի մեծ ինքնավարության աստիճան իրենց դպրոցի կրթական ծրագիրն իրականացնելիս և դպրոցի կառավարման հաշվետվության առումով ի տարբերություն այլ ավագ դպրոցների: Դրանք ինքնավար հանրային ավագ դպրոցներն են և ինքնավար մասնավոր դպրոցները: Ինքնավար հանրային դպրոցներն աշակերտներին ընտրում են նրանց նախորդ փուլում գրանցած ակադեմիական գնահատականների քննական գնահատականների հիման վրա, իսկ ինքնավար մասնավոր ավագ դպրոցներն աշակերտներին ընտրում են նախկին գնահատականների, ուսուցիչների երաշխավորական նամակների, հարցազրույցի և աշակերտի ինքնուրույն ակադեմիական հմտությունների ցուցաբերման հիման վրա:

### **Բարձրագույն կրթություն**

Եթե աշակերտը ցանկանում է սովորել բուհում, նա պետք է քննություն հանձնի ավագ դպրոցում, ինչպես նաև մասնակցի ազգային ընդունելության քննությանը: Որոշ բուհեր ընդունվելիս պահանջվում է հանձնել ևս մեկ, լրացուցիչ ընդունելության քննություն: Հաճախ դիմորդները գրում են շարադրություն տրված թեմայի վերաբերյալ: Քոլեջում սովորելը բարձրագույն կրթության առաջին փուլն է: Կան մասնագիտական քոլեջներ, որտեղ ուսուցումը 3-4 տարի է: Ավարտելուց հետո ուսանողը կարող է աշխատել այնպիսի ոլորտներում ինչպիսիք են՝ հողերի մշակման կառավարումը, առաքումները, արվեստները:

Հաջորդ փուլը համալսարանում սովորելն է: Ուսանողները սովորում են 3-4 տարի և ստանում բակալավրի աստիճան: Բժշկական համալսարանում, մագիստրոսի աստիճան ստանալուց հետո, հանձնում են ևս մեկ քննություն:

Հարավային Կորեայում ովքեր չեն ստանում համալսարանական կրթություն կամ ովքեր չունեն համալսարանական աստիճան համարվում են երկրորդ դասի քաղաքացիներ: Նրանք կյանքում հանդիպում են դժվարությունների, ունենում են սոցիալ-տնտեսական դիրքի բարելավման, ամուսնության լավ հեռանկարի և աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու ավելի փոքր հնարավորություններ: Հարավային Կորեան համալսարաններում սովորել ցանկացող երիտասարդների թվով աշխարհում գրավում է առաջին տեղը:

Երկրի երեք հեղինակավոր համալսարանները կոչում են <<Երկինք>>: Դրանք են՝ Մեուլի ազգային համալսարանը, Կորեայի համալսարանը և Յոնսեյի համալսարանը:

Հարավային Կորեայի կրթական համակարգը գովաբանվում է տարբեր պատճառներով՝ և՛ այդ երկրում արձանագրված համեմատաբար ավելի բարձր թեստային արդյունքների, և՛ տնտեսության մեջ մեծ փոփոխություն առաջացնելու: Դրա շնորհիվ երկիրն ունի աշխարհում ամենակրթված աշխատաշուկան: Նշենք նաև, որ գործազուրկ կորեացիների 1/3-ը ունի բարձրագույն կրթություն:

Հարավային Կորեայի խիստ նախանձելի ակադեմիական ձեռքբերումները ստիպել են Մեծ Բրիտանիայի կրթության նախարարներին վերամոդելավորել իրենց երկրի կրթական ծրագրերն ու փորձել կրկնօրինակել կրթական նվաճումների հասնելու այդ երկրի ձգտումը և գերազանցության հասնելու համառությունը: Նույնիսկ ԱՄՆ նախկին նախագահ Բարակ Օբաման իր խոսքում ընդգծել է Հարավային Կորեայի հանրակրթական համակարգի առաջատար լինելը՝ նշելով, որ այդ երկրում շրջանավարտների 80 տոկոսը դպրոցն ավարտելուց հետո ցանկանում է ընդունվել բուհեր: 2017 թվականին Հարավային Կորեան գրավել է աշխարհում 5-րդ հորիզոնականը՝ 25-64 տարեկանների շրջանում ունենալով 47.7 տոկոս բարձրագույն կրթության երրորդ աստիճան ունեցողների հսկայական բանակ:

### **Բուհերի ընդունելության պահանջները**

Քննություններին մասնակցելու դիմում-հայտերն ընդունում էտվյալ համալսարանի ընդունող հանձնաժողովը: Դիմորդը կարող է այն ուղարկել անհատական նամակով կամ էլեկտրոնային փոստով: Ակադեմիական տարին Հարավային Կորեայի համալսարաններում սկսվում է մարտին, սակայն որոշ համալսարաններ ընդունելություն կազմակերպում են տարին երկու անգամ՝ մարտին և սեպտեմբերին: Դիմում-հայտի ընդունման ժամկետներն են սեպտեմբերից մինչև նոյեմբեր և մայիսից հունիս: Ուսուցումն իրականացվում է երկու կիսամյակով՝ ունենալով ամառային արձակուրդ հուլիսից օգոստոս, և ձմեռային արձակուրդ դեկտեմբերից փետրվար ամիսներին:

### **Քոլեջների ընդունելության քննությունը**

<<Քոլեջի գիտական ունակության թեստը>> (College Scholastic Ability Test - CSAT) տիպային ստանդարտացված թեստ է, որի արդյունքներն ընդունելի են Հարավային Կորեայի բուհերի կողմից: Թեստավորումն իրականացնում է Հարավային Կորեայի ծրագրերի և գնահատման ինստիտուտը ամեն տարի նոյեմբեր ամսվա երրորդ երեքշաբթի օրը: 2020 թվականին թեստավորումը հետաձգվել էր մինչև դեկտեմբերի առաջին երեքշաբթի օրը՝ պայմանավորված համավարակով:

Հարավային Կորեայում բուհերի ընդունելության քննական թեստերի կազմելու գործընթացը խիստ հսկվում է: Յուրաքանչյուր տարի ընտրվում է 500 ուսուցիչ, որոնք մեկուսացվում են հասարակությունից 1 ամիս հեռավոր մի վայրում գրում են թեստերը: Նրանցից վերցնում են հեռախոսները և կապի այլ միջոցները: Չի թույլատրվում տվյալ ժամանակահատվածում կապ հաստատել որևէ հարազատի հետ: Այդ ժամանակահատվածում, երբ մասնագետները զբաղված են թեստերի մշակմամբ, նրանց ծանոթներն ու հարազատները կարծում են, թե նրանք մեկնել են հանգստանալու:

**Քոլեջի գիտական ունակության թեստի կառուցվածքը և քննության  
ժամանակացույցը**

Թեստավորման հերթականությունը	Առարկա	Ժամը	Առաջադրանքների թիվը	Միավորներ
1	Կորեկերեն	08:40–10:00 (80 րոպե)	45	100
2	Մաթեմատիկա  (1-ին տիպի կամ 2- րդ տիպի թեստ)	10:30–12:10 (100 րոպե)	30	100
3	Անգլերեն	13:10–14:20 (70 րոպե)	45	100
4	Կորեայի պատմություն (պարսապիր է)  Լրացուցիչ առարկաներ  (սոցիալական գիտություններ, բնագիտություն, Արհեստագործական կրթություն)	14:50–16:32 (102 րոպե)		50
5	Երկրորդ օտար լեզու / դասական շինարեն	17:00–17:40 (40 րոպե)	30	50

Կախված մասնագիտության պահանջներից՝ թեստի բոլոր մասերը ընտրովի են, բացի Կորեայի պատմությունից: Թեստի այդ հատվածը պարտադիր է բոլոր դիմորդների համար: Չնայած այս պայմանին, դիմորդների մեծամասնությունը հանձնում է բոլոր բաժինները, բացի երկրորդ օտար լեզվից կամ չինարենից: <<Մաթեմատիկա 1-ին>> կամ <<Մաթեմատիկա 2-րդ>> հանձնում են նույնպես կախված բուհի տվյալ մասնագիտության պահանջներից, <<Մաթեմատիկա 1-ինը>> ավելի բարդ թեստ է քան <<Մաթեմատիկա 2-րդ>> մակարդակը: Լրացուցիչ առարկաները բաժանվում են երեք ենթախմբերի՝ սոցիալական գիտություններ, բնագիտություն և արհեստագործական կրթություն: Դիմորդները կարող են ընտրել միևնույն ենթախմբի երկու առարկա և չեն կարող ընտրել առարկաներ տարբեր ենթախմբերից: Օրինակ կարելի է հանձնել <<Ֆիզիկա 2-րդ>> և <<Կենսաբանություն 1-ին>>, բայց չի կարող հանձնել <<Համաշխարհային պատմություն>> և <<Հաշվապահության հիմունքներ>>, քանի որ դրանք տարբեր ենթախմբերից են: Նշենք, որ արհեստագործական կրթության երթախմբի քննություն կարող են հանձնել այն դիմորդները, որոնք ավարտել են արհեստագործական ավագ դպրոց:

Քննության արդյունքները հրապարակվում են մեկ ամիս անց պաշտոնական կայքում: Մակայն, հաճախ քննության հաջորդ օրը ոչ պաշտոնապես տարածվում են համալսարանների անցողիկ միավորները, և դիմորդները արդեն ունենում են մոտավոր պատկերացումներ, թե իրենք հավանաբար որ համալսարանը կընդունվեն:

Ի սկզբանե նպատակադրվելով ստուգել աշակերտների գիտելիքները բուհեր ընդունվելու համար, այժմ <<Քոլեջի գիտական ունակության թեստով>> անցկացվող թեստավորումը իմաստավորվում է որպես *ազգային ավարտական քննություն*, որի միջոցով ստուգվում է ավագ դպրոցներում և քոլեջներում սովորածի բովանդակությունը: Քննության արդյունքը, որով որոշվում է, թե ինչպիսի բուհ կընդունվի դիմորդը մեծ դեր ունի Հարավային Կորեայի կրթության ոլորտում: Այս քննությունը զովաբանվում է իր արդյունավետության, արժանահավատության և բարձր միջազգային արդյունքների համար:

Քննության օրը երկրում խանութները, բանկերը բացվում են սովորականից ուշ, քաղաքային տրանսպորտը ավելի հաճախակի է աշխատում, որպեսզի չստեղծվեն կուտակումներ, և դրանք չխանգարեն դիմորդներին հասնելու քննական կենտրոններ: Շինարարական աշխատանքներն այնպես են կազմակերպվում, որ աղմուկը չխանգարի դիմորդներին քննություն հանձնելիս: Երբեմն ուստիկանությունն ուղեկցում է քննությունից ուշացող դիմորդներին:

Ամփոփելով՝ նշենք, որ Հարավային Կորեայի դիմորդների մոտ 70 տոկոսը ընդունվում է բուհեր, նրանցից միայն 2 տոկոսն է ընդունվում երկրի լավագույն երեք համալսարանները:

### Օգտագործված աղբյուրներ

1. Քոլեջների ընդունելության թեստավորում  
[https://en.wikipedia.org/wiki/College\\_Scholastic\\_Ability\\_Test](https://en.wikipedia.org/wiki/College_Scholastic_Ability_Test)
2. Կրթությունը Հարավային Կորեայում  
[https://en.wikipedia.org/wiki/Education\\_in\\_South\\_Korea](https://en.wikipedia.org/wiki/Education_in_South_Korea)
3. Ուսուցումը Կորեայում  
[Study in Korea | South Korean higher education system \(unipage.net\)](#)
4. [The exam that defines your life in South Korea: Suneung - YouTube](#)
5. [Suneung: The day silence falls over South Korea - BBC News](#)

---

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

## Ճապոնիայի կրթական համակարգը

### **2020 թ. դպրոցական կրթության բարեփոխումը Ճապոնիայում. հիմնական գաղափարները և ուղղությունները**

Ճապոնիայում դպրոցական կրթությունը եռաստիճան է՝ տարրական (վեցամյա ուսումնառություն), կրտսեր միջնակարգ (եռամյա ուսումնառություն) և ավագ միջնակարգ (եռամյա ուսումնառություն):

Ուսումնական տարին սկսվում է ապրիլի սկզբին և բաղկացած է 3 մասից, որոնցից առաջինը տևում է մինչև հուլիսի 20-ը: Դրան հաջորդում է ամառային արձակուրդը: Սեպտեմբերի 1-ից ուսումնական տարին շարունակվում է մինչև դեկտեմբերի 26-ը, ապա մինչև հունվարի 7-ն այն ընդմիջվում է ձմեռային արձակուրդով: Մարտի 25-ից սկսվում է զարնանային արձակուրդը, որի ընթացքում տեղի է ունենում հաջորդ դասարան փոխադրվելու գործընթացը:

Կրտսեր և ավագ միջնակարգ դպրոցների աշակերտները թեստային քննություններ են հանձնում յուրաքանչյուր պայմանական եռամսյակի վերջում (բոլոր առարկաներից) և առաջին ու երկրորդ եռամսյակների կեսերին (Ճապոներենից, մաթեմատիկայից, անգլերենից, բնագիտությունից և հասարակագիտությունից):

Ավագ եռամյա կրթությունը Ճապոնիայում պարտադիր չէ, սակայն կրտսեր միջնակարգ դպրոցն ավարտածների ավելի քան 95 տոկոսն ընդունվում է ավագ դպրոց, քանի որ դրանով նրանք բուհերի ընդունելության քննություն հանձնելու իրավունք են ստանում: Բուհերում, հատկապես պետական, մեկ տեղի համար դիմողների թիվը մեծ է լինում:



Ավագ դպրոց ընդունվելու համար հաշվի են առնվում դպրոցական քննությունների արդյունքները: Առաջադիմությունից կախված՝ աշակերտներին ուղարկվում է այն ավագ դպրոցների ցանկը, որտեղ նրանք կարող են ընդունվել: Այնուհետև աշակերտը փոխադրական քննություն է հանձնում, որի արդյունքից և կրտսեր միջնակարգ կրթության առաջադիմությունից կախված՝ որոշվում է, թե որ ավագ դպրոցում պետք է նա սովորի:

Բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները, անկախ իրենց ընտրած մասնագիտությունից, պարտադիր հանձնում են քննություն, որը նախկինում կենտրոնացված էր, իսկ 2021 թվականից աստիճանաբար անցում է կատարվելու **միավորյալ** քննության:

Միավորյալ քննություն հանձնելու համար դիմորդները կարող են ուսումնական առարկաներին համապատասխանող 5 հիմնական կատեգորիաներից (մաթեմատիկա՝ ընդհանուր կամ խորացված, ճապոներեն, օտար լեզուներ, բնագիտական առարկաներ և հումանիտար առարկաներ) կատարել ընտրություն: Քննությունը նշանակվում է տվյալ տարվա հունվարի կեսերին՝ շաբաթ և կիրակի օրերին: Բոլոր դիմորդներն ամբողջ երկրում քննություն են հանձնում միաժամանակ:

Մինչև 2020 թվականը բոլոր առարկաների թեստերը կազմվել են միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներից: Տասնամյակների ընթացքում անփոփոխ մնացած և թեստավորման միջոցով գիտելիքների գնահատման այսպիսի մոտեցումը խանգարել է սովորողների դատողության, տրամաբանական և վերացական մտածողության ունակությունների զարգացմանը:

Ճապոնիայի կրթական համակարգի **բարեփոխման** անհրաժեշտություն է առաջացել հիմնականում երեք պատճառով:

1. Բուհ ընդունվելը տարեց-տարի արժեզրկվել է դյուրինացված քննական թեստերի պատճառով:
2. Կրթության համակարգի թերություններով պայմանավորված՝ երիտասարդ ճապոնացիներն անմրցունակ են դարձել ճապոնական ընկերություններում աշխատանքի ընդունվող անգլախոս աշխատակիցների համեմատությամբ, որոնք կազմում են աշխատողների 1/3-ը: Մրցունակությունը երկրում և միջազգային ասպարեզում բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է դարձել դպրոցներում օտար լեզուների

ուսուցման բարեփոխումը և այդ լեզուներով աշակերտների հաղորդակցական հմտությունների զարգացումը:

3. Աշխատաշուկայում ռոբոտների և արհեստական բանականության ներդրումը նվազեցնում է կադրերի պահանջարկը: Անհրաժեշտ է դառնում նոր տիպի մարդկային ռեսուրսներ կրթելը, որոնք կկարողանան ցանկացած իրավիճակում ինքնուրույն հայտնաբերել խնդիրներն ու ամենաարդյունավետ կերպով կիրականացնեն ծրագրերը:  
Ելնելով թվարկված գործոններից՝ դպրոցական կրթությունը պետք է բարեփոխվի երեք հիմնական ուղղությամբ.
  - օտար լեզուների ուսուցման բարեփոխում,
  - ուսումնական ծրագրերի և ընդունելության քննությունների բարեփոխում,
  - կրթության թվայնացում («մեկ աշակերտին՝ մեկ պլանշետ» մոդելի ներդրում):

### **1. Օտար լեզուների ուսուցման բարեփոխումը**

Այս ուղղությունը կարևորում է անգլերենով հաղորդակցման հմտությունների զարգացումը և տրամաբանելու կարողությունը: 2021 թվականից սկսած անգլերենի դասավանդումը 5-րդ դասարանից կտեղափոխվի 3-րդ դասարան: Ավագ դպրոցներում կարևորվելու է մտքերը անգլերեն շարադրելը՝ դասերի ընթացքում ներառելով քննարկումներ, բանավեճեր, էլույթներ և շնորհանդեսներ: Ավագ դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա հաղորդակցվել ինչպես կենցաղային, այնպես էլ գործնական մակարդակներում:

### **2. Ուսումնական ծրագրերի և ընդունելության քննությունների բարեփոխումը**

Սովորողների ճանաչողական և կիրառական հմտությունների հայեցակարգի ընդունումը դպրոցներում հիմնովին կփոխի ուսուցման մեթոդները, որոնք ուղղված կլինեն ուսումնական նյութն ինքնուրույն և արդյունավետ յուրացնելուն («ակտիվ ուսուցում»), ինչպես նաև ծրագրավորման միջառարկայական ուսումնասիրության միջոցով «ծրագրային» մտածողության հմտության զարգացմանը:

Ընդունելության կենտրոնացված քննությունը փոխարինվել է միավորյալ քննությամբ, որի բովանդակությունը պետք է համապա-

տասխանի սովորողների իրավասությունների նոր հայեցակարգին և անգլերենի տիրապետման նոր պահանջներին:

Եթե նախկինում գնահատման հիմնական չափանիշ էին հանդիսանում գիտելիքները, ապա այսուհետև մեծ ուշադրություն է դարձվելու նաև զարգացած տրամաբանական և քննադատական մտածողությանը և մտքերը շարադրելու կարողությանը: Ըստ այդմ, նոր տիպի քննության պահանջներից մեկը տրամադրված տեղեկատվության հիման վրա սեփական փաստարկների գրավոր շարադրանքն է: 2021 թվականին քննության այս ձևը կիրառվելու է «Ճապոներեն» և «Մաթեմատիկա» առարկաների համար:

### 3. Կրթության թվայնացումը

Կրթության թվայնացման համար էլեկտրոնային դասագրքերի հետ սկզբում կօգտագործվեն նաև դրանց թղթային տարբերակները:

### Ընդունելության քննությունները

Ընդունելության միավորյալ քննության բովանդակությունն այսուհետև պետք է համապատասխանեցվի շրջանավարտի իրավասությունների նոր հայեցակարգին և անգլերենի տիրապետման նոր պահանջներին: Միավորյալ թեստով ստուգվելու է բուհ ղիմողների՝ ավագ դպրոցում ստացած բազային գիտելիքների մակարդակը:

Բոլոր ղիմորդների համար պարտադիր համարվող միավորյալ քննությունը, ինչպես նախկինում կենտրոնացվածն էր, կազմակերպվելու և անցկացնելու է Ընդունելության քննությունների ազգային կենտրոնը (ԸՔԱԿ):

Ճապոներենի քննության ժամանակ լեզվի բարդության չորս մակարդակներին համապատասխան ստուգվելու է հիերոգլիֆների, քերականության և բառապաշարի իմացությունը, կատարվելու է նաև ունկնդրում: Առաջին մակարդակը հաղթահարելու համար անհրաժեշտ է իմանալ 2000 հիերոգլիֆ, երկրորդի համար՝ 1000, և այդպես՝ նվազման կարգով: Եթե ղիմորդին հաջողվի հաղթահարել լեզվի բարդության առաջին մակարդակը, ապա նա կարող է ընդունվել ցանկացած բուհ: Ոմանց համար բավարար կլինի երկրորդ կամ նույնիսկ երրորդ մակարդակը:

Առաջին մակարդակի մաթեմատիկայի քննության տևողությունը 60 րոպեից դառնալու է 70 րոպե, իսկ երկրորդ մակարդակի քննությունը կտևի 60 րոպե:

«Անգլերեն» առարկայի քննությունը կբարդացվի՝ բովանդակությունը համապատասխանեցնելով հաղորդակցական կարողություններին: Եթե նախկինում ստուգվում էր «Ընթերցանությունը» և «Ունկնդրումը», ապա 2021 թվականից սկսած՝ ավելանալու են «Գրավորը» և «Խոսքը»:

«Անգլերեն (գրավոր)» քննությունը վերանվանվել է «Անգլերեն (ընթերցանություն)»: Չեն լինելու արտասանությանը, առոգանությանը, շարադասությանը վերաբերող հարցեր, տրվելու են ընթերցանության բովանդակությանն առնչվող հարցեր: «Ընթերցանության» քննության տևողությունը նախատեսվել է 80 րոպե, առավելագույն միավորը՝ 100, «Ունկնդրմանը»՝ 60 րոպե (որից պատասխանը՝ 30 րոպե) և 100 միավոր: Մյուս օտար լեզուների քննության տևողությունը նախատեսվել է 80 րոպե, առավելագույն միավորը՝ 200:

Բնագիտության թեստերում չեն լինելու ընտրովի պատասխանով առաջադրանքներ: Բնագիտական մեկ առարկա ընտրելու դեպքում քննության տևողությունը լինելու է 60 րոպե, առավելագույն միավորը՝ 100, երկու առարկայի դեպքում, համապատասխանաբար, 130 րոպե (60-ական րոպե՝ յուրաքանչյուր առարկայի, 10 րոպե՝ պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար) և 200 միավոր:

## 2021 թ. ըննդունելության միավորյալ քննության առարկայական ցանկը

### ① Քննական առաջին օր

#### 1. Աշխարհագրություն, պատմություն և հասարակագիտություն

Դիմորդները կարող են ընտրել մեկ կամ երկու առարկա: Որոշ համալսարաններ չեն թույլատրում երկու առարկայի ընտրության դեպքում հանձնել միևնույն առարկայի տարբեր մակարդակների թեստեր: Նախատեսված առավելագույն միավորը 100 է, ժամանակը յուրաքանչյուր առարկայի համար՝ 60 րոպե: Երկու առարկա հանձնողների քննությունը կանցկացվի ժամը 9:30-11:30, մեկ առարկա հանձնողներինը՝ 10:40-11:40:

Առարկաների ցանկը

- Համաշխարհային պատմություն Ա
- Համաշխարհային պատմություն Բ

- Ճապոնիայի պատմություն Ա
- Ճապոնիայի պատմություն Բ
- Աշխարհագրություն Ա
- Աշխարհագրություն Բ
- Արդի հասարակություն, էթիկա
- Քաղաքականություն (քաղաքականություն, տնտեսագիտություն, էթիկա)
- Տնտեսագիտություն

Եթե դիմորդն ընտրել է երկու առարկա, դրանց թեստ-գրքույկները և պատասխանների ձևաթուղթը փաթեթով տրվում են դիմորդին:

## 2. Ճապոներեն գրականություն

Նախատեսված առավելագույն միավորը 200 է, տևողությունը՝ 80 րոպե (13:00-14:20):

## 3. Օտար լեզուներ (գրավոր)

Նախատեսված առավելագույն միավորը 200 է, տևողությունը՝ 80 րոպե (17:10-16:30):

Առարկաների ցանկը

- Անգլերեն
- Գերմաներեն
- Ֆրանսերեն
- Չինարեն
- Կորեերեն

## 4. Օտար լեզուներ (անգլերեն «ունկնդրում»)

Նախատեսված առավելագույն միավորը 50 է, տևողությունը՝ 60 րոպե (գործընթացի և սարքավորումների բացատրությունը՝ 30 րոպե, քննության բուն ընթացքը՝ 30 րոպե): Քննության սկիզբը՝ 17:10, ավարտը՝ 18:10:

## © Քննական երկրորդ օր

«Բնագիտություն 1»-ից և «Բնագիտություն 2»-ից դիմորդները կարող են ընտրել առաջարկվող հետևյալ չորս տիպերից և հայտագրվել.

- ա) երկու թեստ «Բնագիտություն 1»-ից,
- բ) մեկ թեստ «Բնագիտություն 2»-ից,
- գ) երկու թեստ «Բնագիտություն 1»-ից և մեկ թեստ «Բնագիտություն 2»-ից,
- դ) երկու թեստ «Բնագիտություն 2»-ից:

Հումանիտար մասնագիտությունների մեծ մասի համար պահանջվում է «ա» տիպի ընտրություն, իսկ բնագիտական մասնագիտությունների համար՝ «դ» տիպի:

### 1. Բնագիտություն 1

Դիմորդները պետք է ընտրեն երկու թեստ: Բնագիտական երկու առարկայի ընտրության դեպքում թույլատրվում է հանձնել համանուն թեստեր: Առավելագույն միավորը 100 է, ստորությունը՝ 60 րոպե (9:30-10:30):

Առարկաների ցանկը

- Ֆիզիկայի հիմունքներ
- Քիմիայի հիմունքներ
- Կենսաբանության հիմունքներ
- Երկրագիտության հիմունքներ

### 2. Մաթեմատիկա 1

Տևողությունը՝ 70 րոպե (11:20-12:30):

Առարկաների ցանկը

- Մաթեմատիկա I
- Մաթեմատիկա I և Մաթեմատիկա Ա

Դիմորդները կարող են պատասխանել Ա մակարդակի մաթեմատիկայի երկու հարցի (կոմբինատորիկա, հավանականությունների տեսություն, ամբողջ թվեր):

### 3. Մաթեմատիկա 2

Տևողությունը՝ 60 րոպե (13:50-14:50):

Առարկաների ցանկը

- Մաթեմատիկա II
- Մաթեմատիկա II և Մաթեմատիկա Բ

Դիմորդները կարող են պատասխանել Բ մակարդակի Մաթեմատիկայի երկու հարցի (հաջորդականություններ, վեկտորներ, հավանականությունների բաշխում, հաշվապահություն և հաշվապահական հաշվառում, ինֆորմատիկայի հիմունքներ):

#### 4. Բնօրինություն 2

Դիմորդները կարող են ընտրել մեկ կամ երկու թեստ: Տևողությունը երկու առարկա ընտրելու դեպքում 130 րոպե է (15:40-17:50), մեկ առարկայի դեպքում՝ 60 րոպե (16:50-17:50):

Առարկաների ցանկը

- Ֆիզիկա
- Քիմիա
- Կենսաբանություն
- Երկրագիտություն

Երկու առարկա հանձնողների քննությունը կտևի ժամը 9:30-11:30, մեկ առարկա հանձնողներինը՝ 10:40-11:40:

#### Ընդունելության քննությունների ազգային կենտրոնի (ԸՔԱԿ) գործառույթները

Ընդունելության քննությունների ազգային կենտրոնը կազմում, տպագրում և դիմորդներին է առաքում քննությունների ուղեցույցը, ընդունում է դիմում-հայտերը, որոշում է քննական կենտրոնները, նշանակում է կենտրոնների ղեկավարներին, բաշխում է թեստերը, անցկացնում է քննությունները, կատարում է գնահատում, ծանուցում է քննության արդյունքների մասին: Տվյալ տարում դպրոցն ավարտողները հայտագրվում են դպրոցում, նախորդ տարիներին ավարտածները՝ ԸՔԱԿ-ում:

2021 թվականի ընդունելության քննությունների նոր՝ միավորյալ տիպի հայտագրումը Ընդունելության քննությունների ազգային կենտրոնը սկսել է 2020 թ. սեպտեմբերի 28-ին և ավարտել հոկտեմբերի 8-ին: Մեկ կամ երկու առարկայից քննություն հայտագրելու համար վճարվում է 12000 իեն (համարժեք է մոտ 6000 ՀՀ դրամին),

3 կամ ավելիի դեպքում՝ 18000 իեն (մոտ 9000 դրամ): Գնահատականի վերաբերյալ ծանուցում ստանալու համար դիմորդը դիմումահայտը լրացնելիս ցանկության դեպքում կարող է վճարել ևս 800 իեն (մոտ 400 դրամ):

Մինչև դեկտեմբերի 15-ը քննական անցաթղթերը դպրոցում հայտագրվածների համար ուղարկվել են իրենց դպրոցներ, իսկ մնացած բոլոր դիմորդներինը՝ ֆիզիկական անձանց: Քննությունները նշանակվել են 2021 թ. հունվարի 17-ին և 18-ին: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ ավարտական դասարանների սովորողներին հնարավորություն է տրվել քննությունները հանձնել նաև հունվարի 30-ին և 31-ին: Նշված օրերին մեկուսացման մեջ գտնվածների համար քննությունները նշանակվել են փետրվարի 13-ին և 14-ին:

Քննությունների ուղեցույցը էլեկտրոնային և թղթային տարբերակներով տրամադրվել է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած:

Թղթային տարբերակով այն հնարավոր է ստանալ փոստային առաքմամբ, որի ծախսը վճարում է պատվիրատուն՝ դիմելով Դպրոցի բովանդակային կառավարման ազգային ծառայություն:

Քննության ժամանակ դիմորդին թույլատրվում է քննասենյակ տանել սև մատիտ, ռետին, սրիչ, պարզագույն ժամացույց, հաշվիչ, ակնոց, թաշկինակ, աչքի կաթիլներ:

Նախորդ տարիների նման ԸՔԱԿ-ը քննական առաջադրանքները և ճիշտ պատասխանները հրապարակում է յուրաքանչյուր քննության ավարտից անմիջապես հետո: Արդյունքներն ուղարկվում են բուհերի ընդունող հանձնաժողովներին: Բուհերի մի մասն ընդունելության համար պահանջում է միայն ԸՔԱԿ-ի քննական արդյունքները, մի մասն էլ նշանակում են ներբուհական քննություններ (թեստ, շարադրություն կամ հարցազրույց):

Բարձրագույն կրթությունը ճապոնիայում երկաստիճան է և վճարովի է: Ուսանողների միայն 0.003 տոկոսին է հաջողվում սովորել անվճար: Պետական բուհերում ուսման վարձը մատչելի է, սակայն ընդունվելը շատ դժվար է: Բուհերի 80 տոկոսը մասնավոր է: Բակալավրիատը տևում է չորս տարի, մագիստրատուրան՝ երկու: Լավագույն բուհերը Տոկիոյի և Կիոտոյի համալսարաններն են:



---

<<Հանրակրթություն. գնահատում և  
թեստավորում>>  
տեղեկատվական - վերլուծական  
հանդեսում հոդվածներ  
տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրապարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրությունն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրապարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

---

# Բովանդակություն

## **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2020 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վիճակագրական վերլուծություն ..... 4

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա դասավանդող ուսուցիչների հարցման արդյունքների վերլուծություն.

2019-2020 ուստարի..... 61

2019 թ. հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն ..... 114

## **ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Ծայրահեղ օրինակների մեթոդը ..... 142

### **ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

#### **Գ. ՉԱԼՈՒՄՅԱՆ**

Անգլիայի կրթական համակարգը ..... 150

#### **Գ. ՉԱԼՈՒՄՅԱՆ**

Հարավային Կորեայի կրթության համակարգը ..... 158

#### **Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

Ճապոնիայի կրթական համակարգը ..... 168

Տպագրված է Գ-նահատման և թեստավորման կենտրոնում:  
Տպաքանակը՝ 1300 օրինակ, 180 էջ:  
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37  
[www.atc.am](http://www.atc.am)